ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

4

ԵՐԵՎԱՆ

1986

016:491.99

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆ

Մատենագիտություն

Մեջբերումներ,
ակադեմիկոս
Գևորգ Ջանջուղազյանի:
Հարցաթերթերով՝ Հ. Եղիազարյան

20 հունվարի 1987թ.

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Անոտացված մատենագիտություն /

Ֆաս հուշ
2616

ԵՐԵՎԱՆ 1986

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՏՈՒԿ ԳՐԱԴԱՐԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЦЕНТР НАУЧНОЙ ИНФОРМАЦИИ ПО ОБЩЕСТВЕННЫМ НАУКАМ

Научно-информационный бюллетень
Библиография

АРМЯНСКАЯ ЛЕКСИКОГРАФИЯ
(Аннотированная библиография)

ЕРЕВАН 1986

ԿԱԶՄՈՂ ԵՎ ԱՌԱՋԱԲԱՆԻ ՀԵՂԻՆԱԿ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏ.ԹԵԿՆԱԾՈՒ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Վ.Խ.

ԳԱՏ.ԽՄԲԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏ.ԹԵԿՆԱԾՈՒ
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Վ.

Խմբագրական կոլեգիա

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Գ.Բ./ գլխ.խմբագիր/,
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Լ.Լ., ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Ա.

СОСТАВИТЕЛЬ И АВТОР ПРЕДИСЛОВИЯ
кандидат филологических наук АЛЕКСАНЯН В.Х.

Редакционная коллегия:

ГАРИБДЖАНЯН Г.Б. / гл. редактор/
КАРАПЕТЯН Л.Л.,САРКИСЯН С.А.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ բառարանագրությունը խոր հնություն ունի: Հայերեն ձեռագիր բառարաններ են ստեղծվել գրեթե հայ մատենագրության սկզբնավորման հետ՝ գերազանցապես բառացանկերի ձևով: Հայտնի են, օրինակ ,,Մեկնություն յեբրայեցւոց լեզուէ ի հայ,, , ,, Բառք քերթողականք,, ,,,Բառք Գաղիանոսի բժշկապետի,, , ,, Թարգմանութիւն դեղոց,, , ,,Համառօտ գումարումն և լուծումն բառից Աստվածաշունչ գրոց՝ յումեմնէ Օրեմիայէ Մեղրեցւոյ,, և այլ ձեռագիր բառարաններ, որոնց ստեղծման և տարածման գործում մեծ դեր են խաղացել հունաբան դպրոցի ներկայացուցիչները: Նրանց կազմած բառացանկերից հայտնի են, օրինակ, ,, Սահմանք փիլիսոփայականք,, , ,, Սահմանք բանականի մասին,, և այլն՝ ընդօրինակված հունարենից: Բառարան տերմին-անվանումը հանդիպում է ավելի ուշ՝ 19-րդ դարից սկսած; իսկ մինչ այդ բառացանկերը կամ բառախմբերը վերնագրված էին ,, Բառք,, կամ ,, Բառից,,՝ ըստ անվան կամ պատկանելության, ինչպես, օրինակ՝ ,, Լուծումն բառից,, , ,,Գումարումն բառից,, , ,, Մեկնություն բառից,, կամ ,, Բառք գովասանք,, և այլն: Հետագայում ընդլայնվում է դրանց՝ այդ բառացանկերի թե՛ բնույթը և թե՛ բառաքանակը: Բառարանագրությունն աստիճանաբար դառնում է ինքնուրույն գիտաճյուղ՝ ընդգրկելով նոր բնագավառներ: Ստեղծվում են այլաբնույթ բառարաններ՝ բացատրական, ուղղագրական, ստուգաբանական, մասնագիտական/լեզվաբանական, իրավաբանական, երկրաբանական, ռազմական և այլն/: Հետազա շրջանի բառարանագրական հուշարձանների հետ համեմատած, մինչմիջնադարյան բառացանկերն ու բառախմբերը միակողմանի էին և լայն մասսայականություն չէին վայելում: Ինչ վերաբերում է միջնադարյան հայ բառարանագրական հուշարձաններին, ապա դրանց բնորոշ էին հետևյալ հատկանիշները.

1. Ի տարբերություն հին շրջանի, միջնադարյան բառացանկերը համակարգված են այբբենական կարգով.

2. Ընդհանուր բնույթի բառարաններից զատ միջին դարերում ստեղծվում են մասնագիտական, բացատրական, ուղղագրական և թարգմանական բառարաններ.

3. Ստեղծվում են նաև գրուցարաններ և ուղղագրական բնույթի բառացանկեր՝ բառաքնչեր անվանումներով.

4. Լայն կիրառություն են ստանում տարբեր բնագավառների վերաբեր-

յալ մասնագիտական բառարանները և գիտական բառախմբերը:

5. Քարոզներ են արվում լեզվի ամբողջ բառապաշարն ընդգրկելու, միաժամանակ գիտական բառարաններ ստեղծելու նպատակով.

6. Բառարանագրության ուղղությամբ տարվող աշխատանքները դրվում են գրական հիմքերի վրա և ձեռք են բերում կարևոր նշանակություն: Այսուհանդերձ, միջնադարյան հայ ձեռագիր բառարաններն իրենց հերթին ևս շատ բան ունեն զիջում են 18-19-րդ դարերում ստեղծված բառարաններին, որոնցից շատերը ցայսօր մնում են անգերազանցելի, ինչպես, օրինակ՝ ,, Նոր բառգիրք Հայկազյան լեզվի,, , ,, Առձեռն բառարանը,, Աստվածաշնչի համաբարբառները և այլն: 18-19-րդ դարերում ստեղծված բառարաններն էլ իրենց հերթին, հատկապես բառանյութի ընդգրկման և մասնագիտական տերմինաբանության առումով, զիջում են սովետական շրջանում ստեղծված բառարաններին: Համոզվելու համար հարկ ենք համարում բերել հետևյալ համեմատությունը՝ ցուցադրելով հանուր և հանր արմատով կազմված բառերի քանակը մի քանի հին և նոր բառարաններում.

1. Նոր բառգիրք հայկազյան լեզվի - 11.
2. Առձեռն բառարան - 11.
3. Ս.Գաբամաճյան, Նոր բառգիրք հայերեն լեզվի - 14.
4. Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան - 80.
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան- 90.

Բերված տվյալները վկայում են, որ ժամանակակից գրական հայերենն օրեցօր հարստանում ու ճոխանում է:

Խոսելով հայ բառարանագրության մասին, անկարելի է անտեսել նրա աշխարհագրությունը: Աշխարհով մեկ, գրեթե բոլոր մեծ ու փոքր գաղթօջախներում ստեղծվել են հայերեն և հայերենի հետ առնչվող ամենատարբեր շնության հարյուրավոր բառարաններ: Արդ. հայը, որտեղ էլ խրիսխ է ձգել, իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ արագորեն տիրապետել է մեկ կամ քանի օտար լեզվի՝ ստեղծելով այդ լեզվի և հայերենի համադրական բերականություն, բացատրական կամ թարգմանական բառարան, ուսումնական ձեռնարկ և այլ բնության գործեր: Հարկ է նաև նշել, որ հայերենի նկատմամբ, հատկապես բառարանագրական առումով, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել օտարները/ տես А.В.Старчевский, Стоязычный словарь,СПб,1887, П.С.Паллас, Сравнительный словарь всех языков и наречий, Спб, 1787, Горяев, Сравнительный этимологический словарь русского языка, Тифлис, 1896 և այլն/,որոնցում ևս զգալի տեղ է հատկացված հայերենին: Այս և ուրիշ այլ բառարաններ նույնպես տեղ են գտել մատենագիտական ցանկում:

Հարկ ենք համարում նշել, որ սույն մատենագիտությունը կազմելիս առաջին հերթին նկատի ենք ունեցել ամբողջական քառարանագրական գործը: Առանձին գրողների երկերին կամ առանձին աշխատություններին, ուսումնական ձեռնարկներին կից ներկայացված քառացանկերը, չնչին բացառությամբ, չենք մտցրել սույն մատենագիտության մեջ:

Մատենագրված քառարանների մոտ 90 տոկոսը անցել են մեր ձեռքով. դրանք ուսումնասիրվել ենբազմակողմանիորեն, իսկ չնչին մասը, որ հնարավոր չի եղել ձեռք բերել, նկարագրել ենք այլ աղբյուրներից/,, Հանդես ամսօրյա,, , ,, Բազմավեպ,, , ,, Մուրճ,, հանդեսներ, Հ.Անտոյանի առանձին հոդվածներ, Գ.Գասպարյան, Հայ քառարանագրության քննություն և այլն/ քաղված փաստերի ու տեղեկությունների հիման վրա: Բավականաչափ դժվարություններ ենք հաղթահարել ամբողջովին ընդգրկելու վերջին 3-4 տասնամյակների ընթացքում ինչպես մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում, այնպես էլ հատկապես Սփյուռքում հրատարակված քառարանները, քանի որ դրանց վերաբերյալ մեկ ընդհանուր մատենագիտական ցանկ կամ ցուցակ երբեք չի կազմվել: Ոչ պակաս դժվարությունների ենք հանդիպել հատկապես Ռ.Գատկանյանի, Մ.Մսերյանցի, Կ.Կոստանյանի և այլոց անտիպ քառարանների ձեռագրերի հայտնաբերման գործում: Հանդիպել ենք նաև բազմաթիվ այլ դժվարությունների, որոնց մասին հարկ չենք համարում մեկ առ մեկ խոսել: Դրանցից առանձնապես հարկ ենք համարում նշել հեղինակների /շատերի նաև տառերով արտահայտված/ անունների բացումը: Հենց այդ հանգամանքով պայմանավորված, մի քանի քառարանագիրների անունները, հայտնի չլինելու պատճառով, հնարավոր չի եղել բացել: Նույնը կարելի է ասել այն քառարանների մասին, որոնց միայն միկրոժապավենները կան՝ այն է: բրբրված կամ առանց տիտղոսաթերթի ու համապատասխան տեղեկությունների:

Հայ քառարանագրության սույն մատենագիտությունը կազմելիս, երբեմն ենք խորհել քառարանների ներկայացման կարգի և ձևավորման շուրջը: Իհարկե, դրանք կարելի էր ներկայացնել ըստ իրենց բնույթի /բացատրական, ստուգաբանական, թարգմանական, մասնագիտական, ոճաբանական-դարձվածաբանական, գավառական-բարբառային կամ ուղղագրական-դպրոցական և այլն/ կամ էլ ըստ թարգմանական-համադրական բնույթի / միալեզվյա, երկլեզվյա կամ բազալեզվյա, ասենք՝ հայերեն-ֆրանսերեն, հայերեն-բալերեն, հայերեն-արաբերեն կամ ռուսերեն-հայերեն-ֆրանսերեն և այլն է ընդհակառակը/, կամ էլ պարզապես բոլորը միասին՝ այբբենական կարգով, որը և նախընտրել ենք՝ որպես առավել ճիշտ սկզբունք, պարզապես զանազան բնույթի խառնաշփոթություններից խուսափելու համար: Բավականաչափ դժվարություններ են առաջացել քառարանների համադրության /անդրադարձման/ սկզբունքի և մատենագիտության ձևավորման տեսակետից:

Հարիսիան ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հայոց լեզվի ինստիտուտի գրականագիտության բաժնի գրականագիտական ինստիտուտ /Երևան 20 տար / Միավորման դասախոսը ի հորմանդն վկիս դարձ
ՄՄ։

ԱԲԵՂՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱԳՐՔՈՒՅԿ: - Թեհրան: 1962.- 189 էջ:

Բառագրքույկը պարունակում է ուղղագրական տեսակետից որոշակի դժվարություն ներկայացնող մոտ 10 հազար բառ և ուղղագրական մի շարք կանոններ: Որոշ բառերի վերաբերյալ տրվում են ստուգաբանական և բառակազմական բացատրություններ:

Բառագրքույկի վերջում նաև տրված են ,,Ուղղագրական համառոտ կանոններ,, և տեղեկություններ հայերենի կետադրության վերաբերյալ:

ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1925.-724 էջ:

Հայ բառարանագրության ուշագրավ երևույթներից է, Մ.Աբեղյանի բառարանագրական վաստակի պսակը,որը հատկապես աչքի է ընկնում նորակերտ բառերի առատությամբ:

Բառարանը պարունակում է 17 հազար բառ և կապակցություն, որոնք բոլորն էլ բացատրված են ընդարձակ ու բազմակողմանի մեկնաբանություններով:

ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ,ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ,ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՆՇՈՏ/ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ/. ԼԱՏԻՆ-ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: -Եր.:1951.-171 էջ:

Բուն լատիներեն, ռուսերեն և հայերեն բժշկական տերմիններից բացի բառարան են մտցված նաև լատիներեն արտահայտություններ, առած-ասացվածքներ, դարձվածներ,որոնք օգտագործվում են բժշկության մեջ կամ ունեն բժշկական տերմինի նշանակություն: Բառարանը պարունակում է 20 հազար բառահոդված:

ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ,ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ,/ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ/, ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ՆՇՈՏ.ԼԱՏԻՆ-ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1937.- 164 էջ:

Սա ապակետիպ բառարան է՝ հրատարակված ձեռագրի իրավունքով: Լույս է տեսել միայն առաջին պրակը /A-C տառերը/:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ԲԱՌԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1885.- 118 էջ:

Թերատիպ բառարան է. պարունակում է տաճկերենից-հայերեն մոտ 4 հազար բառ / մինչև էնալ բառահոդվածը/: Իր նշանակությամբ և արժանիքներով զիջում է հեղինակի մնացած բառարաններին:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ.ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԳՐՔՈՒՅԿ:- Կ.Պոլիս: 1951.- 84 էջ:

Այս բառարանը, որ գիտա-ուսումնական բնույթ ունի, նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվել ցանկացող հայ երիտասարդների համար: Գլխաբառերը տրված են

Ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով: Բառարանն ընդգրկում է գիտության տարբեր ճյուղերի վերաբերող 16 բաժիններ, որոնց բոլորի պարունակությունը 10 հազար բառահոդված է:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ: - Կ.Պոլիս: 1898.- 350 էջ:

Պարունակում է ավելի քան 18 հազար ,, գրագիտական, պաշտոնական, ընտանեկան և գիտական բառ, հատուկ անուն և հազարն ավելի ոճ և մասնավոր ասացվածք,,: Բոլոր գլխաբառերի դիմաց նշված է դրանց տաճկատառ օսմաներեն, այնուհետև հայատառ համարժեքը, ինչպես նաև խոսքի մասային պատկանելությունը:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ԵՐԵՔԼԵՋՎՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ԳԱԼՂԻԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1888.- ԺԲ 4+1140 էջ:

Լույս է տեսել 1666-1889 թվականների ընթացքում առանձին պրակներով, որոնք, այսպես կոչված, գործնական բառերից բացի, պարունակում են նաև ութ հազար ոճ ու դարձված: Իսկ բառարանի ողջ պարունակությունը 24 հազար բառահոդված է:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ, ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ-ՏԱՃԿԵՐԷՆ:-Կ.Պոլիս:1891.- 250 էջ:

Պարունակում է ,, Առավել քան 13 հազար գրագիտական, պաշտոնական և գիտական բառ և շուրջ 700 ոճ ու մասնավոր ասացվածք,,: Բառարանն ընդգրկում է միայն աշխարհաբար /,, մեր աշխարհիկ,,/ լեզվի հին ու նորաշեն բառերը, որոնցից բառարանագիրն ընտրել է միայն վերոհիշյալ 13 հազարը:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՏԱՃԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:-Կ.Պոլիս:1892.- 276 էջ:

Պարունակում է արդի /նորագույն շրջանի/թուրքերենում գործածվող ավելի քան 30 հազար բառ, որոնք ներկայացված են հայերեն տառադարձությամբ: Հատկապես ոճերն ու դարձվածային արտահայտությունները մեկնաբանված են բազմազան կիրառությամբ և ընդարձակ բացատրությամբ:

ԱԲԻԿՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ-ՏԱՃԿԵՐԷՆ:- Կ.Պոլիս:1891.- 160 էջ:

Սա հեղինակի նույն՝ 1891թ. հրատարակված համանուն բառարանի համառոտությունն է, որը պարունակում է 6500 բառահոդված/ընդարձակը պարունակում է 13 հազար բառա-

հոդված և 700 ոն ու ասացվածք/:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ.ԲԱՌԱՐԱՆ ԳՐԱԲԱՐԻՑ-ԱՇԽԱՐՀԱԲԱՐ/հավելված ,, Դրաքարի ժեռնարկի,,/: - Եր.: 1952-1976: Ընդգրկում է 447-553 էջերը:

Այս հավելված-քառացանկը նպատակ ունի օգնել ուսանողությանը՝ հնարավորին չափ ծանոթանալու դասական հայերենի քառապաշարին, հատկապես համախակի գործածություն ունեցող քառերին, ըմբռնելու այս կամ այն քառի իմաստն ու նշանակությունը: Այդ է պատճառը, որ քառացանկ են մտցված առավել գործածական քառերը:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ.ՊԱՀԼԱՎԵՐԵՆ -ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1965.-337 էջ:

Բառարանը պարունակում է 5000 քառահոդված՝ հինգ լեզուներով, դրա հետ միասին նաև պահլավերենի այբուբենը, որը պայմանավորված է այդ լեզվի՝ շատերին անծանոթ լինելու հանգամանքով:

Բառարանի վերջում / էջ 255-337/ տրված է երկլեզվյա՝ հայերեն և ռուսերեն հավելված-անոտացիա՝ ,, Միջին պարսկերենը և նրա համակարգը,, և ,, Краткий очерк грамматики Пехлеви ,, , որը քերականական համակողմանի տեղեկություններ է պարունակում հին պարսկերենի վերաբերյալ:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՀԱՆ.ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: - Մոսկվա:1928/1-ին հրատ./, Մոսկվա: 1930 /2-րդ հրատ./.- 749 էջ:

Այս քառարանը քազմանշանակ աշխատանք է. այն մի կողմից 30-ական թվականներին ծառայել է իբրև երիտասարդության քաղաքական ուսուցման ձեռնարկ, մյուս կողմից՝ նպաստել հայերեն քաղաքական գրականության թարգմանության գործին:

ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ /խմբ. Ա.Ն.Մարտիրոսյան/:- Բաքու:1950. -60 + 50 +13 էջ:

Երեք առանձին քառարաններ են՝ նախատեսված Ադրբեջանական և Հայկական հանրապետությունների տարածքում գործող հայկական և ադրբեջանական դպրոցների VII ,IX և X դասարանների սովորողների համար: Դրանց առաջինը և երկրորդը պարունակում են 2000-ական, իսկ երրորդը՝ մոտ հազար քառ:

ԱԶԱՐՅԱՆՑ ԱՐԻՍՏԱԿԵՍ,ԱԶԱՐՅԱՆՑ ՍՏԵՓԱՆՈՍ. ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՅՈՒՆԱՐԷՆ,ԻՏԱԼԵՐԷՆ,ՀԱՅԵՐԷՆ,ՏԱՃԿԵՐԷՆ: - Վիեննա: 1848.- 914 էջ:

Օտար լեզուների հետ առնչվող հայերին ամենահարուստ

բառարաններից մեկն է, որը պարունակում է 45 հազար բառահոդված: Բառարանի նպատակի մասին նրա առաջաբանում ասված է՝ օգնել հայ պատանիներին և աղջիկներին՝ հնարավորին չափ սովորել և տիրապետել վիրոհիշյալ լեզուներին:

Բառարանի վերջում տրված են համապատասխան ցանկեր, հայերենի այբուբենը և երկբարբառները:

ԱԲԱՆԵՍՅԱՆ ԽԱՉԻԿ.ՀԱՆԴԱՐՁ ԵՎ ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅ ԼԵԶՎԻ:- Բեյրութ: 1961.- 442 էջ:

Կազմվել է հատկապես Հ.Ամատյանի ,,Հայերեն արմատական բառարանի,, և Հ.Գեյայանի ,, Բառարան-զանձարանի,, հիման վրա:

Բառարանը աչքի է ընկնում հոմանիշների, դարձվածների ու ոսերի առատությամբ: Դրանց թիվը անցնում է 10 հազարից:

ԱԲԵՀԱՅԻ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.:1983.-305 էջ:

Այս բառարանը, որ կազմվել է ռուս հեղինակային մի մեծ կոլեկտիվի կողմից, 1981թ. ռուսերեն հրատարակության թարգմանությունն է: Գրեթե բոլոր բառահոդվածները ներկայացված են ընդարձակ բացատրությամբ: Դրանց մեծ մասն ունի առանձին տեսական հոդվածի արժեք:

ԱԼԱՃԱՅԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.ՀԱՒԱՔԱԾՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՈՅ՝ Ի ՊԷՏՍ ՆՈՐՅՎԱՐԺ ՈՒՍՈՒՄՆՈՂԱՑ:- Կ.Պոլիս: 1862.-170 էջ:

Թեև ծավալով փոքր, սակայն հսկայական ջանքերի գնով ստեղծված աշխատանք է, որտեղ ի մի են բերված հայ ժողովրդի բազմադարյան կենսափորձերի հիման վրա ստեղծված ասացվածքները, խորիմաստ արտահայտությունները, դարձվածները, առածներն ու այլ ընույթի պատրաստի խոսքաձևերը, որոնցից այս բառարան է մտցված հազարը:

ԱԼԱՄԴԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆ Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ:- Մոսկվա: 1821.- 287 էջ:

Պարունակում է 9 հազար բառահոդված, որոնք առավելապես կրոնական և վաճառական-առևտրական ընույթի առօրյա գործածության բառեր են:

Բառարանում տեղ են գտել նաև այս ընույթի մի շարք օտար բառ-տերմիններ՝ համապատասխան մեկնաբանությամբ հանդերձ:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ.ԲԱՌԱՐԱՆ ՅԱՏՈՒԿ ՄԱՍԻՆՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՑ: - Վենետիկ: 1749.- 1+232 էջ:

Սա հայ մշակույթի պատմության մեջ մեծ արժեք ներկայացնող գործ է, որտեղ ընդարձակ ու փաստալից տեղեկություն-

ներով ներկայացված են Աստվածաշնչի մեջ գործածվող բոլոր հատուկ անունները /անձնանուններ, կրոնական վարքագիրներ, աստվածներ, տեղանուններ, կրոնական այլաշխարհի անվանումներ և այլն/: Յուրաքանչյուր անուն-բառահոդված ներկայացված է հատվածաբար, որտեղ հատուկ անվան վերաբերյալ տրված են ընդարձակ ու բազմակողմանի բացատրություններ:

ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ՆՇԱՆ. ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱԳՐՔՈՒՅԿ:- Եր.: 1930.-178 էջ:

Պարունակում է 4 հազար 400 բառահոդված, որոնց բնույթը բացահայտված է նրա հետևյալ մեկնաբանությամբ. ,, Ուղղագրական բոլոր կանոններով և դժվար ըմբռնելի բառերի հակիրճ բացատրությամբ,,: Այս բառարանը գործածության մեջ մնաց մինչև 1940 թվականը:

ԱԼԻՇԱՆ ՂԵՎՈՆԴ. ՀԱՅԲՈՒՍԱԿ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹՅՈՒՆ:- Վենետիկ: 1895.- 697 էջ:

Սա հայ բառարանագրության նվաճված փառքերից մեկն է, որը խոր արմատներով կապված է հայ բժշկագիտության հետ: Այստեղ ամփոփված են այն բոլոր բուսանունները, որոնք հանդիպում են հատկապես հայկական շրջաշխարհում և ունեն բուժիչ հատկություն:

,,Հայբուսակը,, պարունակում է 3400 բուսանուն, որոնք միաժամանակ ներկայացված են ֆրանսերեն, լատիներեն, տաճկերեն և արաբերեն անվանումներով:

ԱԼԽԱՋՅԱՆՑ ԵՂՆԻԿ. ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՎՐԱՑԵՐՆԵՆ ԼԵԶՎԻ:- Թիֆլիս: 1903.- 48 էջ:

Այս փոքրածավալ ինքնուսույց- բառագրությունը պարունակում է հայերենի և վրացերենի այբուբենները, երկու լեզուների վերաբերյալ հնչյունաբանական և քերականական մի շարք կանոններ, վարժություններ և առանձին թեմատիկ բնույթի մի շարք անուններ /ամսվան, ամսանուններ, տնային իրերի անուններ, տոներ, թռչուններ և այլն/:

ԱԽՇԱՐՈՒՄՈՎ ՌՈՒԲԵՆ, ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ ՋԱՎԵՆ, ՓՈՓՇՅԱՆ ՎԱՐԴԱՆ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1957.- 436 էջ:

Բառարանը պարունակում է գիտության, տեխնիկայի, շինարարության, արդյունաբերության ընդգրկումը 25 հազար տերմին-բառահոդված, որոնց դիմաց միաժամանակ նշված

է դրանց կիրառության ոլորտը: Թարգմանական հոմանիշների նշումից բացի առանձին բառերի դիմաց փակագծերում նաև տրված են համապատասխան բացատրություններ:

ԱՂԱՅԱՆ ՄՍՆՇԻՏ.ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԶՐՈՒՑԱՐԱՆ:- Եր.: 1984.-134 էջ:

Հատկապես նախատեսված է բուհերի ուսանողության համար, ինչ նպատակով էլ հրատարակել է Երևանի պետական համալսարանը: Բառարանը բաժանված է թեմատիկ մասերի/,,Հանդիպում,, ,,Ռեստորանում,, , ,, Գնումներ,, , ,,Թատրոնում,, , ,,Քաղաքում,, , ,,ճանապարհորդություն,, և այլն/: Հայերեն շարելն ու արտահայտությունները ներկայացված են նաև անգլերեն տառերով՝ հայերեն:

ՍՂԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ.ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1976.-1615 էջ:

Կազմված է երկու հատորից / 1-ինը՝ Ա-2, 2-րդը՝ Ղ-Ֆ/: Հայերենի բացատրական բառարաններից ամենածավալն ու լիակատարն է, որն աչքի է ընկնում բառամթերքի հարստությամբ, բառերի բազմակողմանի մեկնաբանությամբ ու բացատրությամբ, դրանց իմաստների համադրությամբ և ուրիշ առավելություններով:

Բառարանը պարունակում է 135 հազար 600 բառ և 11 հազար դարձվածաբանական միավոր, մի քանակություն, որը, ըստ ամենայնի, ներկայացնում է արդի հայերենի բառագանձը:

ՍՂԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ. ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆԵՐԵՆ ԵՎ ՕՏԱՐ ԱԶԳԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ:Թիֆլիս: 1911.-110 էջ:

Սեղմ, փոքր ծավալի բառարան է. պարունակում է 1300 բառահոդված, որի մեծ մասը ժողովրդական ասույթներ, ոճեր ու դարձվածներ են՝ ներկայացված լատինական գրությամբ: Դրանցից շատերի դիմաց նշված է աղբյուրը և ինչ նշանակությամբ է գործածված:

ՍՇԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋ: -Վիեննա: 1951.-183 էջ:

Պարունակում է հատկապես Գոլսի բարբառի և շրջակա տարածքի ժողովրդա-խոսակցական լեզվում գործածվող շուրջ 860 բառ:

Իտալերենից, Ֆրանսերենից և եվրոպական այլ լեզուներից բառարան են մուծված նաև այնպիսի փոխառյալ բա-

ոեր, որոնք հանդիպում են կը և ում մյուղի բարբառներում:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ. ԹՈՒՐՔԵՐԵՆԵ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋ / տես ,,Էմինյան ազգագրական,, ժողովածու/, հատ.9:- Մոսկվա-Վաղարշապատ:1902.- 381 էջ:

Բառացանկը պարունակում է թուրքերենից Զոլֆի, Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բառարաններին անցած և նրանցում գործածվող շուրջ 4200 բառ, որոնք ներկայացված են պայմանական նշաններով: Նշված է նաև դրանց լատինատառ թուրքերեն համարժեքը:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ. ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, հատ. 1-4:- Եր.: 1971-1979.- 2694 էջ/առաջին անգամ հրատարակվել է 1926-1932թթ.,խմորատիպ/:

Ծով է, հիրավի, անչափելի ու անկշռելի այն վաստակը, որ հատկապես բառարանագրության բնագավառում ներ է դրել ակադեմիկոս լեզվաբանը: Նրա ,, Հայերենի արմատական բառարանը,, իր կառուցվածքով ու ընդգրկած նյութով դուրս է գալիս ստուգաբանական բառարանների շրջանակներից: Այստեղ նոր մեթոդով ստուգաբանված է հայերեն 5062 բառ, որից 136-ը՝ զուտ հայերեն:

Բոլոր բառերը մեկնաբանված են հինգ համապատասխան բաժիններով/քերականական, իմաստաբանական, ստուգաբանական և այլն/: Չորս հատորը միասին պարունակում է 41 հազար բառահոդված:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ. ՀԱՅԵՐԵՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս:1913.-22+1141 էջ:

Երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է: Պարունակում է 30 հազար բառահոդված, որը հայ բարբառների բառագանձի մի չնչին մասն է: Բառարանը նաև պարունակում է բազմաթիվ ոճեր, դարձվածներ, խոսակցական լեզվի միջավայրից առնված հարուստ արտահայտություններ, որոնք մեր լեզվի հարստության վկայությունն են:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ. ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.-Վենետիկ: 1922.- 312 էջ:

Այս բառարանն ընդգրկում է այն բառերը, որոնք գործածված լինելով հին մատենագրության մեջ, տեղ չեն գտել Առձեռն բառարանում և ,, քաղաքության պետք ունին,,: Դրանք՝ այդ բառերը ներկայացված են ընդարձակ բացատրությամբ, նշված են նաև գործածության աղբյուրները: Վերջում /էջ 301-312/ տրված է ,, Հայերեն նոր բառերի ցանկը,,՝

Երեղեայցու բառից սկսած, օրհնաբանելով վերջացրած:

ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ.ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ/հինգ հատորով/: - Եր.: 1942-1952.- 3132 էջ:

Բառարանի ,, Առաջաբանում,, նշված են նրա նպատակն ու թենդենցները. ,,... հավաքել, դասավորել և ուսումնասիրել այն բոլոր անունները, որ պատմության ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբևիցե, անկախ իր ունեցած դիրքից ու աստիճանից, ընդունած կրոնից ու դավանանքից և ապրած շրջանից կամ երկրից,, Հայկ Նահապետից սկսած, Տրդատով,Տիգրանով ու Մաշտոցով վերջացրած, մինչև օտար Շամիլներն ու խալդական , աղվանական մեր կողմից կրած անունները, որոնց ողջ քանակը վերոհիշյալ հինգ հատորներում անցնում է տասը հազարից:

ԵՕՍՈՅԱՆ ՀՐԱՉՅԱ,ՋԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ,ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ,ՏՈՆՅԱՆ ԱՐՇԱԿ, ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ:- Եր.: 1928.-4+302 էջ:

Այս բառարանն աչքի է ընկնում նորագույն տերմինների առատությամբ և դրանց բազմակողմանի ընդգրկմամբ: Պարունակում է 7500 բառահոդված, որի մեծ մասը թարգմանություն է Ա.Շլոմանի վեցլեզվյա/ գերմաներեն-անգլերեն-ֆրանսերեն-ռուսերեն-իտալերեն-իսպաներեն/ բառարաններից: Բառարանը շարադրված է 10 ընդարձակ բաժիններից, որոնց բոլորի կազմմանը մասնակցել են միայն Հ.Ասատյանն ու Ա.Տոնյանը:

ԱԺԵՆՅԱՆ ՊԱՀՏԱՍԱՐ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Բեյրութ-Լիբանան: 1953:-576 էջ:

Պարունակում է 25 հազար բառահոդված, որի մի զգալի մասը բառ-ասույթներ, դարձվածներ, ոճեր են,որոնցով այնքան հարուստ է հատկապես անգլերենը: Անգլերեն յուրաքանչյուր գլխաբառի դիմաց նշված են հայերենի հնարավորին չափ հոմանիշներ: Դա իր հերթին վկայում է հայերենի բառազանձի ծոխության մասին:

ԵՄԱՏՈՒՆԻ ՍԱՀԱԿ.ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆ:- Վաղարշապատ: 1912.- 20+707 էջ:

Հայ բառարանագրության նվաճումներից է, որ բառարան լինելուց բացի, նաև ունի հանրագիտարանի արժեք:

Պարունակում է 14 հազար բառահոդված, որը հաստատում է այն միտքը, թե իր շռայլությամբ աչքի ընկնող հայոց բառ ու բանի հետ հազվագյուտ լեզուներ կարող են մրցել:

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ. ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ ԿԱՄ ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՒՅՆԱՑ: - Վիեննա: 1926.- 33+766 էջ:

Սա բժշկական-դեղաբանական-դեղագիտական հայերեն առաջին բառարանն է, որը հմտալից և գիտական մեծ արժեք ներկայացնող առաջաբանով հրատարակել է վաստակաշատ Կ.Բասմաճյանը, իսկ 1939թ. Երևանում լույս է տեսել Ս.Մալխասյանի խմբագրությամբ, նրա առաջաբանով ու ծանոթագրություններով:

Պարունակում է բժշկական, դեղաբանական և դեղագիտական բնույթի 3754 բառահոդված: Բառարանին կցված են չորս բաժնից բաղկացած ցանկեր, որոնք պարունակում են 13 հազար 350 բառ:

ԱՅՎԱԶՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ.ԲԱՌԱՆՄՈՒՅՇ:- Կ.Պոլիս: 1899.-թ+42 էջ:

Պարունակում է 2400 բարբառային բառահոդված, որոնք ներկայացված են բազմակողմանի բացատրությամբ, դրանց կանկրետ գրական համարժեքների նշումով: Բառարանում նշված են նաև թուրքերեն այնպիսի բառեր, որոնք հայերենում գիտակցվում են որպես բարբառային և հատկապես հանդես են գալիս մեր բարբառներում ու տեղական խոսվածքներում:

ԱՆԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ. ԲԱՌԳԻՐՔ ՅԱՇԽԱՐՀԱԲԱՐ Ի ԳՐԱԲԱՌ:-Վենետիկ:1869.- 572 էջ:

Բառարանն ունի հետևյալ մեկնաբանությունը. ,, Բառգիրք ... յաւելուածովք ոմոյ եւ դարձուածովք նախնեաց ի պէտս դպրոցաց,,: Այս նշանակում է, որ այն նախատեսված է դպրոցականների համար և ունի գործնական - ուսուցողական բնույթ:

Բառարանն ընդգրկում է 22 հազար աշխարհաբար բառահոդված, որոնց մի զգալի մասը դարձվածներ, թևավոր խոսքեր, ոճական արտահայտություններ են: Դրանց բոլորի դիմաց նշված է սկզբնաղբյուրը:

ԱՆԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ.ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ: - Էջմիածին: 1972.- 99 էջ:

Սա փաստորեն աղբյուրագիտական-բնագրաքննական և գրաքննական ուսումնասիրություն է, սակայն քանի որ պարունակում է համաբարբառային գրականության բազմաթիվ նմուշներ ու բառացանկեր, հետևապես նպատակահարմար ենք գտել այն ևս ներկայացնել բառարանների շարքում: Ունի նաև անվանական և առարկայական ցանկեր:

ԱՆԳԼԻ-ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀԱՅ-ԱՆԳԼԵՐԵՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Կ.Պոլիս: 1865.- 54 էջ:

Բառարանը, որ հրատարակել է Ե.Մինասյանը, ընդգրկում է պատմական Հայաստանի տեղանուններ և աշխարհագրական ու պատմա-դիցաբանական անվանումներ:
Կազմված է երկու բաժնից.

I part. English into Armenian.
II part. Armenian into English,

որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 1800-ական բառահոդված:

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ,ՏԻՐԱՑՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1965.: 250 էջ:

Պարունակում է գերմաներենի առավել գործածական 8000 բառ և արտահայտություն, որոնք առավելապես գործուն կիրառություն ունեն դպրոցական դասագրքերում: Բառարանում բոլոր գլխաբառերը տեղադրված են այբբենական կարգով, հերթականությամբ: Բառարանն աչքի է ընկնում քերականական իրողությունների առատությամբ և լեզվական կարգերի հղումով:

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1980.-906 էջ:

Բառարանն ընդգրկում է ժամանակակից գերմաներենի առավել ընդհանուր գործածության 40 հազար բառ և, ինչպես նշված է ,,Հեղինակի կողմից,, խոսքում, ,,... նախատեսված է ընթերցողների լայն շրջանների համար, որոնք կարդում են գերմաներեն ժամանակակից և դասական գեղարվեստական գրականություն, հասարակական-քաղաքական և գիտա-մասսայական գրքեր, ինչպես նաև թերթեր,,:

Այս բառարանն իր տեսակի մեջ, ծավալով և ծավալով, զիջում է միայն Ա.Կոյլավի ,, Բառգիրք գերմաներեն-հայերեն,, ընդարձակ և բարձրարժեք աշխատությանը:

Բառարանի աշխատանքներին մասնակցել է Արտ.Տիրացյանը:

ԱՆՏՈՍԵԱՆ ԳՈՒՐԳԵՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԱՎՏՈՏՐԱՆՏՈՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1945.- 218 էջ:

Այս բառարանը, որ ի տարբերություն մյուս բառարանների, միասնական տերմինաբանության չափանիշներով է ստեղծված, պարունակում է 4 հազար բառահոդված: Բոլոր բառահոդվածների ընտրությունը կատարված է տերմինների չափանիշով: Ռուսերեն բառ-տերմինի դիմաց հնարավորին չափ նշված են

հայերեն բոլոր համարժեքները:

ՍՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ. ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ:- Եր.: 1972.- 66 էջ:

Սույն գրքույկը, ճիշտ է, անվանված է ուսումնական ձեռնարկ, սակայն պարունակում է բժշկա-դեղաբանական և անատոմիական մեծ թվով բառացանկեր, որոնք համապատասխան խմբերով /փնջերով/ ներկայացված են թեմատիկ սկզբունքով: Սրանցից բացի գրքույկի վերջում տրված է հայերեն-լատիներեն և լատիներին-հայերեն զուգահեռներ կազմող մեկ այլ ցանկ:

ՍՌԱՔԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ. ԼԱՏԻՆ-ՀԱՅԵՐԵՆ,ՀԱՅ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ.-Եր.: -97 էջ:

Բժշկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի կողմից հրատարակված այս բառարանը հատկապես նախատեսված է այդ բուհի դեղաբանական-դեղագործական և մասնագիտական մյուս ֆակուլտետների ուսանողների համար՝ որպես նոմենկլատուրային բառացանկ:

Զուտ մասնագիտական դեղագործական տերմիններից բացի բառարանում զետեղված են նաև անատոմիական -ֆիզիոլոգիական և կլինիկական որոշ տերմիններ, որոնց հետ առնչվելու է ապագա դեղագործ ուսանողը:

ՍՌԱՔԵԼՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ.ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ/հատ. 1-ին, Ա-Ն տառերը/: - Թիֆլիս: 1915.- 4 + 2280 էջ:

Ինչպես նշված է բառարանի նախաբանում, այն ,, պարունակում է 2280 էջ կամ 1140 երես, 11 հազար 268 անուն կամ բառ և 308 պատկեր,,: Դժվար չէ կռահել, որ այս հսկայածավալ աշխատանքը հանրագիտական արժեք ունի և հիմնականում թարգմանական բնույթի է: Հեղինակը թարգմանականին, սակայն, ավելացրել է հայկական կյանքին վերաբերող մեծ թվով փաստեր, աշխարհագրական տեղանուններ: Տեղեկություններ են տրվում նաև մեր մշակույթի գործիչների մասին:

ՍՈՂԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ԹՈՒՐՔԵՐԵՆԷ Ի ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1889.- 176 էջ:

Սույն թուրքերենից-հայերեն հայատառ առձեռն բառարանը պարունակում է օսմանյան գրական թուրքերեն, արաբերեն և պարսկերեն առավել գործածական բառերը, ոճերն ու դարձվածային արտահայտությունները, որոնք, ինչպես նշված է ,,Լեզվում,, , - ,, քաղված են ընտրելագոյն բառարաններէ,,:

Յուրաքանչյուր գլխաբառի դիմաց հիմնականում նշված է նրա հայերեն մեկ,հազվադեպ՝երկում կամ երեք համարժեքը:

Գրադարան 2616

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՆՉ ՀՆՈՑ ԵՎ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ԼԱՆԹԵԱՑՆ ՄԵՐՈՑ ԵՎ ԺԵՄԱՐՏԱՍԻՐԱՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ/ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ/: - Ամստերդամ: 1666.- 829 էջ:

Աստվածաշնչի առաջին համաբարբառը ստեղծվել է 19-րդ դարում, ավելի քան 500 բարձրաստիճան հոգևորականների ջանքերով: Համաբարբառի այս հրատարակությունը նախաձեռնել և իրականացրել է Ռոբերտ Ստեփանոսը, որի հետևությամբ էլ 1666թ. Ամստերդամում ոսկան Երևանցին հրատարակել է այն:

ՊԱՏՎԱՌԱՏՈՒՐ ՆԵՐԵՍՈՎԻՀ.ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:-Հռոմ:1695-596էջ:

Սա հնագույն բառարաններից է, այդ պատճառով էլ չունի հետագա դարերում ստեղծված բառարաններից շատերի առավելություններն ու նրանց նոլությունը, թեև բառընդգրկմամբ բավականաչափ հարուստ է, և բացատրությունները տրված են բազմակողմանի բառագրությամբ:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՅԱՆ ԹԱԴԵՈՍ.ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ:- Երուսաղեմ:-1895.- 15+1573 էջ:

Համաբարբառի կազմելու աշխատանքները տևել են մեկ տասնամյակ, իսկ անտիպ վիճակում այն մնացել է 15 տարի:

Աստվածաշնչի, ինչպես նաև նոր կտակարանի համաբարբառներում գլխաբառերը մեկնաբանված են բոլոր այն նախադասությունների վկայակոչումներով, որտեղ գործածված է տվյալ բառը: Դրանք հաճախականության առումով տարբեր են: Կան մեկ կամ երկու անգամ գործածված բառեր, նաև այնպիսիները, որոնք գործածված են 5-30 անգամ:

Օրինակ դահիճ բառը / և նրանով կազմվածները/ գործածված է 30, իսկ հավատքակ բառը՝ 21 անգամ:

ԱՎԳԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱԳԻՐՔ ԳԱՂԼԻՍԿԱՆԷ Ի ՀԱՅ ԵՎ Ի ՏԱՃԻԿ ԲԱՐԲԱՌՆ:- Վենետիկ: 840.- 755 էջ:

Սա Ավգերյանի ստեղծած ընդարձակ բառարաններից է. նույնպես պարունակում է 35 հազար բառահոդված: Այստեղ ևս բառերը մեկնաբանված են բազմակողմանիորեն, իրենց տարբեր դրսևորումներով: Առանձնակի տեղ են գրավում դարձվածները ու ոճերը, որոնք բավականաչափ շատ են այս բառարանում:

ԱՎԳԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ:- Վենետիկ: 1821.- 983 էջ:

Առաջաբանից տեղեկանում ենք, որ Հ.Ավգերյանն իր բառարանը կազմելիս ձեռքի տակ ունեցել է անգլիացի հայտնի բառարանագիր Սամուել Ջոնսոնի երկհատոր անգլերեն բառարանը, որից և օգտվել է ըստ ամենայնի:

Այս բառարանի երկրորդ հատորը լույս տեսավ 1825թ., Մ. Պետրոսյանի ջանքերով:

Առաջին հատորը պարունակում է 35 հազար բառահոդված: Հատորն ունի նաև ,, Անուանք անծանց,, և ,,Անուանք քարտ-քաց,, բաժինները՝ համապատասխանաբար 500 և 550 բառաբանա-կով:

ԱՎԳԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.ԲԱՌԱՐԱՆ ՀԱՄԱՌՕՏ Ի ԳԱՂԻԱԿԱՆԷ Ի ՀԱՅ/ հատ. 1/:- Վենետիկ: 1812.- 24 +570 էջ:

Սա Ֆրանսերեն-հայերեն առաջին բառարանն է, որը կիրա-կանում հոմանիշների բառարանի ապավորություն է թողնում: Յուրաքանչյուր գլխաբառից հետո վկայագծերում տրվում է բառի արտասանությունը, ապա դրա հայերեն, լսկ որոշ բառերի համար՝ նաև թուրքերեն համարժեքները: Բառարանը ակզբում ունի ,,Լծորդութիւնք կանոնաւոր և անկանոն բայից,, , իսկ վերջում՝ ,,Անուանք ազգաց,, բաժինները, նաև անշնորհունների և տեղանուն-ների ցանկեր, ընդհանուր թվով՝ 1030 բառ-անուն: Իսկ ամբողջ պարունակությունը կազմում է 23000 բառահոդված:

ԱՎԳԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱՐԱՆ ՀԱՄԱՌՕՏ Ի ՀԱՅԷ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆ:- Վենետիկ: 1817.- 681:

Սա այս բառարանի երկրորդ հատորն է / առաջին հատորը՝ տես Գաղղիերեն-հայերեն, լույս է տեսել ավելի վաղ՝ 1812-ին, Վենետիկում, 24 + 570 էջ/: Պարունակում է 35 հազար բառա-հոդված, որը վկայում է այս բառարանի Ծավալության և հարբա-տության մասին / առաջին հատորը ընդգրկում է 33 հազար բառահոդված/: Բառարանը պարունակում է նաև քերականական տե-ղեկություններ:

ԱՎԳԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ:- Կալկաթա: 1825.- 289 էջ:

Բառարանի անվանումից էլ երևում է, որ այն իրականում հեղինակի 1821թ. հրատարակված անգլերեն-հայերեն բառարանի հա-մառոտությունն է, որը իրականացրել և տպագրել է Հ.Ավդալյանը:

Այբբենական սկզբունքով շարակարգված անգլերեն գլխա-բառերի դիմաց նշված է նրանց լոսքիմաստային պատկանելու-թյունը / բայերի համար նաև սեռը/, ապա հայերեն բացատրու-թյունը՝ բազմաթիվ իմաստներով հանդերձ:

Բառարանի վերջին մասը / էջ 280-289/ հատկացված է հատուկ անուններին /,,Անուանք արանց,, , էջ 280-286/ և

,,Անուանք կանանց,, , էջ 286-289/:

ԱՎԵՏԵՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՉԱՓՈՑ ԵՎ ԿՇՌՈՑ ՆԱԽՆԵԱՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՊԻՓԱՆՈՒ, ԽՈՐԵՆԱՑԻՈՑ ԵՎ ՇԻՐԱԿԱՑԻՈՅ:- Վենետիկ,1821.- 207 էջ:

Սա իրավանում տեսական քնույթի աշխատանք է՝ բաղկացած առաջաբանից և հետևյալ բաժիններից.,, Եպիփանու յաղագս չափոյ և կշռոյ,, / էջ 1-20/, ,,Անանիայ Շիրակունոյ համարողի յաղագս կշռուն և չափուց,, / էջ 21-32/, ,, Մովսիսի Խորենացւոյ յաղագս ասպարիսական չափու,, / էջ 33-59/, ապա ընդհանուր բաժինը՝ ,, Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց,, , որտեղ շնորհագրված են հայկական, պարսկական և Ֆրանսիական չափերն ու կշռային միավորները:

ԱՎԴԵՐՅԱՆ ՄԵՐՏԻՉ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ:- Վենետիկ:1846.- 600 էջ:

Սա թեև ,, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի,, համառոտված տարբերակն է, սակայն իր ընդգրկած բառաքանակով և ծավալությամբ գրեթե նրան չի զիջում, քանի որ վերոհիշյալ բառարանից այստեղ է փոխադրված նրա մոտ 96 տոկոսը, մի հսկայական գանձ, որը լիարժեք պատկերացում է տալիս դասական հայերենի ողջ բառագանձի մասին: Պարունակում է 56 հազար 410 բառ:

Այս բառարանի երկրորդ հրատարակությունը լույս է ընծայել Գր.ծելալյանը / տես նրա ,, Առձեռն բառարան Հայկազեան լեզու,, , Վենետիկ, 1865, 849 էջ/:

ԱՎԳԵՐՅԱՆ ՄԵՐՏԻՉ.ՄՆԱՑՈՐԴՔ ՎԱՐՈՒՑ ՄԲԱՌՈՅ ԵՒ ՏԱՐԱԲԵՐՈՅ ՏՈՆԱՑՈՒՑԻՆ ՄԵՐՈՅ:- Վենետիկ: 1815.- 416 էջ:

Սա, թերևս, բառարան է ,, յաւուրկ անուանց սբ.հնոց և նորոց,, , և ինչպես նշված է ,, Ներածությունում,, , այս հատորում ի մի են հավաքված մեր ազգային և օտար այն ,, երևելի արք,, և այն հոգևոր ու աշխարհիկ գործիչները, որոնց մասին հեղինակը կարողացել է որոշակի տեղեկություններ մեռք բերել:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՈՍ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1964.- 586 էջ:

Այս բառարանը կազմելու առիթը ներկայացել է հեղինակի կողմից Կ.Մարքսի ,, Կապիտալի,, թարգմանության ժամանակ:Այն ընդգրկում է ժամանակին տնտեսական գիտության ընագավառում գործածվող գրեթե բոլոր տերմին-հասկացությունները, թեև

դրանցից շատերը արդեն հնաբանություն են, քանզի բառարանը լույս աշխարհ եկավ նրա ստեղծումից ավելի քան 35 տարի հետո:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ ԹԱԴԵՈՍ,ՍՈՏՆԻԿՅԱՆ ՊՈՂՈՍ,ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ,ՅՈՒԹԵՋԱՆ ՎԱՐԴԱՆ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ / հատ.1-ին A-H տառերը/:- Եր.: 1933.- 8 1166 էջ, / հատ.2-րդ,O-Պ տառերը/:- Եր.: 1935.- 1725 էջ:

Բառարանը պարունակում է 80 հազար բառ և արտահայտություն՝ ռուսերենի համառոտ բերականությամբ ու դասակարգի դարձվածքների և այլ բնույթի կայուն կապակցությունների բառացանկով հանդերձ:

Բառարան են մտցված զուտ գրական բառերը. այն կերն է գրաբարյան և բարբառային բառերից ու ձևերից:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԻՄԱՐ.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1983.-203 էջ:

Սա բառարան լինելուց բացի նաև դիտահանրամատչելի տեղեկատու գրքույկ է աշխարհագրական տերմինների ու տեղանունների, հայտնագործությունների ու աշխարհագետ-հնագետների, առհասարակ՝ աշխարհագրական-կլիմայաբանական բազմաթիվ այլ երևույթների մասին: Այս առումով էլ այն, որպես աշխարհագրական հանրամատչելի հանրագիտարան, արժեքավոր է: Բոլոր անունների բացատրությունները և գիտական ստուգաբանությունները համոզիչ են:

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ,ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ,ԱՎԳԵՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ. ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՎԻՆ / հատ. 1-ին, Ա-Կ տառերը/:- Վենետիկ: 1836.- 21 + 1340 / հատ. 2-րդ, Հ-Ֆ տառերը/: - Վենետիկ: 1837.- 1067 էջ:

Այս երկհատոր ընդարձակ բառարանը, որ, հիրավի,գրաբարի ,, համատարած տիեզերածավալ,, բառագանձի լիաբժեք ամփոփումն է, կազմված է ժամանակի ձեռագիրը և տպագիր հուշարձանների հիման վրա: Այն համաշխարհային բառարանագրության նվաճումներից ու մեծագույն ձեռքբերումներից է, դասական հայ բառարանագրության դափնեպսակը, որի վրա մեր մշակույթի երեք գործիչները աշխատել են ուղիղ կես դար: Երկու հատորը միասին պարունակում են 55 հազար բառահոդված:

ԱՐԱԲԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ / ,,Մշակ,, մատենաշար/:- Բեյրութ: 1959.- 467 էջ:

Բառարանը, որն առավելապես գիտական արժեք ունի, պարունակում է 30 հազար բառային միավոր: Այն նպատակ ունի

,, արաբերեն լեզուն և անոր հարուստ բառամթերքը ծանոթացնելով՝ մատչելի դարձնել հայ հասարակությանը,,: Բառարանում հատկապես մեծ տեղ է հատկացված ետին շրջանում արաբերենում ձևավորված նորաբանություններին:

ԱՐԱԲՅԵՐԵՆ-ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՎՐԱՑԵՐԵՆ-ՄԱՆՋՈՒՐԵՐԵՆ-ՉԻՆԱՐԵՆ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ / ԳՈԼՈՍԱՐԻՈՒՄ/- Լենինգրադի արխիվ:

Սա բազմալեզվյա մի յուրօրինակ ձեռագիր-քարտարան-բառարան է, որը իրենից ներկայացնում է 747 քարտերի ժողովանու: Բոլոր քարտերի վրա մայրենի լեզվով գրված է ալֆաբեթը, իսկ ներքևում՝ այդ բառը՝ լատիներեն տառադարձությամբ: Տարբեր լեզուներով տրված բառերի մեկնաբանություններից առավել լիարժեքը հայերենն է: Փաստը վկայում է, որ բառարանի հեղինակը հայ է եղել: Քարտարանը պահվում է Ասիայի ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում:

ԱՐԱՄՅԱՆ ՀԱՄԻԿ.ԲԱՌԳՐՔՈՒՅԿ ՀԱՅԵՐԵՆ-ՏԱՃԿԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1879.- 309 էջ:

Ձափազանց փոքր ծավալի գրպանի բառագրքույկ է. պարունակում է 7000 բառահոդված, որոնց շարքում առօրյա գործածության բառերը ներկայացված են հայատառ և Ֆրանսերեն: Բառարանն իր գոյության մոտ երեսուն տարիների ընթացքում / 1860-1888թթ./ վերահրատարակվել է ութ անգամ: Սա յոթերորդ լրացված և ծոխացված հրատարակությունն է:

Ի դեպ, առիթից օգտվելով, հարկ ենք համարում նշել, որ Գ.Գասպարյանը մի կողմից գրում է, թե Ա. Արամյանի այս բառարանի ,, Կ.Պոլսի VII և VIII հրատարակությունները մի քանի գրացուցակներում վերագրվել են հրատարակիչ Գ. Պաղտատլյանին,, , իսկ մյուս կողմից նույն այս բառարանը վերագրում նույն Գ.Պաղտատլյանին / տես նրա ,, Հայ բառարանագրության պատմություն,, , էջ 195 և 517/, որպիսին մեզ չհաջողվեց հայտնաբերել:

ԱՐԱՄՅԱՆ ՃԱՆԻԿ. ՀԱՄԱՌՈՏԱԳՈՅՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՐԴԵՍՆ ԼԵԶՈՒԻ / հայերեն-տաճկերեն-ֆրանսերեն/:- Փարիզ: 1860.- 178 էջ:

Բառարանը կազմված է հետևյալ հինգ բաժիններից՝ 1,Հայերեն-տաճկերեն ֆրանսերեն / էջ 1-81/, որն ընդգրկում է 10 հազար բառահոդված. 2.Տերությունների անուններ և բնակչության քանակ ցույց տվող բառեր /էջ 83-84/, 3.աշխարհագրական անունների բառացանկ/ էջ 85-97/,

4. ,,Անուն ազգաց և անձանց,, / էջ 99-100/, 5. ,, Առաջնորդ Ֆրանսերեն լեզվի հաղագս ճամփորդաց ի Ֆրանսիա,,/էջ 113-118/, որոնց ըոլորի ողջ քառամթերքը կազմում է 10 հազար քառահոդված:

ԱՐԱՊԱՅԵԱՆ ՀՈՎՀԱՆՆԷՍ. ԾՈՑԻ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Ալեքսանդրապոլ: 1895.- 410 էջ:

Պահպանված է այս քառարանի միկրոֆիլմը: Այն պարունակում է վեց հազար գլխաքառ, որոնցից շատերը ռՕհր ու դարձվածներ են: Բառարանը գործնական-ուսուցողական նպատակ է հետապնդում: Այն կարճ կյանք ունեցավ՝ իր տեղը զիջելով Հ. Թումանյանի ,, Ռուս-հայերեն քառարանին,, , որը անհամեմատ ծոխ էր:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ,ԾԱՏՈՒՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ,ՋՈՀԱՐՅԱՆ ԹԱՄՅԱՐԻ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ- Եր.: 1941.- 179 էջ:

Բառարանի ընդհանուր պարունակությունը 1500 քառահոդված է, որից Н-Я տառերը կազմել է Թ.Ջոհարյանը, իսկ Թ.Ծատուրյանը՝ Н-Я տառերի քաժինը: Ա.Արարատյանը կատարել է տերմինների ռուսերեն թարգմանությունը, լրացումները և ընդհանուր խմբագրական աշխատանքները:

Բառարանի ըոլոր տերմինների ընտրությունը կատարված է խիստ մասնագիտական սկզբունքով:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ/ փորձնական պրակ/:- Եր.: 1944.- 32 էջ:

Այս պրակը, որպես նախավորձ, պարունակում է այն սկզբունքներն ու կանոնները, որոնց վերաբերյալ ծրկում են քազմաթիվ օրինակներ՝ ծանոթություններով ու քացատրություններով հանդերձ:Փորձնական պրակում տրված է միայն Ա տառով սկսվող մի քանի հարյուր քառ՝ հայերենի ա ձայնավորի նկարագրությունից սկսած, աՕլացնել քայով վերջացրած:

ԱՐԹԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵԱՏՈՒՆԳԵՐԸ ԵՎ ԱՆՈՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆԵՐԸ:- Փարիզ: 1906.-68 էջ:

Սա, ինչպես նաև հեղինակի ,, Աստվածաշունչի տունկերը,, իրականում ըուսաբանական քնույթի աշխատություն է: Այն նաև քառարանի արժեք ունի, քանի որ Ֆրանսում հայերեն քառարանագրական մի շարք հուշարձանների քննությունից ըացի, քացատրվում են քազմաթիվ ըուսանուններ և տնկիների անուններ, որոնց մեծ մասը հեղինակը քաղել է Սովետական Հայաստանում լույս տեսած գրքերից, մամուլից, գիտական հանդեսներից

/խոսքը վերաբերում է երկրորդ հրատարակությանը, որը լույս է տեսել 1952թ. Վենետիկում: Առաջին հրատարակությունը պարունակում է 30, իսկ երկրորդը՝ 66 քառահոդված/:

ՍՐԲԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏՈՒՆԿԵՐԸ: - Կ.Պոլիս: 1913.-168 էջ:

Այս քառարանի պարունակությունը / 1500 քառահոդված / քաղված է հեղինակի նախորդ՝ 1906 թվականին լույս տեսած ,,Տունկերը և անոնց հայերեն անունները,, աշխատությունից: Բոլոր քուսանուն-տունկերի հայերեն անվանումները տրված են նաև լատիներեն: Քառարանի վերջում զետեղված է ,,Ավետարբեր,, հանդեսի 1913թ. նո. 38-ում տպագրված հեղինակի ,,Աստվածաշունչի տունկերը,, հոդվածը:

ԱՐԶՐՈՒՆԻ ՎԱՀԱՆ. ՌՈՒՍ-ԼԱՏԻՆ-ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- 1-ին հրատ. Եր.: - 15 + 264 էջ, 2-րդ հրատ. Եր.:- 1956.- 360 էջ:

Զափազանց ընդարձակ ու ծավալուն քառարան է, որտեղ քուն բժշկական քառ-տերմիններից քացի ներմուծված են դեղաբույսերի անունները, կազմախոսական, ախտաբանական, մանրէաբանական, հյուսվածաբանական և հարակից գիտություններին վերաբերող ավելի քան 1000 քառ ու տերմին: Առավել հարուստ է գիտական տեսակետից արժեքավոր է երկրորդ հրատարակությունը:

ԵՐՆԵՆ ԴՊԻՐ /ԿԵՍԱՐՅԱՆ/.ԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱՑ:- Կ.Պոլիս: 1749.- 528 էջ:

Սա իրականում աստվածաբանական-փիլիսոփայական բնույթի հանրագիտարան- քառարան է, որտեղ ի մի են հավաքված անվանի գործիչների ասույթները:

,, Գիրք սահմանացը,, կազմված է աստվածաբանական, բնական, բարոյական, քաղաքական քաժիններից: Բոլոր քառահոդվածները մշակված և ներկայացված են հանգամանալից քացատրությամբ:

ԱՐՇԱԽԵՆԻ ՀՈՎՍԵՓ. ՀԱՄԱՈՑ ԲԱՌԳԻՐՔ Ի ԳՐԱԲԱՐԷ ՅԱՇԽԱՐՀԱԲԱՐՆ Ի ՊԵՏՍ ՀԱՄԲԱԿԱՑ:- Շուշի: 1830.-398 էջ:

Առավելապես քացատրական բնույթի քառարան է և նպատակ ունի քառերի իմաստները քացատրել ու մեկնաբանել աշխարհաքար՝ հասկանալի մասսայական ընթերցողներին: Նկատի ունենալով, որ քառարանը նախատեսված է ,, համրակաց,, համար, հեղինակը գրաբարյան քառերի դիմաց նշել է ոչ թե զուտ գրական, այլ դրանց քարքառային-խոսակցական համարժեքները:

ԱՔԸՐՅԱՆ Կ.ԱՐԱՊԵՏ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՆՈՐ ԿԱՂԱՆԴՁԵՔ ՀԱՅԱՌՈՒՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԵԼԻ ԱՐԱՆՑ: - Վենետիկ: 1891. - 231 էջ:

Այս բնույթի բառարան-հանրագիտարանները հայ իրականության մեջ շատ են ստեղծվել, որոնցից Կ.Աքբրյանի այս գործը որոշակիորեն տարբերվում է թե իր բնույթով և թե բառահոդվածների/կենսագրական ակնարկների/ ծավալությամբ ու փաստերի հավաստիությամբ:

ԲԱԲԱՅԱՆ ԱՐԱՄ.ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1950.- 264 էջ:

Կազմված է երկու բաժնից.

ա/ Ռուս-հայերեն, որը պարունակում է 2000 բառահոդված.

բ/Հայ-ռուսերեն. նույնպես պարունակում է 2000 բառահոդված.

Թեև, ինչպես երևում է, հեղինակը ձգտել է հավասար չափով և նույն ձևով ներկայացնել բառարանի երկու բաժինները, բայց և այնպես ռուս-հայերեն բաժինը ավելի բազմակողմանի բացատրությամբ է ներկայացվել: Դրան հակառակ, հայ-ռուսերեն բաժնում բացատրություններ չեն տրված, որովհետև դրա կարիքը չի զգացվում:

ԲԱԲԱՅԱՆ ԿԱՌԼԵՆ. ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1985.- 183 էջ:

Այս և նմանատիպ բառարանների անհրաժեշտությունը պայմանավորված է Ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի զարգացման արդի պահանջներով:

Սա մարմնամարզության, մասամբ նաև ակրոբատիկայի ու գեղանվեստական մարմնամարզության մեջ կիրառվող հիմնական տերմինների ամբողջական ժողովածու է: Տեղեկատու-բառարանը լիովին կարող է փոխարինել ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի ժեռնարկի, որով էլ պայմանավորված է նրա հիմնական արժանիքներից մեկը:

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ,ԽԱԼԻԼՈՎ ԻԲՐԱՀԻՄ.ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1978:-565 էջ:

Բառարանն ընդգրկում է շուրջ 50 հազար բառ և բառակապակցություն, որոնցով այնքան հարուստ են երկու լեզուները: Առաջին մասում ներկայացված են հայերենի, ռուսերենի և ադրբեջաներենի այբուբենները, որոնց հնչյունները առանձնացված են ըստ արտաբերման տեղի, որակի, եղանակի: Տրված են նաև քերականական տեղեկություններ: Այն բառերը, մասնավորապես տերմինները, որոնց համարժեքները չկան ադրբեջաներենում, դրանց դիմաց նշված է ռուսերեն համարժեքը:

ԲԱՌԱՏԵՏՐ ԿԱՄ ԺԱՂՈՎԱԾՈՒ ՀԱՅԵՐԵՆ ՊԻՏԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ:-Կ.Պոլիս: 1825:

Հայերենի հնագույն բառարաններից է, որը չկա,և մեզ

չհաջողվեց հայտնաբերել հանրապետության գրադարաններում կամ մշակութային կենտրոններում: Ա.Ղազիկյանը այս բառարանի տարեթվի մասին նշել է, սակայն ինքը այն ևս չի տեսել:

ԲԱՌԱՐԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՂԱՅՈՑ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:- Կ.Պոլիս, Խաս-գյուղ: 1879.- 48 էջ:

Բառարանի տիտղոսաթերթին նշված են հեղինակի անուն-ազգանվան առաջին տառերը՝ Ռ.Մ., որի ով լինելը մեզ չհաջողվեց հայտնաբերել:

Բառարանը պարունակում է 700 բառահոդված, որոնք առօրյա խոսակցություններում հանդիպող բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ են: Բառարանը ուսուցողական բնույթի է:

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՏԱԾԿԵՐԷՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1866:

Բառարանի հեղինակը հայտնի չէ, և միշտ էլ հիշատակվում է նրա հրատարակչի՝ Հ.Քյուրքչյանի անունով: Պարզ կառուցվածքի բառարան է. թուրքերեն յուրաքանչյուր գլխատառի դիմաց նշված է հայերեն մեկ, առանձին բառերի համար էլ՝ երկու և ավելի համարժեք: Բառարանը նաև պարունակում է քերականական տեղեկություններ թուրքերենի վերաբերյալ:

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԳԱՂՂԻԵՐԵՆ:- Վենետիկ: 1926.- 576 էջ:

Բառարանի հեղինակն անհայտ է. ներսի շապիկի վրա նշված է՝ ,, Աշխատասիրեց Գ.Հ.Գ.,, , որի ով լինելը մեզ նույնպես չհաջողվեց պարզել: Մանրատառ, երկսյունակ էջերով բառարան է, որը պարունակում է շուրջ 40 հազար բառահոդված: Նախորդ, այսօրինակ բառարաններից տարբերվում է իր ծավալությամբ, նաև բառերի բազմակողմանի բացատրությամբ:

Ավելի ընդարձակ և բազմակողմանի բացատրությամբ են ներկայացված հարադիրներն ու դարձվածները:

ԲԱՌԱՐԱՆ 1955 ԹՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՄՆՎԱՆՑԱՆԿԻ:- Եր.: 1956:- 42 էջ:

Սա ցենտրոյուզի պլանային բաժնի կողմից հրատարակված ապրանքային /սննդամթերք, կոշկեղեն, գալանտերեա, գործվածքեղեն, կահույք, գրականություն, զրենական պիտույքներ և այլն/ ցուցակ-ցանկ է, որի պարունակած ապրանքների վերաբերյալ տրված են մասնագիտական, տեսակային, որակական և այլ բնույթի տեղեկություններ:

ԲԱՌԱՐԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿԱՊԱԿԻՐՔԱՆԱՑ:

Հնագույն հրատարակություններից՝ ըստ երևույթին լույս տեսած 1749 թվականին: Ալ.Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում պահվող միակ օրինակը չունի տիտղոսաթերթ, հետևապես նրա հրատարակության տեղի, ժամանակի, հրատարակչի և այլնի մասին տեղեկություններ տալ հնարավոր չէ:

Բառարանը կազմված է հմուտ ու բանիմաց մարդու կողմից. այն ընդգրկում է աստվածաշնչի հին և նոր կտակարանների բոլոր հատուկ անունները՝ ընդարձակ մեկնաբանությամբ հանդերձ: Բոլոր էջերի վերևում նշված են նրանում ընդգրկված անունների առաջին երկու տառերը, որը հեշտացնում է բառարանից օգտվելը: Բառարանում, սակայն, շատ են համառոտագրությունները ու կրճատ բառաձևերը, որոնց ամբողջական ձևի ըմբռնումը շարքային ընթերցողի համար դժվար է: Բառարանն սկսվում է Աբրահամ/հայր ատծուն կամ կամք ատծուն/ և ավարտվում Ֆրանկոֆորգիա բառերով:

ԲԱՌԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ: - Կ.Պոլիս: 1881:- 635 էջ:

Սա, որն ըստ եղած կարծիքների վերագրվում է Մխիթարյան միաբան Նիկողայոս Ավգերյանի գրչին, արժեքավոր, մեծ ջանքերի գնով ստեղծված աշխատանք է: Բ.ն բառահոդվածներից բացի պարունակում է նաև բազմաթիվ ու բազմաբնույթ աղյուսակներ, նկարներ ու ցանկեր / տես էջ 589-635/:

Բառարանը առաջին անգամ հրատարակվել է 1879թ., իսկ երկրորդ անգամ՝ 1881-ին: Այն, ինչպես նշված է առաջաբանում, ,,... կը պարունակե Ամերիկայի և Եվրոպայի մեջ Հայերը գիտցեր քննող գիտնոց նորագույն հետազոտությունների արդյունքը,,:

ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆԵՐԵՆ ԵՎ ՕՏԱՐ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ: - Թիֆլիս: 1911-110 էջ:

Ուսումնական ձեռնարկի համարժեք գործ է. նրանում տրված են քերականական տեղեկություններ, բառահոդվածները նիրպայացված են ընդարձակ բացատրությամբ: Բուն լատինական դարձվածներից բացի բառարանն ընդգրկում է նաև այլ լեզուների, հատկապես հունարենի բազմաթիվ դարձվածները և այդ տիպի պատրաստի խոսքաձևեր: Վերջում տրված են հունական հռոմեական չափերի, դրամների /արծաթե, ոսկե, պղնձե/ և հատուկ անունների ցանկեր:

,,ԲԱՌՔ ՎԱՐԴԱՆ ԳՐՈՑ,, կամ ,,ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ՅԱԴԻՑ Ի ՎԱՐԴԱՆ ԳՐՈՑ,,:

Բառարանագիրը նպատակ է ունեցել տալ ոչ թե ,,Վարդա-

նանց պատմության,, բառապաշարը կամ նրանում եղած բոլոր ,,բժվարիմաց,, բառերը, այլ միայն պարսկերեն համարված բառերի քացատրությունը:

Բառարանի հրատարակության և պարունակած բառահոդվածների վերաբերյալ տեղեկություններ չկան:

ԲԱՐԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ /խմբ. Ի.Ս.Կունի, թարգմ. Ռ.Ավոյան/:- Եր.: 1985.- 455 էջ:

Բառարանը հսկայականություն է պարունակում, հետևապես այն կարող է նաև ուսումնական ծառայելի դեր խաղալ: Առհասարակ բոլոր հոդվածները ներկայացված են ընդարձակ և ծավալուն մեկնաբանությամբ: Վերջում տրված է,,Բառարանի,,հիմնական հոդվածների թեմատիկ տեղեկատու,, , որը հեշտացնում է նրանից օգտվելը:

ԲԱՐԱԵՎՅԱՆ ԽԻԴԱՐ. ,,ՄՇԱԿԻ,,ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1962:- 88 էջ:

Նման բառարանները մեր իրականության մեջ սակավ են, թեև դրանց կարիքը շատ է զգացվում: Այս բառարանը պարունակում է 1300 բառահոդված-նածկանուն՝ քաղված ,, Մշակ,, թերթից:Դրանք թերթին թղթակցած և գերազանցապես ցարական զրաքննությունից խուսափած մտավորականներ են, որոնք հասկանալի պատճառով կեղծել են իրենց իսկական անուն-ազգանունը:

ԲԱՐԱԵՎՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ.ՀԱՅԵՐԵՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ,ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ,ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1973.- XI +978 էջ:

Արդի հայերենի ամենածավալուն, մեր լեզվի բառապաշարը համեմատաբար բազմակողմանիորեն ընդգրկող ուշագրավ ուղղագրական-ուղղախոսական բառարանն է, որը պարունակում է ժամանակակից հայերենի բառագանձը՝ գրեթե ամբողջովին, ավելի քան 152 հազար բառ: Բառաքանակի այսօրինակ ,, առատությունը,, նաև պայմանավորված է այլ հանգամանքով. գրական հայերենում լայն գործածություն ունեցող բառերից բացի այստեղ տեղ են գտել նաև մեծ թվով բարբառային բառեր, հնաբանություններ և օտարաբանություններ:

ԲԱՐԵՎՅԱՆ ՇԱՏԼԵՆ. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Աղեքսանդրիա: 1951.- 696 էջ:

Ֆրանսերեն-հայերեն և, առհասարակ, հայերենի՝ օտար լեզուների հետ առնչվող ամենածավալուն, ընդարձակ ու Ոոխ բառարաններից է, որը բուն ընդհանուր մասից բացի ունի նաև աշխարհագրական, կենդանաբանական, բուսաբանական, մարդակազմական, բժշկական, ազգագրական, մշակութային, վարչա-իրավական, ռազմական և այլ բաժիններ, որտեղ ներկայացված են այդ

բնագավառին վերաբերող մասնագիտական տերմիններն ու հասկացությունները:

BEGUINOT AUGUSTO և P.NERSES DIRATZOJAN, CONTRIBUTO ALLE FLORA DALL ARMENIA : - Վիեննա: 1912.- 113 էջ;

Սա թեև բուսաբանական բնույթի քառալեզու-հանրահիշատակ է՝ լատինական անուններով, բայց և այնպես բավականաչափ տեղեկություններ է պարունակում նաև հայկական աշխարհագրական միջավայրի և դրա տարածքային բաժանումների վերաբերյալ:

Բառարանի 20-27 էջերն ընդգրկում են մասնագիտական ցանկեր, իսկ 28-113 էջերը՝ բուսանունների նկարագրական /անոտացված/ քառարանը: Իսկ վերջում, որպես հավելված, տրված են հայկական լեռնաշխարհում աճող բուսանունների կարևորների նկարները՝ թվով 12-ը:

ԲԵԴԵՎՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ. ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԼԵԶՎՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԽՈՌԱՐԱՆ ԼԱՏԻՆԵՐԵՆ,ԱՐԱԲԵՐԵՆ,ՀԱՅԵՐԵՆ,ԱՆԳԼԵՐԵՆ,ՖՐԱՆՍԵՐԵՆ,ԳԵՐՄԱՆԵՐԵՆ,ԻՏԱԼԵՐԵՆ, ԹՈՒՐՔԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ:- Գահիրե:1936.- 15 + 636 + 456 էջ:

Այս ծավալուն և ընդարձակ քառարանը պարունակում է յոթ առանձին լեզուներով բուսանունների քառացանկեր, որոնց պարունակած քառահոդվածների քանակը հասնում է 3657-ի/էջ 1-626/: Արաբերեն/լատիներեն տառադարձությամբ/ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն,թուրքերեն ցուցանիշները զբաղեցնում են 1-456 էջերը:

Գլխաբառերի համար, որպես զիտական-նոմենկլատուրային ընդունված ձև, նշված է տվյալ բուսանունի լատինական անվանումը:

ԲԵԴԻՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ. ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳԻՐՔ/ դպրոցական, համառոտ/: - Եր.: 1971.- 126 էջ:

Ուսումնական/դպրոցական/ համառոտ բառարան է, որը պարունակում է 1100 դարձված / իդիոմ/՝ հիմնականում քաղված միջնակարգ դպրոցի 1-8-րդ դասարանների մայրենի լեզվի և գրական ընթերցանության դասագրքերից: Ընդգրկված են նաև 4-8-րդ դասարանների արտադասարանական ընթերցանության նյութերում հանդիպող դարձվածներն ու այդ բնույթի արտահայտությունները:

ԲԵԿԶԱԴՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ,ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ. ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱ: - Եր.: 1962.- 203 էջ:

Ժյուղային-նոմենկլատուրայի լատիներեն-հայերեն անա-

տոմիական տերմինների բառարան է. պարունակում է վեց հազար բառահոդված, որոնք հաստատված են անատոմների փարիզյան 6-րդ միջազգային ֆեդերատիվ կոնգրեսի կողմից՝ 1955թ.հուլիսի 30-ին, իսկ հետագայում այդ ցանկը լրացվել և ամբողջացվել է անատոմների յոթերորդ միջազգային կոնգրեսի / Նյու-Յորք/ որոշմամբ ու նրա ցուցումների համապատասխան:

ԲԵՐՈՅԱՆ ՄԱՐՏԻՆ, ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ:- Պետերբուրգ: 1861.- 244 էջ:

Մինչև այս բառարանի ստեղծումը Մ.Բերոյանը կազմել էր հայոց լեզվի ռուսերեն դասագիրք / ,,Начальные основания Гайканского языка ,,/, որի հիման վրա էլ կազմեց վերոհիշյալ բառարանը: Նրանից ոչ մի օրինակ չի պահպանվել: Ցցկտուր տեղեկություններ կան Ե.Զարենցի անվան ԳԱԹ-ի Բերոյանի արխիվում պահպանված պատառիկներում, որոնցից հայտնի է դառնում, որ բառարանը բաղկացած է եղել երկու մեծադիր հատորից՝ առաջինը՝ 1550, իսկ երկրորդը՝ 1520 էջով: Այս ֆերատիպ բառարանը ընդգրկում է մինչև ГАДИТЬ բառահոդվածը:

ԲԺՇԿՅԱՆ ՀԻՆԱՅԻ, ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՐՈՒՑ ԵՐԵՎԵԼԻ ԱՐԱՆՑ:- Վենետիկ: 1950.- 966 էջ:

Հանրագիտական բնույթի բառարան է, որտեղ ամփոփված են աչքի ընկնող գործիչների / ,, երևելի արանց,,/ կենսագրությունը՝ նրանց մասին եղած հետաքրքիր տեղեկություններով հանդերձ:

Մ.Բժշկյանի բառարանը դրական իմաստով զգալիորեն տարբերվում է Մ.Թեոփելյանի նույնատիպ ,,Բառգրքից,, :

ԲԶՆԱՁԱՆԴԱՑԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ. ԲԱՌԳԻՐՔ Ի ԳԱՂՂԻԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ Ի ՀԱՅԵՐԷՆ;- Կ. Պոլիս: 1684.- 1298 + 6 էջ:

Ն.Բյուզանդացին բազմաթիվ բառարանների հեղինակ է. դրանց մեջ սա համարվում է լավագույնը, որը պարունակում է 50 հազար բառահոդված: Ուրեմն՝ այն աչքի է ընկնում նաև իր ծավալությամբ:

Բյուզանդացին հատկապես օգտվել է Է.Լիտրեի,, Dictionnaire de la langue française ,, բառարանից՝ նրա բառացանկին անընդհատ ավելացնելով հարյուրավոր նոր բառեր, որոնք մեկնաբանված են ստուգաբանորեն, հաճախ էլ՝ նաև ծագումնաբանորեն:

ԲՈՏՎԻՆՆԻԿ ՄԱՐԿ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ.ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ/Թարգ. Ս.Կարկաշարյան/:- Եր.: 1985.- 264 էջ:

Սա այս ընագավառի տերմինների ու հասկացությունների ընդգրկման առումով լավագույն բառարաններից է, թեև թարգմանությունը որոշ իմաստով անհաջող է, և կան զգալի թերություններ:

Բառարանն ընդգրկում է տասը հազարից ավել բառահոդված, որոնք վերաբերում են դիցաբանական ըմբռնումներին ու հասկացություններին՝ այս տերմինների ամենալայն իմաստով:

ԳԱԲԱՄՃՅԱՆ ՍԻՄՈՆ. ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ: - Կ.Պոլիս: 1910.- 7 + 1406 էջ:

Հեղինակի այս պատկերազարդ բառարանը, որն արժանացել է Իզմիրյանց գրական մրցանակին և աչքի է ընկնում բառանյութի առատությամբ ու ճոխությամբ, պարունակում է 60 հազար բառահոդված՝ ,, Բառք նախնեաց. նորաբանութիւնք.- Հավառակեան բառք. Հանրագիտական ծանոթութիւնք,, բաժիններով հանդերձ: Բառահոդվածների բացատրությունները տրված են աշխարհաբարով: Բառինները մեկնաբանված են առավել ընդարձակ ու բազմակողմանիորեն: Բառարանը նույնությամբ երրորդ անգամ վերահրատարակվել է 1953 թ., Բեյրութում:

ԳԱԲԻԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ. ԲԱՌԳԻՐՔ ~~ԾԵԲԱՍՏԱՑՈՅ~~ ԳԱՎԱՌԱԼԵԶՎԻ:- Երուսաղեմ: 1952.- 682 էջ:

Հայ գավառաբարբառների բառանյութը պարունակող ոչ բառարան է, որը տակավին ձեռագիր վիճակում 1905թ. արժանացել է Իզմիրյանց գրական մրցանակին / լույս է տեսել եամանու՝ամերիկյան համասեբաստահայ վերաշինաց միության ջանքերով ու նրա միջոցներով/: Բառարանի առաջաբանը գրել է Կյուրեղ Գաջիկյանը՝ հեղինակի որդին:

ԳԱԼԱՆՈՍ ԿՂԵՄԻՈՍ.ԲԱՌԳԻՐՔ ԱՄԵՆԱՅՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԻՑ ՀԵՅՈՑ ԵՎ ԼԱՏԻՆԱՑԱՎՈՑ:- Հռոմ: 1645.- 57 էջ:

Հայերեն և օտար լեզուներին առնչվող այս հնագույն բառարանը պարունակում է 1800 բառահոդված: Գլխաբառերը, որ հայերեն են, ներկայացված են նաև լատիներեն համապատասխան համարժեքներով: Բառարանի առաջին մեծ բաժինը պատկանում է հեղինակի հայտնի քերականությունը՝ ,, Գանձ արամնչեն լեզուի,, / 202 էջ/, որն իր հերթին բաղկացած է մի քանի բաժիններից:

ԳԱԼԷՊՅԱՆ ՊՈԼՈՍ.ԳՈՐԾՆԿԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՔՈՒՐՔԵՐԵՆԵ Ի ՀԱՅԵՐԵՆ:- Ս.Պոլիս: 1890.- 396 էջ:

Բառարանն ունի ,, Ի պետս ազգային վարժարանաց,, ցուցումը, որը նշանակում է, թե այն գիտա-ուսումնական ընույթ ունի:Պարունակում է 20հազար բառահոդված,որոնք վերաբերում են գիտամշակութային և հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներին: Պարսկերեն և արաբերեն բառերը տրված են ատղանիշերով: Բառերի դիմաց նաև կան քերականական նշումներ:

ԳԱԼՈՅԵԱՆ ԴԱՎԻԹ. ԴԻՑԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1966.- 151:

Բառարանագիրը նպատակ է ունեցել ի մի հավաքել դիցաբանական անվանումները և դրանք համապատասխան բացատրություն-մեկնաբանությամբ ներկայացնել հատկապես դպրոցականներին: Այդ ինդիրը հեղինակը մասնակիորեն է իրականացրել. Թույլ են տրվել նաև սխալներ: Բառահոդվածները հիմնականում քաղված են հունական աղբյուրներից:

ԳԱԼՅԱՆՅԱՆ ԱՄԲՐՈՍԻՈՍ.ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅ-ԳԱԼԼԻԵՐԵՆ: - Փարիզ: 1872.- 1039 էջ:

Սա բառարանի երկրորդ հրատարակությունն է, որ վերջին անգամ լույս է տեսել 100 տարի հետո՝ 1972-ին, Բեյրութում /առաջին անգամ հրատարակվել է 1861-ին՝ Փարիզում/: Պարունակում է 58 հազար բառահոդված: Առաջաբանում տրվում են նաև քերականական բնույթի տեղեկություններ, որոնք վերաբերում են ֆրանսերենի հոլովման համակարգին, հոգնակի ձևերի դրսևորումներին, ածականներին և այլ խոսքի մասերին:

ԳԱԼՓԱՅԱՆ ԱՄԲՐՈՍԻՈՍ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳՐՔՈՒՅԿԻ ՏԱՃԻԿ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ /ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ/: - Թեոդոսիա: 1864.- 191 էջ:

Բառարանն ընդգրկում է այնպիսի արտահայտություններ, որոնք առավելապես հանդիպում են առօրյա խոսակցության ժամանակ: Դրանք՝ այդ գլխաբառերը տաճկերեն հայատառ արտահայտություններ են՝ թարգմանված հայերեն: Ա.Գալֆայանի ,, Զրուցատրությունը,, կազմված է 72 բաժիններից, որոնք անվանված են կյանքի ու կենցաղի տարբեր անվանումներով /,,Ողջույն,բարև,, ,, Հարցմն և պատասխան,, , ,, նախաճաշիկ,, , ,, Տարվա եղանակներ,, և այլն/:

ԳԱԼՓԱՅԱՆ ԹՈՐԵՆ. ՀԱՆԳԱՐԱՆ ԿԱՄ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՆԳԱՑ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ:- Թեոդոսիա: 1862:- 312 էջ:

Սա հայերեն առաջին հանգարան-բառարանն է, որի նպատակը ռաղաչափական արվեստի և բանաստեղծական խոսքաչափերի հանգավոր-

ման պահանջների բացահայտումն ու հայ իրականության մեջ դրանց տարածումն ու կատարելագործումն է: Պարունակում է 37 հազար բառ, որոնց վերաբերյալ մեկնաբանություններից շատերը ընդարձակ ու բազմակողմանի են և գրավում են 40-50, նույնիսկ՝ 50-80 այունակ:

ԳԱՅԱՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ /ՄԽԻԹԱՐ ԳՈՆՋԱՑԻ/. ԲԱՌԱՐԱՆ-ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅ ԼԵԶՎԻ ՀՈՄԱՆԻՇՆԵՐՈՒՄ:- Գահիրե: 1938:- 543 էջ:

Այս բառարանը բաղկացած է չորս մասից՝ ,, Բարերու ըստ կարի ճշգրիտ մեկնաբանություններ,, , ,, Գիտական բառերի ճշգրտումներ,, , ,, Առատություն հոմանիշներու,, , ,, Ոճեր և ասություններ,, , որոնցից յուրաքանչյուրի համար բառարանագիրը նշել է դրա նպատակը:

Հ.Գայայանի ,, Բառարան-գանձարանը,, , որ արժեքավոր և ցայսօր աչքի ընկնող գործ է, պարունակում է 15 հազար բառահոդված:

ԳԱՆԹԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ.ԲԱՌԱՐԱՆ ԳԱՂԼԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՏԱՃԿԵՐԵՆ:- Վիեննա: 1885:- 1572 էջ:

Այս ընդարձակածավալ բառարանը, որ պարունակում է 31 հազար բառահոդված, հրատարակվել է երկու անգամ՝ 1885-ին և 1912-ին / վերջինս՝ 1238 էջ/:

Հեղինակն իր Ֆրանսերենի մասին տվյալները քաղել է Պոժանի գործնական և Լիդրեի ընդարձակ բառարաններից: Հայերենի վերաբերյալ տեղեկությունների համար աղբյուր են ծառայել, իր կարծիքով, հատկապես լավագույնները՝ Ավգերյանի ու Էմինյանի և, առավելապես, Ն.Բյուզանդացու ,,ժողովրդական և ընտրելագոյն բառարանը,,:

ԳԱՆԹԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ. ԲԱՌԱՐԱՆ ԻՏԱԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ: - Վիեննա: 1908.-935էջ:

Ծոխ ու հարուստ բառարան է. պարունակում է 45 հազար բառահոդված, որոնք բացատրված են ըստ ամենայնի բազմակողմանիորեն, գիտական պատշաճ չափանիշներով: Յուրաքանչյուր գլխաբառի դիմաց նշված են հայերենի բոլոր համարժեք ձևերը.

Ի դեպ մի թյուրիմացության առիթով հարկ ենք համարում նշել մի փաստ՝ այն ճշտելու մտահոգությամբ. այս բառարանից ԳԱ Ֆունդամենտալ գրադարանում կա երկու օրինակ՝ մեկը առանց տիտղոսաթերթի, որի վրա ինչ-որ մեկը, որպես հեղինակ, անտեղյակությամբ գրել է՝ Մանվելքաշյունի: Գ.Գասպարյանը երկու բառարաններից մեկը վերագրել է Ս. Գանթարյա-

նին, մյուսը՝ Մ.Ջաջունուն, որը, հայտնի է, իտալերեն-հայերեն բառարան չի կազմել/ Տես Գ.Գասպարյան, ,, Հայ բառարանագրության պատմություն,, , ցանկ նո. 89 և էջ 526/:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ԹՈՒՐՔԵՐԵՆԷ Ի ՀԱՅԵՐԷՆ:- Կ.Պոլիս: 1899.- 176 էջ:

Այս բառարանը պարունակում է օսմանյան գրականության մեջ հաճախակի գործածվող թուրքերեն, արաբերեն և պարսկերեն բառերն ու ոսները, որոնք քաղված են թե՛ սկզբնաղբյուրներից և թե՛ համապատասխան բառարաններից: Դրանց ընդհանուր թիվը կազմում է 7000 բառ, որոնք ներկայացված են հայատառ՝ հայերեն հնչմապատասխան բացատրություններով հանդերձ: Ս.Գասպարյանի սույն բառարանը ոմանք վերագրել են Պ.Հակոբյանին, որ սխալ է:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ.ԲԱՌԱՐԱՆ ԹԱՂԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ/բարբառային և օտար բառեր/: - Եր.: 1947.- 60 էջ:

Պարունակում է հայ մեծ լուսավորչի ստեղծագործություններում գործածված երեք հազար բարբառային և օտար բառ ու բառակապակցություն: Բացահայտորեն օտար գիտակցվող բառերի դիմաց նշվում են, թե որ լեզվի սեփականությունն են դրանք: Մրայն Քանարեռի խուսվածքում գործածվող բառերը նշված են աստղանիշով: Վերոհիշյալ 3000 բառերից 2500-ը գործածված են ,, Վերք Հայաստանի,, պատմավեպում:

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌԱՖՖԻ,ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ,ՇԻՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ԵՆԳԻԶԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ, ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ,ՍԼԱՅԱՆ ՅՈՒՐԻ, ԽԱՊԻՐՅԱՆ ՆՈՂԱՐ,ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ. ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ /Տերմինաբանական ձեռնարկ/:- Եր.: 1982.- 250 էջ:

Ընդգրկում է ռադիոէլեկտրոնիկայի և հարակից գիտությունների բնագավառի մոտ 20 հազար տերմին ու տերմինակապակցություն և դրանց մոտիկ հասկացություններ, որոնք գիտության ու տեխնիկայի մյուս բոլոր բնագավառների տերմինների համեմատությամբ ավելի շատ են ու բազմազան:

ՇԱՏԻՄՅԱՆ ՍԱՐԳԻՍ. ԲԱՌԴԻՐՋ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՃԵՐՈՒ: - Բեյրութ: 1964.- 135 էջ:

Բառարանի տիտղոսաթերթի վրա նշված է. ,, Թարգմանաբար պատրաստեց Սարգիս Գատեմյան,, , որ նշանակում է, թե նրա պարունակությունը, որ մոտ հազար բառահոդված է, հիմնականում թարգմանություն է Ֆրանսերենից: Դրանք պատրաստի խոսքաձևեր, ոճեր, դարձվածային արտահայտություններ են:

Հավելվածում հայերեն թարգմանությամբ տրված է ֆրանսերենի 64 առակ:

ԳԱՐԱՆՖԻԼԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ. ԲԱՌԱՐԱՆ ՅՈՒՍԱՐԱՆՆԷ-ՀԱՅԵՐԷՆ:- Սթենք: 1930.- 333 էջ:

Բառարանի առաջին էջում հեղինակի վաղամեռիկ զուգակիցի էտի Գարանֆիլյանի դիմանկարն է՝ ,, Յուշարձան,, ծոնորդ-բառատողով: Սրան հաջորդում է ,, Համառոտությունը,, , այս ,,Յառաջաբանը,,: Բառահոդվածները գերազանցապես առօրյա գործածության բառեր ու արտահայտություններ են, որոնց դիմաց նշված են նաև քերականական իրակությունները: Բառարանում նկատելի են սխալներ ու վրիպումներ:

CARRIER AUGUST. UN ANCIEN GLOSSAIRE LATIN-ARMENIEN :- Փարիզ: 1886.- 19 էջ:

Սա փոքրածավալ բառացանկ է, ուր տրված են կենցաղային բնույթի, առօրյա գործածության բառեր ու տերմիններ՝ ներկայացված ֆրանսերեն, հայատառ ֆրանսերեն և հայերեն՝ թեմատիկ խմբերով, որոնցում ընդգրկված է 90 բառ: Բառացուցակը համարակալված է թվահամարներով:

ԳԵՎՈՐԳ ԴՊԻՐ ՊԱԼԱՏՑԻ / ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/. ԲԱՌԱՐԱՆ ՊԱՐԵԿԵՐՆԱ:- Կ.Պոլիս: 1826.- 98 + 715 էջ:

Պարունակում է 30 հազար բառահոդված և պարսկերենի վերաբերյալ քերականական տեղեկություններ: Բառարանում յուրաքանչյուր բառ թարգմանված է՝ հաշվի առնելով նրա բնագրային բոլոր դրսևորումներն ու կիրառությունները: Հազարաթիվ բառերի իմաստը մեկնաբանված է հայերենի համապատասխան մեկ համարժեքով կամ նույնատիպ բառակապակցությամբ: Սա արժեքավոր գործ է և ժամանակին արժանացել է մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանի բարձր գնահատականին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ.ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1978.- 375 էջ:

Բառարանն ընդգրկում է 12 հազար բառ և բառաձև: Նրանում ամփոփված են հայերենի գրեթե բոլոր համանունները՝ քաղված հայերեն հին ու նոր բառարաններից, ինչպես նաև դասական և ժամանակակից հայ գրողների երկերից: Բառարանը պարունակում է հետևյալ կարգի համանուններ՝ բառային, դարձվածային, բառաբերականական, նույնագրային, նույնահնչյունային, որոնց վերաբերյալ կան համապատասխան

բացատրություններ՝ քնարոշ օրինակներով հանդերձ:

ՅՈՎՀՈՐԴՅԱՆ ԿԱՐԻՆ. ԱՌՁԵՌՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ:- Բեյրութ: 1984.- 10 + 1336 էջ:

Մեծածավալ առձեռն բացատրական բառարան է՝ նախատեսված սովորողների համար: Բառարանը պարունակում է 27 հազար բառահոդված և բաղկացած է երկու մասից: Առաջինում ներկայացված են բառերի արմատական, հիմնական ձևերը, իսկ երկրորդում, որը իրականում հավելված է, զետեղված են ածանցավոր ձևերը / հեղինակը դա անվանել է ,, Մասնիկներու բաժին,,/:

Բառարանին կցված է նաև մեկ այլ բաժին, որը անվանված է,,Հատուկ և դիցաբանական անուններ,,:

ԳՈՆՏԱՐՅԱՆ ՍՆԱՆԻՍ. ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ-ԳԱՂՂԻԵՐԵՆ:- Վենետիկ: 1914: - 447 էջ:

Այս բառարանը ևս երկրորդ անգամ հրատարակվել է 1934-ին: Թե՛ սա և թե՛ առաջինը, թեև ծավալով նույնպես փոքր են, բայց և այնպես պարունակում են 10 հազար 500 բառահոդված: Սովորական ընույթի բացատրական բառարան է, որտեղ հայերեն գլխաբառերը բացատրված են Ֆրանսերենի մեկ կամ երկու, հատուկենտ դեպքերում՝ նաև երեք-չորս համարժեքների նշումով: Քանի որ բառարանը գործնական ընույթի է, հետևապես նկատելի են նրա թե՛ պակասությունը և թե՛ թերությունները:

ԳՈՆՏԱՐՅԱՆ ԱՆԱՆԻՍ.ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:-Վենետիկ: 1914.- 710 էջ:

Թեև էջաքանակով մեծ է և պարունակում է 10 հազար բառահոդված, սակայն ֆորմատով չափազանց փոքր է՝ 7,5 x 5,5 սմ ծավալի, իրոք որ գրպանի բառարան: Ֆրանսերեն գլխաբառերի մեծ մասը բացատրված են մեկ, հազվագյուտ էլ՝ նաև երկու համարժեքով:

Բառարանը պարունակում է նաև քերականական տեղեկություններ: Դրանց մեծ մասը վերաբերում է Ֆրանսերենի անկանոն բայերին:

Այս բառարանի երկրորդ հրատարակությունը իրականացվեց 1934թ.:

ԳՈՆՏԱՐՅԱՆ ԱՆԱՆԻՍ. ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ -ԻՏԱԼԵՐԵՆ ԵՎ ԻՏԱԼԵՐԵՆ ՀԱՅԵՐԵՆ:- Վենետիկ: 1922.- առաջինը՝ 603 էջ:

Սրանք երկու առանձին բառարաններ են, որոնք սեղ չհաջողվեց հայտնաբերել հանրապետության որևէ գրադարանում և Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում: Այդ պատճառով էլ թե՛ մեկը և թե՛ մյուսը հիշատակում ենք առանց ընութագրման:

ԳՐԳԵՍՐՅԱՆ ՀԱԿՈԲ,ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԱ.ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1982.- 408 էջ:

Սա հանրագիտական բնույթի տեղեկատու-բառարան է, որը ,, հիմնականում պարունակում է միջնակարգ դպրոցի տնտեսական աշխարհագրության դասընթացում գործածվող տերմիններն ու հասկացությունները,, / Տես ,,Առաջաբանը,,/:

Բառարանը պարունակում է 2000 բառահոդվածներ-տերմին, որոնցից շատերը փոխառյալ են՝ սեծ մասը լատիներենից և հունարենից:

Զափազանց հարուստ ու օգտակար է բառարանի հղումատեղագրությունների ցանկը, որը բազմակողմանի տվյալներ է պարունակում աշխարհի երկրների տարածքի, բնակչության, դրամական միավորների ու այլնի վերաբերյալ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ,ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՀԱԿ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1979.- 339 էջ:

Այս բառարանը ավելի հավառոա լույս է տեսել 1977-ին: Սա ավելի ընդարձակ, վերամշակված ու լրացված երկրորդ հրատարակությունն է, որը պարունակում է Ֆիզիոլոգիական գիտության բնագավառի 2700 առավել գործածական տերմիններ ու հասկացություններ: Գրեթե բոլոր բառահոդվածները ներկայացված են ընդարձակ բացատրությամբ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ. ԲԱՌԵՐ ԵՎ ԲՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԹՐ ԼԵԶՎԵՐ:- Կ.Պոլիս: 1870.- 47 էջ:

Սա ութ լեզվով՝ տաճկերեն, հայերեն,ռուսերեն,հունարեն, Ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, անգլերեն փոքրածավալ բացատրական լեռարան է, որտեղ տաճկերեն գլխաբառերի վերաբերյալ վերը հիշատակված բոլոր լեզուներով տրվում են համապատասխան բացատրություններ:

ԳՐՈ ԳՐԻԳՈՐ.ՆԵՎՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ:- Եր.: 1936.- 81 էջ:

Սա իրականում առանձին, ինքնուրույն բառարան չէ, այլ պրոֆ. Մ.Հ.Աստվածատուրովի ,, Ներվային հիվանդություններ,, ձեռնարկի հավելվածը՝ որպես գիտության այդ բնագավառի ռուս-հայերեն տերմին-հասկացություններ-

րի ցանկ: Թեև բառացանկը ռուս- հայերեն է, սակայն շատ բառահոդվածներ ներկայացված են լատիներեն ու հայերեն կամ էլ լատիներեն-ռուսերեն - հայերեն համարժեքներով:

Բառարանն աչքի է ընկնում բազմաթիվ առավելություններով և բժշկության այդ ընագավառի տերմինաբանության ամբողջական ընդգրկմամբ:

ԳՐԳՈՒՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԳՅՈՂԼԻԵՐԵՆԵ Ի ՀԱՅԵՐԵՆ:- 442 էջ:

ՀՍՍՀ ԳԱ Ֆունդամենտալ գրադարանում է գտնվում այս բառարանի սիակ օրինակը՝ այն էլ քրքրված վիճակում: Չկան առաջին էջերը, առաջաբանը, տիտղոսաթերթը, հետևապես հեղինակի և հրատարակչական մանրամասների վերաբերյալ հնարավոր չէ տեղեկություններ հայտնել: Մեզ թույլ ենք տալիս հայտարարելու, որ սա, ամենայն հավանականությամբ, Ե.Տեմիրճիպաշյանի 1888թ. Կ.Պոլսում հրատարակված Ֆրանսերեն-հայերեն բառարանն է:

ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՑՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ / Առօրյա զրուցատրության օրինակներով/: Նյու-Յորք: 1917.- 121 էջ:

Բառարանի հեղինակը լրիվ անուն-ազգանունով չի գրված. անվանաթերթի վրա նշված է՝ կազմեց Ա.Մ.: Թեմատիկ բնույթի բառարան է՝ մի քանի բաժիններով. ,, Գրերի ինչում,, , ,, Համր գրեր,, , ,, Հոդ,, և այլն: Տեղեկություններ է պարունակում նաև Ֆրանսերենի քանակական թվականների վերաբերյալ, որոնց դիմաց նշված են դրանց հայերեն համարժեքները: Ունի նաև ,, Զինվորներու համար,, բաժինը, որն ընդգրկում է ,, Ծովուն վրա,, , ,,Պատերազմ-արշավանք,, և այլ ենթաբաժինները:

ԳՈՐՅԵԵՎԻՉԻ ՄԵՆՐԻԿ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ՝ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ: - Գահիրե: 1972.- 544 էջ:

Բաղկացած է մեկ հիմնական, ծավալուն և մի քանի հարակից, հավելվածային բաժիններից: Առաջինն / Հայերեն-անգլերեն բառարանը/ ընդգրկում է 3-438 էջերը: 439-544 էջերը հատկացված են հետևյալ բաժիններին. ,, Այր մարդոց անուններ,, / էջ 439-443/, ,, Կանանց անուններ,, / էջ 443-446/, ինչպես նաև մասնագիտական հավելված բառացանկեր. առևտրական / էջ 447-743/, զինվորական /էջ 480-508/, ցամաքային ուժերի բաժանումներ / էջ 509 / , օդային աստիճանավորում, ծովային աստիճանավորում / էջ 510/, իրավագիտական / էջ 511-531/, Ճարտարապետական / էջ 532-538/,թան-

կագին և զանազան և գեղեցիկ բարեր / էջ 539-540/, պատերազմական, առևտրական զանազան տեսակի նավեր / էջ 541-544/:

Հայերեն գլխաբառերից յուրաքանչյուրի դիմաց նշված են անգլերենի մի քանի համարժեքներ: Ծոխ ու ընտիր բառարան է՝ կազմված մեծ հոգածությամբ ու խնամքով:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՄԵՍՐՈՊ.ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԷ - ՀԱՅԵՐԵՆ:-Գահիրե: 1961.- 1416 էջ:

Պատկերազարդ,ստվարածավալ բառարան է և իր կառուցվածքով, սկզբունքներով ու նպատակներով տարբերվում է հեղինակի մյուս, ինչպես նաև հայերեն-անգլերեն նույնպես ընդարձակ համարված բառարանից: Պարունակում է ահռելի բառազանձ՝ 100 հազար բառահոդված, որոնց բացատրությունները ավելի դյուրին են ընկալվում: Բառարանը կազմված է մի քանի թեմատիկ-հավելվածային բաժնից, որոնք մասնագիտական բնույթի են: Դրանցից յուրաքանչյուրը կարելի է դիտել որպես առանձին մասնագիտական բառարան: Այդ բաժիններն են.

1. Առևտրական.- Պարունակում է 2000 բառահոդված:
2. Բժշկական.- Պարունակում է 4000 բառահոդված:
3. Երաժշտական.- Պարունակում է 850 բառահոդված:
4. Ջինվորական.- Պարունակում է 3000 բառահոդված:
5. Խաստասիրական.- Պարունակում է 1300 բառահոդված:
6. Իրավագիտական.- Պարունակում է 2500 բառահոդված:
7. Ճարտարապետական.- Պարունակում է 1690 բառահոդված:
8. Հատկաբանական.- Պարունակում է 1000 բառահոդված:
9. Գենդանաբանական.- Պարունակում է 1000 բառահոդված:

Սրանցից բացի նաև ընդգրկում է 650 հատուկ և 400 դիցաբանական անուններ:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՄԵՍՐՈՊ. ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ:- Գահիրե: 1158 էջ:

Սա ևս, ինչպես վկայում է էջաքանակը, ծավալուն ու ծոխ բառարան է. պարունակում է 70 հազար բառահոդված,որոնց հայթայթման վրա հեղինակը ծախսել է ավելի քան 20 տարի: Բառարանը հատկապես աչքի է ընկնում դարձվածների ու նորակերտ բառերի առատությամբ:

Հայերեն բառահոդվածների դիմաց նշված են անգլերենի մի քանի համարժեքներ: Բառարանը ավելի քան ծոխ ու հարուստ ներկայացնելու նպատակով բառարանագիրը աշխատել է առանձին

քառեր տրոհելով՝ դրանց դիմաց նշել մի քանի իմաստներ, ոճեր ու դարձվածներ:

ԳՈՒՅՐԽԱՆՅԱՆ ՄԵՍՐՈՊ. ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԿԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱԾՆԵՐՈՒ:- Գահիրե: 1969.- 664 էջ:

Այս քառարանը հսկայական ջանքերի գնով ստեղծված գործ է, և պատահական չէ, որ հեղինակը, որպես քնարան, դրել է Ժ.Պ.Աքալիկրի հայտնի խոսքերը. ,, Եթե որևէ դատավոր խիստ պահիժ է կայսենում սեկին, թող դատապարտի նրան քառարան հորինելու,,: Բառարանը կազմված է երկու մասից. առաջինը Ճ ,, A Comprehensive dictionary of idioms English-Armenian ,,/ ընդգրկում է անգլերենին բնորոշ հատկաբանական քառերն ու արտահայտությունները / իդիոմները/, իսկ երկրորդը /American idioms / ընդգրկում է անգլերենին բնորոշ ասացվածքներ և այդ բնույթի խոսքեր:

ԳՈՒՅՐԽԱՆՅԱՆ ՄԵՍՐՈՊ. ՕՏԱՐԱԼԵԶՎԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Կահիրե: 1979. - 293 էջ:

Այս արժեքավոր գործը քառալեզվյա / անգլերեն, Ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն/ քառարան է, որտեղ անգլերեն գլխաբառերի դիմաց Ֆրանսերեն, հայերեն, տաՕկերեն հաջորդականությամբ տրված են համապատասխան բացատրություններ:

Այսպես նաև բոլոր գլխաբառերը, որոնց թիվը հասնում է 4000-ի:

Ծան.- Մ.ԳուլյումՕյանի քառարաններից մի քանիսը /,,Անգլերեն-Ֆրանսերեն-հայերեն-թուրքերեն իրավաբանական քառարան,, և ,, Concise Slang Dictionary English- Armenian ,,/ ցայսօր տակավին անտիպ են:

ԳՈՒՇՅԱԿՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, ԽՆԴՐՈՒՆԻ ՏԻԳՐԱՆ. ԱՐԴԻ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Բեյրութ: 1970.- 1363 էջ:

Սա հայ քառարանագրության գլուխ-գործոցներից է, երկու տաղանդավոր մտավորականների երկարամյա գործունեության ու նրանց վաստակի դափնեպսակը, որն իր մեջ ամփոփվում է երկու քառարան և պարունակում է ավելի քան 56 հազար քառահոդված՝ 40 հազարը / 1-ին մաս/՝ անգլերեն, իսկ 26 հազարը / 2-րդ մաս/՝ հայերեն, որոնք աչքի են ընկնում գիտական ընդարձակ բացատրություններով և քառիմաստների լիարժեք մեկնաբանություններով: Բառարանն ընդգրկում է հարուստ ու բազմազան ոճեր ու պատրաստի

խոսքաձևեր:

ԴԱՂԲԱՇՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ:- Թիֆլիս: 1911.- 737 էջ:

Այս բառարանը հաջորդել է հեղինակի մեկ այլ՝ ,, Ռուս-հայերեն բառարանին,, , որից այստեղ է փոխանցվել զգալի թվով ոճեր ու դարձվածային արտահայտությունները:

Բառարանի բառակազմությունը զուտ այբբենական է: Ռուսերեն թարգմանություններում տրված են բայի թե՛ անկատալ և թե՛ կատարյալ ձևերը, ինչպես նաև տվյալ բայարմատից կազմված բայանուն գոյականները: Պարունակում է 70 հազար բառ և 20 հազար ոճեր, դարձվածներ, առած-ասացվածքներ և պատրաստի այլ խոսքաձևեր:

ԴԱՂԲԱՇՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ: - Թիֆլիս: 1906.- 12 1221+4 էջ:

Այս բառարանը երկրորդ անգամ հրատարակվել է 1926թ. դարձյալ Թիֆլիսում, որը, սակայն, թերատիպ է / պարունակում է մինչև ДИАЛИСТИЧНЫЙ բառը/:

Ի տարբերություն մնացած բառարանների, կազմված է բնային սիստեմով: Բառահոդվածների բացատրությունները տրված են չափազանց սեղմ ու համառոտ: Բառարանը պարունակում է առաջաբան ու վերջաբան և 125 հազար բառահոդված / խոսքը վերաբերում է առաջին հրատարակությանը/:

ԴԱՎԻԹ-ԲԵԿ ՄԵԼԻՔ/ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ/. ԳՐԱՄԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ: -Փարիզ: 1927.- 432 էջ:

Բառարանն ստեղծված է որպես օգնություն այն 50հազար հայերին, որոնք ,,ապաստան գտած են Ֆրանսիայի զանազան նահանգներու մեջ,,: Հեղինակը նպատակ է ունեցել ստեղծելու ,, Ո՛չ գիտական և ո՛չ էլ լիակատար բառգիրք,, , այլ ամենագործածական բառերի մի մեծ խումբ, մի ընդարձակ բառացանկ, որից կարող են օգտվել օտար միջավայրում ապրող Ֆրանսահայերը: Բառարանը պարունակում է հնչյունաբանական և քերականական նախագիտելիքներ, լեզվական մի շարք կանոններ:

ԴԱՐԲԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ. ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԱԲԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Գահիրե: 1896.-226էջ:

Սա արաբերենին առնչվող հայերեն առաջին բառարանն է, որը պարունակում է 4000 բառահոդված և հետապնդում է ուսուցողական-գործնական նպատակ: Արաբերեն բառերը ևս հայատառ են: Օրինակ՝ աբեթ-սուֆան,աղեղ-բահիզ,

ազգ-թամմա, բառարան-ավուս և այլն: Բառարանը նաև պարունակում է որոշ խոսակցական արտահայտություններ, առօրյա գործածական ոճեր ու պատրաստի այլ խոսքաձևեր:

ԴԱՐՊԱՅԵԱՆ ՎԱՀՐԱՄ.ԵՐԱՅՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1975.- 59 էջ:

Բառարանը, որ ստեղծված է զուտ ուսուցողական/ուսումնական/ նպատակով, պարունակում է երաժշտական գրականության մեջ օգտագործվող տերմինների միայն մի մասը /հեղինակի արտահայտությամբ՝ ,, մի զգալի մասը,,/: Հեղինակը գերադասել է նախ տալ իտալերեն տերմինները, հետո նրանց արտասանությունն ու հայերեն թարգմանությունը, այնուհետև դրանց ռուսերեն նշանակությունը: Վերջում ավելացված է ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով տերմինների փոքրածավալ երկու հավելված՝ հայերեն և ռուսերեն թարգմանությամբ:

ԴՋՆԻՌՆԻ ԴԱՆԻԵԼ.ՀԱՅ ԿԵՐԳԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ/համառոտ բառարան/:- Եր.: 1977.- 519 էջ:

Կենսագրական բառարան է, որը պարունակում է 1000-ից ավելի բառահոդված: Բառարանի փաստական նյութի հայթայթման աշխատանքները տևել են շուրջ 50 տարի: Հեղինակը մանրամասն տեղեկություններով / ծննդյան թիվը, ծննդավայրը, մասնագիտությունը, գործունեությունը, մեր արվեստի մեջ ունեցած տեղն ու դիրքը և այլն/ բնութագրում է յուրաքանչյուր արվեստագետի /Տես, օրինակ՝ Բելուտովա- Գաբունիա Վառվառա -Դավիթ.- գեղանկարիչ կամ Մազմանյան Միքայել Դավթի, Թերլեմեզյան Փանոս Պողոսի և այլն/:

DICTIONNAIRE HISTORIQUE, GEOGRAPHIQUE, PHILOLOGIQUE ET CRITIQUE POUR SERVIR D'ANNOTATION A L'HISTOIRE D'ARMENIE :- Փարիզ:-210 էջ:

Սա անոտացված բառացանկ է, ավելի ճիշտ՝ պատմահայր Խորենացու ,,Հայոց պատմության,, անվանացանկը, որի յուրաքանչյուր բառահոդվածը բացատրված է բազմակողմանիորեն ,,շափազանց ընդարձակ: Հատկապես ծավալուն են պատմական տեղանունների և հարևան ժողովուրդների մասին բառահոդվածները:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Բաքու: 1928.- 55 էջ:

Սա փոքրիկ բառագրքույկ է, որը ժամանակին Ադր. ՍՍՀ ,,ուսժողկոմատի ազգային փոքրամասնությունների խորհրդի կողմից հանձնարարվել է որպես օժանդակ ձեռնարկ՝ առաջին աստիճանի դպրոցների սովորողների համար:

Բառարանը պարունակում է 1200 շատ, որոնցից շատերի իմաստները թերի կամ սխալ են բացատրված:

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԿԱՐՈ.ԱՆՎԱՆԱԳԻՐՔ:- Եր.: 1981.- 161 էջ:

Այսօրինակ բառարանի նախատիպը / ավելի ընդարձակ ու կատարյալ/ մեծանուն լեզվաբան և բառարանագիր Հ. Աջառյանի ,, Հայոց անձնանունների բառարանն ,,է:

,, Անվանագիրքը,, պարունակում է 1200 իգական և արական անուն, որոնց մոտ կես մասը, ինչպես վկայում է հեղինակը, մուտք է գործել վերջին հարյուրամյակի ընթացքում, հատկապես 20-ական թվականներից հետո, որոնք, հասկանալի պատճառով, տեղ չեն գտել ,, Հայոց անձնանունների բառարանում,,:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1953.- 160 էջ:

Նկարագրող բառարան է. պարունակում է համաշխարհային, ռուսական, հայկական և այլ ժողովուրդների գուսանական, ժողովրդական, էստրադային երաժշտության բնագավառին, երաժշտական գործիքներին, երաժշտության պատմությանը, երաժիշտ-կատարողներին նվիրված 500 բառահոդված: Բառարանում տեղ են գտել նաև այս բնագավառին վերաբերող օտար բառեր ու տերմիններ:

ԵՐԱՆ Հ.Ա. ՆՈՐ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԿԱՄ ԳՐԱՆԻԴ ԸՆԿԵՐԸ / անգլերեն-հայերեն/: - Բոստոն: 1906.- 383 էջ:

Բառարանն սկսվում է հատառոտ նախաբանով, որին հաջորդում են ,, Անգլերենի ալֆաբեթը,, և ,, Բանալի նոր գրպանի բառարանի,, հավելվածները: Բուն բառարանագրական մասին հաջորդող վերջին 50 էջերը պարունակում են 15 հնչյաբաժնից բաղկացած տեղեկություններ՝ աշխարհագրականից սկսած բերելանվանով վերջացրած:

,, Նոր գրպանի բառարանն,, ընդգրկում է 15 հազար բառահոդված:

ԵՐԱՆ Հ.Ա. ՆՈՐ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԿԱՄ ԳՐՊԱՆԻԴ ԸՆԿԵՐԸ/հայերեն-անգլերեն/:- Բոստոն: 1906.- 240 +10 էջ:

Սա և նախորդը, թեև առանձին բառարաններ են, սակայն ամփոփված են մեկ գրքում: Երկուսն էլ անթվագիր են. դրանց հրատարակության տարեթվի մասին տեղեկացել ենք այլ աղբյուրներից:

Գլխաբառերը ներկայացված են իրենց բոլոր հնարավոր / բարդ և ածանցավոր/ կազմություններով:

Պարունակում է 10 հազար գլխաբառ:

ԾԻՄ Ի.Ա. ՊԱՏԵՐԱԶՄԱՐԴ ՋՐՈՒՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ/ 4-րդ հրատ./:- Բոստոն: 1926.- 351 էջ.

Ձափազանց արժեքավոր գործ է և աչքի է ընկնում իր բազմակողմանի օգտակարությամբ, առավելապես անգլերենը սովորելու արժանիքով:

Հեղինակը մեծ ուշադրություն է նվիրել հատկապես անգլերենի արտասանությանը / բառերը ներված են և գրության, և արտասանական ձևով/: Բառարանը նաև ունի ,, Քերականական գիտելիքներ, /էջ 241-300/, ,, Նամակագրություն,, / էջ 301-351/ և ,, Հարևոր գիտելիքներ,, / էջ 352-360/ բաժինները:

ՍՐԱՊՅԱՆ ՍԻՄՈՆ. ՊԱՏԵՐԱԶՄԱՐԴ ԲԱՌԱԳԻՐՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆՑ:- Վենետիկ:- 1960.- էջ 835:

Սա Ֆրանսերեն-հայերեն /Ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն, հայերեն-Ֆրանսերեն, ռուսերեն-հայերեն-Ֆրանսերեն/ հանրագիտական-գործնական բնույթի բառարան է, ուր ամփոփված 4 հազար բառահոդվածները խաշնարածության, հողագործության, անասնապահության և գիտության զրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ պարունակում են բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ, որոնց բացատրությունները տրված են հայերեն և ռուսերեն: Բառարանը պարունակում է բազմաթիվ նորակերտ բառեր, որոնք չկան նախորդ բառարաններում:

ԵՐԵՑՓՈԽՅԱՆՑ ԿԱԲՐԻԵԼ. ԲԱՌԱՐԱՆ Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ: 1-ին հրատ.- Թիֆլիս: 1854.- 584 էջ: 2-րդ հրատ.:- Թիֆլիս: 1876:- 922 էջ:

Հեղինակը նախատեսել էր իր բառարանում ամփոփել հավաքած շուրջ 125 հազար բառահոդվածը: Սակայն հնարավորություն չունենալով իրականացնել իր մտադրությունը, նա բառարանը հրատարակել է 45 հազար բառահոդվածով: Այս բառարանը ժամանակին երևույթ էր, այդ պատճառով էլ Ալ.Շահազիզյանի ջանքերով հրատարակվում է երկրորդ անգամ / 1876թ./:

ՋԱՐԴԱՆԱՆՑ ԼԵՎԻԴԻԱ. ԷՍՊԵՐԱՆՏՈ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ: - Փարիզ: 1912:- 51 էջ:

Սա հաջորդել է հեղինակի 1911թ. լույս տեսած ,,Ընդհանուր լեզու էսպերանտո,, աշխատությանը, որտեղ վերլուծված են այդ լեզվի քերականության և հնչյունաբանության որոշ հարցեր: Պարունակում է 2600 բառահոդվածներ, որոնք թարգմանված են արևելահայերենով, իսկ վարժությունների

բառահոդվածները՝ արևմտահայերենով:

ЗЕНИНСКИЙ СТЕПАН. ОБЪЯСНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ ТАТАРСКИХ,ГРУЗИНСКИХ И АРМЯНСКИХ СЛОВ (ВОШЕДШИХ В МАТЕРИАЛ ДЛЯ ИЗУЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО БЫТА ГОСУДАРСТВЕННЫХ КРЕСТЬЯН ЗАКАВКАЗСКОГО КРАЯ).. Тифлис.1898.-6+165 с.

Բառարանի 113-139 էջերը ընդգրկում են հայերեն բառերը, որոնց թիվը հասնում է 350-ի, իսկ ամբողջ բառարանը պարունակում է 2000 բառահոդված, որոնք ամփոփված են տարբեր բաժիններով: Դրանց միջև համամասնություն չկա: Առհասարակ այս բառագրքույկը որևէ էական հետք չթողեց մեր բառարանագրության պատմության մեջ:

ՋՈՐԱՅԱՆ ՋՈՐԻԿ,ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՅՆԱՓԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Երևան: 1949:- 100 էջ:

Սա այս բառարանի առաջին գրքույկն է /A-Activity բառահոդվածով/: Ձափազանց հարուստ բառարան է. պարունակում է 120 հազար բառ և 12 հազար ոմ ու ոմական արտահայտություն, որոնք ,, անգլերենի ուղն ու ծուծը կկազմեն,, , ինչպես նշում է հեղինակը: Բառարանն առավելապես գործնական նշանակություն ունի. այն իր ծով հայտարարությամբ հանդերձ, նախատեսված է հայ պատանիների և ուսանողների հասարակ՝ որպես արդի անգլերենին հեշտությամբ տիրապետելու միջոց:

ՀՄԻՆ ՄԿՐՏԻՉ.ԲԱՌԳԻՐՔ Ի ՀԱՅԿԱԿԱՆԷ Ի ՌՈՒՍԱՑ ԲԱՐԲԱՌ:- Մոսկվա: 1949:- 149 էջ:

Այս բառարանը, որ հայ մշակույթի մեծ երախտավորը պատրաստել է Լազարյան Ճեմարանի սանների համար, պարունակում է յոթ հազար ընտիր բառահոդված: Այն նախատեսված է որպես հեղինակի ,, Ընտիր հատուածք բաղեալ ի գրոց նախնի և այլոց մատենագրաց հայոց,, աշխատության հավելված:

ԷՄԻՆՅԱՆ ՍՐԱՊԻՈՆ. ԵՐԵՔԼԵՔՎՅԱ ԲԱՌԱԳԻՐՔ/ Գաղղիերեն-հայերեն-ռուսերեն/:- 1853.- 1358 էջ /1-ին հրատ./ և 1871:- 1322 էջ /2-րդ հրատ./:

Առաջին հրատարակությունը պարունակում է 45, իսկ երկրորդը՝ 47 հազար բառահոդված: Երկրորդը հրատարակությունը գրեթե անփոփոխ է մնացել, նորացվել և լրացվել է միայն տասներենի բաժինը, որի հաշվին էլ ավելացվել է 2000 բառահոդված:

Բառարանը, որպես հավելված, վերջում ունի 1700 լատ անփոփոխ մի բաժին, որտեղ բառահոդվածները ներկայացված են

ակելի սեղմ ու հասանոտ բացատրությամբ:

ՋՕՐԻԿՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ:- Վենետիկ:1900: - 306 էջ/ առաջին հրատ., 1-ին հատ./:- Վենետիկ: 1905.- 843 էջ/երկրորդ հրատ./: - Կ.Պոլիս: 1905:- 42 էջ /Թ- Կոստանդնուպոլիս քառերը/:

Հայերենի ոչ պակաս կարևոր ու արժեքավոր քառարաններից է, որը նաև ունի գիտական լուրջ հետազոտության արժեք:Այս գործը ստեղծելու համար հեղինակը հարկադրված է եղել հետազոտել տասնյակ հարյուրավոր աղբյուրներ, որոնցից քաղված նյութը նա ներկայացրել է զարմանալի ջանադրությամբ: Բառարանը ընդգրկում է պատմական, հին ու նոր Հայաստանի բոլոր բնակավայրերը, դաշտերը, գետերը, վարչական բաժանումները, նրանց միջավայրն ու ժողովրդի կենցաղը:

ԸՆԴՈՐԶԱԿ ԲԱՌԱՐԱՆ ԱՐԱԲԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ : - Բեյրութ: 1959.- 476 էջ:

Սա, որ գիտական աշխատանքի և ուսումնական ձեռնարկի արժեք ունի, իր տեսակի մեջ եզակի երևույթ է հայ գաղթօջախներում ստեղծված մեր մշակութային հուշարձանների շարքում: Բառարանը պարունակում է 30 հազար քառահոդված, մի քանակություն, որն իրավունք է վերապահում այս աշխատանքը համարել լիարժեք և շատ օգտակար ընթերցողների լայն շրջանների համար:

Բառարանի առաջաբանում շարադրված են այն սկզբունքները, որոնցով առաջնորդվելու դեպքում շատ հեշտ կլինի նրանից օգտվելը:

ՀՆՏԱՆԵԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՏՂԱՅՈՑ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ/մասն առաջին/:- Կ.Պոլիս: 1870.- 48 էջ:

Բառարանի հեղինակը անհայտ է. ,, Ազդի,, տակ,որպես հեղինակ, նշված է՝ Ռ.Մ., որի ով լինելը մեզ չհաջողվեց պարզել: Բաղկացած է հինգ թեմատիկ բաժնից. ,, Տանը ամբողջացուցիչ մասունքները,, / էջ 9-16/, ,, Տան մեջ եղած շարժական կահ-կարասիքը.- Էշեայ թեմեսելեթ,, / էջ 17-28/, ,, Ազգականաց անունները, որ միշտ կխոսին տան մեջ,, / էջ 29-32/, ,,Տան մեջ ծառայություն ընող սպասավորուն հայեվար անունները,, / էջ 33/, ,, Հանդերձ և նյութը նոցա,, / էջ 34-40/, ,, Կերակուրք և ըմպելիք,, /էջ 41-48/, որոնց պարունակած քառաքանակը 700 է:

ԹԱՔՈՒՀԵԱՆ ԺՈՐԺ. ԲԱՌԱՐԱՆ ԱՐԱԲԵՐԵՆԷ-ՀԱՅԵՐԷՆ:- Պեյրութ: 1960.-520էջ:

Արաբական երկրներում վերջին տասնամյակների ընթացքում ստեղծված արաբերեն-հայերեն քառարաններից

լավագույնն է: Այն աչքի է ընկնում նաև իր ծավալությամբ. պարունակում է մոտ 106 հազար բառահոդված / 26 հազարը արաբերեն և մոտ 80 հազարը հայերեն/, մի ահռելի բառաքանակ, որը հեղինակը հայթայթել է ավելի քան 15 տարվա ընթացքում:

ԹԱՋՈՒԱՋԵԱՆ ԺՈՐԺ. ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ-ԱՐԱԲԵՐԷՆ:- Բեյրութ-Լիբանան: 1964.- 820էջ:

Այս բառարանը, ինչպես նշված է առաջաբանում, գործնական օգնություն է արաբական միջավայրում ապրող և ուսանող ,,հայ աշակերտ ու աշակերտուհիներուն և արաբերեն լեզուն սիրող հայ մտավորական դասակարգին,,: Սկսվում է հայերենի ՝ ձայնավորի նկարագրությամբ և ավարտվում Ֆրանսուհի բառով:Յուրաքանչյուր հայերեն գլխաբառի դիմաց նշված են արաբերենի մի քանի հատարժեքներ:

ԹԵՄԻՐՃՅԱՆ ՎԱՐԴԱՆ.ԱՍԵՆԻԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ:- Մարսել: 1926.- 224 էջ:

Սա, ինչպես նշված է շապիկի վրա, ,, Հայերեն-Ֆրանսերեն խոսակցություն և բառգիրք գործածական բաւեռու, բայիրու և նամակներ օտարներու, հատուկ օրենքներու ծարգանություն է,, , հետևապես՝ առավելապես գործնական նշանակություն ունեցող զրուցարան-բառարան՝ պատրաստված ,, լոկ զբոսաշրջիկներու համար,,: Այդ պատճառով էլ զրուցարան են մուծված հատկապես ,, Ընթացիկ խոսակցություն և գործնականական տասցվածքներ,, / բարի լույս, բարի իրիկուն, շուտով դարձեք, պարոն և այլն/:

ԹԵՈՓԻԼՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ. ԲԱՌԳԻՐՔ ԵՐԵՎԵԼԻ ԱՐՄՆՑ:- Վենետիկ: 1839.- 12 + 984/ հատ. 1-ին, Ա-Յ տառերը/: /Վենետիկ: 1839.- 1071 էջ /հատ.2-րդ, Ն-Ֆ տառերը/:

Հանրագիտական բնույթի անձնանունների բառարան է, որը պարունակում է հայ և օտար նշանավոր գործիչների կենսագրությունը: Նախ տրվում է բառահոդվածը հայերեն, այնուհետև լատիներեն՝ համապատասխան բացատրությամբ հանդերձ: Օրինակ՝ բառարանում բացատրված է 40 անուն Գրիգոր /Գրիգորիս ձևը առանձին է/: Հայերեն անուններից բացի բառարանը պարունակում է նաև լատիներեն անուններ: Համադրվում են հայերեն, լատիներեն և հունարեն անձնանունները:

ԹԵՐՋՅԱՆ ՊՈՂՈՍ.ՀԱՆԳԱՐԱՆ ՆՈՒՅՆԱՁԱՅՆ ԵՎ ՆՈՒՅՆԱՀԱՆԳ ԲԱՌԵՐՈՒ:- Կ.Պոլիս: 1905: 45 էջ:

Սեղմ,նվազ բառաքանակով հանգարան-բառարան է,որտեղ

խմբավորված են թվով ոչ շատ նմանահանգ բառեր: Բառարանը թե՛ տեսական բնույթի է և թե՛ նախատեսված է այդ նպատակի համար: Այսուհանդերձ, Պ.Թերգյանի բառարանին, հանգամանաբանական արվեստի առումով, հետևող քանաստեղծներ գրեթե չեղան:

ԹԵՔԵՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.ՈՌՉԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՍՊԱՆԵՐԵՆԷ-ՀԱՅԵՐԵՆ:- Բեյրութ: 1955.- XXVII + 557 էջ:

Ուրուգվայի լեզվաբանական ընկերության անդամ, դոկտոր Հ.Թեքեյանի այս աշխատանքը, որ պարունակում է 30 հազար բառահոդված, հայ իրականության մեջ առաջին իսպաներեն-հայերեն բառարանն է:

Ինքը բառարանը հեղինակը համարել է ,, արդիական,, քանի որ մերժելով նախորդ բոլոր բառարանների հնացած բառանյութը,ինքը իր բառարան է մտցրել մի քանի հարյուր նորակերտ բառեր:

Բառարանը վերջում ունի հավելված, որը քերականական լիարժեք տեղեկություններ է պարունակում իսպաներենի վերաբերյալ:

ԹԻՐԱՔՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ/ՄԱՀՏԵՍԻ ԳԱԼՈՒՍՏ Հ.ՕԱՌՆԱՎԱՔ/. ՎԵՑՀԱՔՍՐՅԱԿ:- Կ.Պոլիս: 1880.- 7 218:

Թուրքերեն-հայերեն բառարան է, որը պարունակում է վեց հազար բառահոդված: Դրանք բոլորն էլ հայերեն մուտք գործած թուրքերեն բառեր են, ,, որոց ոմանք,- ինչպես նշում է հեղինակը,- պարսկերեն, ոմանք արաբերեն կամ օտար բառեր են համարում կամ աղավաղում,,:

Բառարանագրի խոստովանությամբ՝ ինքը հատկապես օգտվել է Է.Հյուրմուզյանի և Հ.Գոզաճյանի բառարաններից:

ԹԻՐԱՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՍՐԻԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆ:- Վիեննա: 1914-1920.-397 էջ:

Սա պարսկերեն-հայերեն բառարան է, ուր տրված են պարսկերեն և հայերեն բառերի բաղդատություններ՝ հատկապես ստուգաբանական առումով:

Պարունակում է 1300 բառահոդված, որոնց հայթայթումն ու ընտրությունը երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է: Այստեղ, ինչպես գրում է Ն.Ակինյանը, ,,...ստուգաբանական ճարտար վերլուծություններով լուսաբանված են բոլոր այն հայերեն բառերը, որոնք իրանական կամ պարսկական ծագում ունեն,,:

ԹԻՐԱՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՍԵՐ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ԽՈՒՄԲԵՐ:- Վիեննա:1925.- 108 էջ:

Սա իր բնույթով գիտատեսական բնույթի գործ է և բառա-

բանագրական աշխատանքի հետ առնչվում է սոսկ մի խումբ բառացանկերով:

Հեղինակը համասեր է անվանում այն բառերը, որոնք ,,ծնունդ առած են շատ մ' ուրիշ ,,նույնիմաստ արմատներից և ժամանակի ընթացքում միմյանցից հեռացած լինելով հանդերձ, պահպանել են ծագումնաբանական ,, համասեր,, բնույթը:

,, Կրկնակներ,, բաժնում ներկայացված են կրկնակ արմատներով կազմված բառերը / օրինակ՝ ազազ, ցիրուցան, աղաղակ և այլն/:

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՀԱՅԿ.ԲԱՌԳԻՐՔ ԱՐԱԲԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Բեյրութ: 1952.- 179 էջ:

Սա թեմատիկ բնույթի բառարան է, որը կենցաղի, սովորությունների, հասարակական կյանքի, գիտության ու մշակույթի, բուսական ու կենդանական աշխարհի և այլնի վերաբերյալ պարունակում է ութ հազար արաբերեն բառ՝ հայերեն համարժեքներով հանդերձ: Որոշ բառերի բացատրությունը տրված է նկարագրական ձևով:

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ.ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ:-Ծր.: 1983-296 էջ:

Սա իր բնույթով բառարան չէ, սակայն քանի որ կառուցվածքով բառարանատիպ է, այսինքն՝ յուրաքանչյուր դեղաբույս նկարագրված է առանձին բառահոդվածով, հետևապես թողնում է բառարանի տպավորություն: Պարունակում է 62 բառահոդված և նույնքան էլ բուսանկար: Բառահոդվածներից յուրաքանչյուրը տվյալ դեղաբույսի ընդարձակ ու բազմակողմանի նկարագրությունն է: Դրանք ներկայացված են միասնական սխեմայով՝ դեղաբույսի հայերեն, ռուսերեն և լատիներեն անվանումը, հայկական տարանունները, ապա բույսի բազմակողմանի նկարագրությունը, բժշկական նշանակությունը, կիրառման եղանակները, վերջում՝ նրա օգտակար հատկանիշները:

ԹՈՐՈՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ.ՍՌՋԵՌՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Նյու-Յորք: 1899.- 8 + 360 էջ:

Բառարանի տիտղոսաթերթի վրա նշված է՝ Բ մաս: Ենթադրել կարելի է, որ ամենայն հավանականությամբ, բառարանն ունեցել է նաև առաջին մաս՝ հայերեն-անգլերեն բաժին, որի մասին, սակայն, որևէ տեղ հիշատակություն չկա: Պարունակում է 25 հազար բառահոդված:

Անգլերեն բառերի հնչումները /արտասանությունը/ տրված են նաև հայերեն: Դա ավելի է հեշտացնում այդ լեզվի

ուսուցումը:

ԳՈՐՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ /ՏՅՈՒՐԿԵՑԻ/. ՏԵՏՐԱԿ ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆԻ:- Նոր-Նախիջևան: 1794.- 95 էջ:

Թուրքերեն- հայերեն չափածո քառարան է, որի յուրաքանչյուր տող մի արտահայտություն է՝ նվիրված ընության այս կամ այն երևույթին կամ իրողությանը: Քառատողերի բոլոր տողերն սկսվում են հաջորդական այբբենական կարգով, բացի այդ՝ կից արկտոզերը հանգավորված են: Բառարանը լի է օտարաբանություններով, այնտեղ ներմուծված են տաճկերեն հարյուրավոր արտահայտություններ ու հասկացություններ, որոնք առանձին կամ հայերեն կիսատողի հետ միասին են գործածված:

ԲՐՅԱՆՑ ՌԱՖԱՅԵԼ. ՆՈՐ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳԻՐՔ:- Վենետիկ: 1845.- 512 էջ:

Այս քառարանը լույս տեսավ Մ.Ավգերյանի ,, Առձեռն քառարանից., առաջ և էական հետք չթողեց, մանավանդ թերատիպ լինելու պատճառով: Այն պարունակում է մինչև ժողովումն բառահոդվածը: Թե մնացած քառահոդվածները պատրաստ էին տպագրության, հայտնի չէ:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս: 1910.-440 էջ:

Նախատեսված էր դպրոցականների համար և հետապնդում էր ուսուցողական-գործնական նպատակներ, թեև պարունակությամբ էլ այնքան աղքատ չէր /ընդգրկում էր 12 հազար քառահոդված/: Ժամանակին այն գնահատվեց որպես արժեքավոր քառարան և գործածության մեջ մնաց մոտ 30 տարի, մինչև 40-ական թվականները:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ: - Թիֆլիս: 1912:- 662 էջ:

Սա այս քառարանի երկրորդ տրատարակությունն է /առաջինը լույս է տեսել 1907թ., 403 էջ/: Պարունակում է 12 հազար քառահոդված, ինչպես նաև քերականական տեղեկություններ հայերենի և ռուսերենի վերաբերյալ: Այն կարող է նաև ձեռնարկի դեր կատարել:

Երկրորդ հրատարակությունն անհամեմատ կատարյալ է, քանի որ այն տեղինակը մաքրել է անհարկի հնաբանություններից ու օտարամոտ ձևերից:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ. հատ. 1/Ա-Ե/:-Եր.: 1969.- XI + 610 էջ, հատ. 2/Զ-Ծ/:-Եր.: 1972.-714 էջ,հատ.3/Կ-Մ/: -Եր.: 1974.- 574 էջ,հատ.4/Յ-Փ/:-Եր.: 1980.- 828 էջ:

Բառարանը ստեղծվել է գրական հայերենի՝ վերջին

մի քանի տասնամյակների ընթացքում քարտուղրված շարանյութի հիման վրա, թեև հետագա տարիների ընթացքում կզալի փոփոխություններ են տեղի ունեցել արդի գրական հայերենն շոտապաշարում, որոնք, հասկանալի պատճառներով, իրենց արտացոլումը չեն գտել քառարանում: Այն պարունակում է ժամանակակից հայերենի ընդհանուր գործածության բառերն ու դարձվածները, որոնց թիվը հարյուր հազար է/ պետք է լուսաբանի նաև լրացուցիչ հատորը/:

Բառարանը կազմված է որոշակի սկզբունքներով, որոնց մասին հանգամանորեն խոսվում է նրա առաջաբանում:

ԻՇԽԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ. 500 ԲԱՌ:- Եր.: 1980.- 24 էջ:

Բառգրքույկն ընդգրկում է այնպիսի քառեր, որոնք ուղղագրական տեսակետից որոշակի դժվարություն են ներկայացնում: Հեղինակի կարծիքով հենց այս նկատառումով էլ ընտրված է քառացանկը, որն ընդգրկում է 500 քառ:

Այն ուսուցողական-գործնական նպատակ է հետապնդում և այդ տեսակետից էլ օգտակար է: Նրանում շատ քառեր ներկայացված են զուգահեռ ձևերով, որոնք հեշտացնում են միշտ կողմնորոշվելու դրանց երկձև գրությունների:

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ. ՄԱՐԶԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1984.- 181 էջ:

Այս ընույթի և այս ընագավառին վերաբերող աշխատանքներից Մ.Իսպիրյանի քառարանը աչքի է ընկնում իր մի շարք առավելություններով, հատկապես մարզական տերմինների լրիվ ընդգրկմամբ և դրանց բազմակողմանի բացատրությամբ: Պարունակում է 1742 քառահոդված, հայերեն և ռուսերեն լեզուներով տեսական և մասնագիտական գրականության ընդարձակ ցանկ:

ԼԵՋՎԱԲԱՆՈՎՅԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ / Նախագիծ/:- Եր.: 1967.- 16 էջ:

Բառացանկն ամփոփում է Հայկական սովետական հանրագիտարանի լեզվաբանական ուղղություններին, դպրոցներին, լեզվա-քերականական հասկացություններին, իրողություններին, կարգերին և այլ իրակությունների վերաբերող քառահոդված-տերմինները, որոնք պետք է ըստ այբբենական կարգի և ըստ հատորների ընդգրկվեին հանրագիտարանում: Բառացանկը պարունակում է այդօրինակ 700 քառահոդված:

ԼԵՈՒՆ ԻՎԱՆ.- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1968.-337 էջ:

Թարգմանական քառարան է, որն սկսվում է <u>աբոլիցիոնիզմ</u> տերմինով և ավարտվում <u>Ֆուրոր</u> քառահոդվածով:

Բառարանն ընդգրկում է ոչ միայն զուտ քաղաքական տերմիններ, այլև դիպուկ ու փոխաբերական ընույթի արտահայտություններ, որոնք վերաբերյալ տրվում են ընդարձակ բացատրություններ և մեկնաբանություններ/ տես,օրինակ՝ ակցիա,բազիս,դեպրեսիա,ապարտեիդ, պանթուրքիզմ, ռեվիզիա, ուրբանիզմ և այլն/:

ԼՈՌԻՆՈՎ ԱՆՏՈՆ,ՀՅՈՒՍԵԻՆ-ՋԱԴԵ Ս./ԼԵԲԵԴԵՎ/. Ռուս-հայկական բառարան:- Բաքու: 1933, 29 էջ:

Այս բառազրքույկը ,, Թուրքական դպրոցների 6-րդ դասի ռուսաց լեզվի դասագրքին կցված,, հավելված է՝ նախատեսված հայկական դպրոցների համար: Յուրաքանչյուր տառի տակ տրված է մի փոքրիկ բառախումբ՝ ռուսերեն-հայերեն բացատրությամբ: Պարունակում է 1800 բառահոդված:

ԼՈԳՈՆՈՎ ԱՆՏՈՆ, ՊԼԻՇԱՈՒՆՈՎ ՆԻԿՈԼԱՅ. ՌՈՒՍ-ՀԱՅԵԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Բաքու: 1933.- 32 էջ:

Սա նույնպես կազմված է նախորդ բառարանի սկզբունքով և նախատեսված է Ադրբեջանական ՍՍՀ տարածքում գործող հայկական դպրոցների 7-րդ դասարանի համար: Պարունակում է նույն քանակությամբ / 2000/ և նույն բնույթի բառեր, ինչ նախորդը: Բառափնջերից ամենաքիչը ա/a/-ով սկսվող բառերն են /հինգը/, քանի որ ռուսերենը, առհասարակ a -ով սկսվող բառ չունի, եղածներն էլ օտարազգի են, հետևապես՝ փոխառյալ:

ԼՈՒՍԻՆՅԱՆ ԳԵՎՈՐԿ,ԲԱՍՄԱՃՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՎԵ-ՖՐԱՆՍԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1915.- 8 + 838 էջ:

Ծոխ ու լիառատ բառարան է. պարունակում է 42 հազար բառահոդված: Առատությամբ և իմաստային բազմազանությամբ հատկապես աչքի են ընկնում հոմանիշներն ու դարձվածքները: Մրայն Ա տառով բառերը ընդգրկում են բառարանի 1-114 էջերը: Այսուհանդերձ, այս բառարանը հեղինակներից մեկի՝ Գ.Լուսինյանի Ֆրանսերեն-հայերեն երկհատոր պատկերազարդ բառարանի համառոտ ամփոփումն է, որ մեծ երախտավորի մահից հետո իրականացրել է Կ.Բասմաճյանը:

ԼՈՒՍԻՆՅԱՆ ԳԵՎՈՐԿ.ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՖՐԱՆՍԱՀԱՅ:-1-ին հրատ. Ա/A-H տառերը/: - Փարիզ: 1900.-14 1060 էջ, հատ.Բ/I-V տառերը/:- Փարիզ: 1900.- 817 էջ: 2-րդ հրատ., հատ.Ա/A-H տառերը/:-Կ. Պոլիս 1909.- 1060 էջ, հրատ. Բ/I-V տառերը/:- Կ.Պոլիս: 1909. - 517 էջ:

Սա /խոսքը վերջին հրատարակության մասին է/ չա-

փազանց հարուստ և ընդարձակ բառարան է, որը կազմված է 1864 եռասյուն մեծաղիր էջերից և պարունակում է ծով հարստություն՝ 120 հազար բառահոդված: Ֆրանսերեն-հայերեն բազմաբնույթ բառարաններից ոչ մեկն այնպիսի մասնայականություն ու գիտագործնական արժեք չի ունեցել, ինչպես Գ.Լուսինյանի Ֆրանսահայ նոր բառգիրքը:

ԹԱԼԴԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ.ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՇԱՀԻՂ ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹԻՒՆ:- Ս.Պետերբուրգ: 1786.- 156 էջ:

Սա հայ-ռուսերեն բառարան է՝ հրատարակված է հետևյալ նշանաբանով. ,,... Արարեալ մանրազնին ուղղագրութեամբ ի նոր Ջուղայեցի ազնվատոհմ սերնդոյն Թալդարեան, առաջասիրեալ ազնիւ Խոջամալի որդի,,:

Բառարանը ամուսնու մահից հետո հրատարակել է Գ.Թալդարյանի այրին՝ Կատարինե Թալդարյանը: Առաջաբանը գրել է Թաղևոս Պոլսեցին: Բառարանի հայերեն բաժնի բառերը արևելյան են: Դրանց դիմաց ռուսերեն բառերը ևս հայագիր են, այդ պատճառով էլ հատկապես ռուս ընթերցողների շրջանում մեծ ընդունելության չարժանացավ:

ԹԱՀԱՍՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ.ԼԵՌՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1985.- 292 էջ:

Բառարանը ընդգրկում է ինչպես լեռնային գործում ընդունված և գործածության համար սահմանված տերմիններն ու հասկացությունները, այնպես էլ այդ բնագավառի/ երկրաբանություն, հանքաբանություն, մետալուրգիա,տնտեսագիտություն, քարի հանույթ և մշակում և այլն/ հետ առնչվող այլ տերմիններ ու հասկացություններ:

ԹԱՀԱՍՐՅԱՆ ԺԻՐԱՅՐ. ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ: - Հալեպ: 1945.-116 էջ:

Սա փաստորեն բառարան չէ, այլ բառահոդվածներն ըստ բնույթի երեք մասով բաժանված բառախաչբերի ժողովածու: Յուրաքանչյուր մաս պարունակում է մի քանի հարյուր: Իսկ ամբողջ բառարանը՝ 1779 բառ, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նշված է նրա հայատառ անգլերեն, այնուհետև հայերեն համարժեքը՝ ոչ ընդարձակ բացատրությամբ: Անգլերեն յուրաքանչյուր գլխաբառ հիմնականում թարգմանված է մեկ բառ-համարժեքով:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԻԳՆԱՏ.ԲԱՌԱՐԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՑ ՈՐՔ ԳՏԱՆԻՆ ՅԱՅԼ ԵՒ ՅԱՅԼ ԳԻՐՍ ՍՐՏԱՔՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ:- Վենետիկ, 1749.- 139 էջ:

Ընդգրկում է ,, Բառարան յատուկ անուանց աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց,, քառարանի երկրորդ մասը /էջ 233-377:/ և պարունակում է թե՛ անձնանուններ ու տեղանուններ և թե՛ այլ բնույթի անվանումներ / վարքագիրներ, կրոնական,հոգևորական գործիքներ և այլն/:

ԽԼՂԱԹՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՈՍ.ԲԱՌԱՐԱՆ-ՏԵՂԵԿԱՏՈՒ:- Եր.: 1982.- 167 էջ:

Բառարան-տեղեկատուն պարունակում է շուրջ հազար նորակազմ և վերջին ժամանակներում օտար լեզուներից հայերենին անցած շատ ու արտահայտություններ, որոնք մամուլում գործածվելով հանդերձ, տակավին իրենց հաստատուն տեղը չեն գտել գիտա-գեղարվեստական և մասնագիտական գրականության մեջ: Բառահոդվածների դիմաց կան քերականական նշումներ:

ԽԼՂԱԹՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՈՍ. ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ-ՏԵՂԵԿԱՏՈՒ:-Եր.: 1976.- 110 էջ:

Բառարանում տեղ են գտել հնագույն ժամանակներից ի վեր ձևավորված ոճաբանական տերմինները, ինչպես նաև դրանց հետ առնչվող մի շարք այլ արտահայտություններ, որոնք գործ են ածվում քերականագիտության, ճարտասանության, արվեստի ու հռետորիկայի բնագավառում: Դրանք դիտված են որպես ,,միջնյուղային,, ոճաբանական տերմիններ:

ԽՐԼԱԳՅԱՆ Ժ. ԲԱՌԱՐԱՆ ԳԱՂՂԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ: - Հալեպ: 1936.- 98 էջ:

Թեմատիկ բնույթի քառարան է՝ կազմված առանձին խմբերից, որոնցից 1-4-ը վերնագրված է ,,Դպրոցական առարկաներ,,: Այս բաժնին հաջորդում են ,, Ընթերցումի դաս,, , ,,Ուզել և տալ,, , ,,Մարմնի մասեր,, , ,, Հագուստեղենը,, , ,,Դպրոցական առարկաներ,, , ,,Դպրոցական շենքը,, և այլն, ինչպես նաև ,,գոյականներ,, , ,,Անականներ,, և այլ խոսքի մասերին վերաբերող հասկացություններ: Կա միայն քառարանի միկրոժապավենը, որտեղ նրա քառաքանակի մասին տվյալներ չկան:

ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ. ԲԱՌԱՐԱՆ Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ Ի ՌՈՒՍԱՍ ԲԱՐՁԱԴ:- հատ. 1-2: Մոսկվա: 1838.- 32+613 և 530 էջ:

Լազարյան Ճեմարանի միջոցներով և նրա նախաձեռնությամբ հրատարակված այս երկհատոր քառարանի 1-ին հատորը պարունակում է 18 հազար քառահոդված / նաև ընդարձակ առաջաբան և քերականական ծանոթություններ/, իսկ երկրորդը՝

17 հազար բառահոդված: Հեղինակը, իր խոստովանությամբ, առատ-
լապես օգտվել է Մ.Սեբաստացու բառարանից, նրա բառայուքին
հատկապես ավելացնելով առևտրա-վաճառականական և պետական-վար-
չական բնույթի բառեր ու հասկացություններ՝ որպես ժամանակի
հրատապ պահանջ: Այս բառարանը շուտով լույս է ընծայվելու
Երևանի համալսարանի կողմից:

ԹԱՏՈՒՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ.ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԼԱՏԻՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ
ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1962:- 246 էջ:

Այս բառարանը, որը պարունակում է 1274 բառահոդված,
հեղինակի/և հեղինակակիցների/ նախորդ բառարանի ամփոփումն է,
որը նախատեսված է բուհական ուսանողության համար՝ որպես
մասնագիտական տերմինարան: Գիտական տեսակետից գրեթե անթերի
ու կատարյալ է: Բառարանին կցված են հայերեն և ռուսերեն ան-
վանացանկեր / էջ 115-243/, որոնք էլ ավելի են բարձրացնում
նրա արժեքը:

ԵԱՆՍՅԱՆ ԹԱՂԱՏՈՒՐ.ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ:
-Եր.: 1940:- 110 էջ:

Սա իսկական իմաստով բառարան չէ, այլ մեծ քնարերգուի
բանաստեղծական լեզվի ու ոճի քննության նախափորձ, որին
կից հավելվածաբար ներկայացված է ,, Աբու-լալա-Մահարի,,
պոեմի բառարանը: Այն ընդգրկում է աշխատության 23-110
էջերը և պարունակում է 1231 բառ, որից 6-ը տասը տարբերա-
կով հատուկ անուն է: Բառերը նշված են գործածության հաճախա-
կանությամբ:

ԵԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԵՆԱ,ՂԱԶԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ.ԹԵՄԱՏԻԿ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.:
1976.- 189 էջ:

Գիտափորձի /էքսպերիմենտ/ հիման վրա ստեղծված բառարան
է, որը նախատեսված է սովորողների բառապաշարը, այսպես ՝դոյ-
ված, տեղայնացման / թեմատիկ նյութերի ուսուցման/նեղանակով
մշակելու և հարստացնելու նպատակով: Բառարանում ընդգրկված
է տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարանների,
քերականության և ուղղագրության, հայրենի բնության,երգ-
երաժշտության և մյուս դասագրքերի, բացառությամբ մաթեմա-
տիկայի, բառապաշարը:

ԵԱՐԱՊԵՏՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՋԵՋԻ. ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ՕՍՄԱՆԵՐԵՆ:-Պ.Գոլի:
1907.- 48 + 875 էջ:

Այս մեծածավալ ու հարուստ բառարանի առավելություն-

ներից մեկը պայմանավորված է նորաբանությունների առատությամբ: Իսկ սրանով էլ իր հերթին պայմանավորված են բառազանձի ծավությունը, ժողովրդական ասույթների, ոճերի, դարձվածների առատությունը, որ այնքան հիացմունք են պատճառել Գ.Զոհրապին, Խ. Ուզուրիկյանին, բանաստեղծ Ռիշայի Զաղեին, Մահմուդ Էքրանին, որոնք հիացմունքով են խոսել այս մեծ գործի մասին: Բառարանը պարունակում է 50 հազար բառ ու ոճ:

ՔԱՐԱՊԵՏՅԱՆ ՊԵՏՐՈՍ ՋԵՔԻ. ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՕՍՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1912.- 957 էջ:

Սա ևս մեծարժեք աշխատանք է, հեղինակի բազմամյա գործունեության պտուղը: Այն ուշքի է ընկնում իր ծավությամբ, բառիմաստների նրբերանգային բազմիմաստությամբ: Պարունակում է իմաստասիրական, պատմական, աշխարհագրական, գրական, գիտական, բնական-պաշտոնական ու իրավաբանական ,, բառերու ծոխ մթերք,, բազմաթիվ ոճեր, ասույթներ, օրինակներ, համանիշ և հականիշ բառեր, որոնց բոլորի քանակը կազմում է 50 հազար բառահոդված: Բառարանը հեղինակը ձոնել է իր ,, ճշմարիտ հայ և քաղաքացի հոր՝ Կարապետ Կարապետյանի հիշատակին,,:

ՔԱՐԱՔՇԵՇԵՅԱՆ ՄԱՐԻԱ,ՍԱՐԱՏԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1942.- 524 էջ:

Սա նույն երկու հեղինակի և իրենց հետ նաև Մ.Մխիթարյանի հեղինակակցությամբ 1934թ. հրատարակված ,, Ռուս-հայերէն համառոտ բառարանի,, լրացված ու վերափոխված տարբերակն է, որը պարունակում է 12000 բառ: Բառարանը ուսումնա-գործնական բնույթի է և ընդգրկում է դպրոցական դասագրքերի բառապաշարը:

ՔԱՐԱՔԵՇԵՇՅԱՆ ՄԱՐԻԱ,ՍԱՐԱՏԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ,ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1934.- 504 էջ:

30-ական թվականների ռուս-հայերեն /կամ ընդհակառակն/ բառարանագրական առաջին փորձերից է, որը կազմված է սովորական, շատ պարզ սկզբունքով՝ բառերը դասավորված են այբբենական կարգով. գոյականները տրված են եզակի թվի ուղղական հոլովաձևով: Հոգնակի թվի վերջավորությունը տրվում է միայն այն ժամանակ, երբ բառը շեշտափոխվում է: Բայանուն գոյականները բառարան չեն մտցվել: Կան նաև ուրիշ առանձնահատկություններ: Բառարանը պարունակում է 10 հազար բառահոդված:

ԿԱՐԻԵՐ ԱԿԳՈՒՍՏ.ԲԱՆՔ ԿԱՄ ԹԱՍՔ ՀԱՅՈՑ /Carriere A., Un ancien glossaire latin-arménien /: - Փարիզ: 1866:

Փոքրիկ ձեռագիր քառացանկ է, որը պարունակում է լատիներեն 90 քառ՝ հայերեն թարգմանությամբ ու համապատասխան բացատրությամբ: Յուրաքանչյուր լատիներին գլխաքառի դիմաց նշված են հայերենի մի քանի համարժեքներ:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՐՆԳԻՆ. ԲԱՌԱՐԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ: - Թեհրան: 1933.- 10 + 788 էջ:

Պարսկերեն և հայերեն / նաև հայերեն-պարսկերեն/ շառարաններից լավագույնն է, որ ժամանակին արժանացել է բարձր գնահատականի, իսկ հեղինակը՝ Պատվո նշանի:

Բառարանը պարունակում է Հ.Աճառյանի արժեքավոր առաջաբանը / հեղինակը ևս ունի առանձին առաջաբան/ և 20 հազար. քառահոդված, որոնց դիմաց նշված է նրանց արտասանությունը:

Առիթից օգտվելով, հարկ ենք համարում նշել, որ Գ.Կիրակոսյանը նաև կազմել է ,, Հայերեն-պարսկերեն բառարան,, , որ մինչև այժմ ձեռագիր վիճակում է:

ԿՈՅԼԱՎ/ԿՈՅԼԱՎՅԱՆ/ ԱՎԵՏԻՔ. ԲԱՌԳԻՐՔ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:-Վրենա: 1884-1889.- 15+1667 էջ:

Իր տեսակի մեջ ինքնատիպ ու մեծարժեք գործ է: Աչքի է ընկնում թե՛ իր ծավալով և թե՛ ընդգրկած բառամթերքով: Պարունակում է հմտալից առաջաբան, գերմաներենի բայի խոնարհման աղյուսակներ ու պատկերներ և 120 հազար քառահոդված, որ գերմաներենի բառագանձի գրեթե լիարժեք արտացոլումն է:

Գլխաքառերի դիմաց նշված են նաև քերականական իրողություններ և բառակազմական ձևեր: Կենսաբանական և բուսաբանական բառահոդվածների դիմաց, թարգմանությունից բացի, նշված են նաև դրանց լատինական գիտական համարժեքները:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ.ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:

Անտիպ բառարան է. պահվում է Լենինգրադի արևելագրության թանգարանում: Պարունակում է շուրջ երեք հազար կրոնական-եկեղեցիական բնույթի բառեր, հասկացություններ ու արտահայտություններ, որոնց վերաբերյալ տրվում են համապատասխան ստուգաբանություն ու պարզաբանումներ:

ԿՈՍՏԱՆՅԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ.ԲԱՌԱՑՈՒՑԱԿ ԱՌԱՋԻՆ ԾԱՂԿԱՔԱՐԻ ՀԱՄԱՐ:-Թիֆլիս: 1885.- 94 էջ:

Գրպանի փոքրածավալ բառգրքույկ է, որը պարունակում

է 700 բառահոդված, որոնցով, ինչպես նշված է ,, Ազդում,, , ,,... պիտի գույց տրվի աշակերտին մեր առաջին ծաղկաքաղի բառերի նշանակությունն ու կազմությունը,,: Այս նպատակով բացատրված են միայն գրաբարին հատուկ և անսովոր իմաստ ունեցող բառերը:

ԿՈՍՆԵՆՆ ԱՆԴՐԻԱՍԻԿ.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ:- Պեյրութ: 1970.- 511 էջ:

Բավականաչափ հարուստ ու ծոխ բառարան լինելով հանդերձ, այնուամենայնիվ, վեհերոտ է հնչում հեղինակի հետևյալ քնաքանը. ,, Միայն Ս.Մալխասյանի ,, Հայերեն բացատրական բառգիրքը,, անհրաժեշտ կմնա այս բառարանեն ետք,,: Իր բառարանը հեղինակը համարել է արժեքավոր հատկապես ,, բազմակողմանի տարողությամբ»/այն պարունակում է 30 հազար բառ/: Բառառանը բացատրական է. յուրաքանչյուր գլխաբառ բացատրված է մի քանի համարժեքներով / օր. Բեկոր Գ.- կոտոր, մաս, գշուրը, նշխար կամ գրգռիչ ած.- կիրք յուզող, խառնակիչ, դրդող և այլն/: Ինչպես տեսնում ենք, գլխաբառերի խորհրդաբանական պատկանելությունը ևս նշված է:

ԿՈՒՅՈՒՄՋՅԱՆ ՍԻՐԱՐԴԻ.ԱՆԳԼԵՐԵՆ ԹԵՐԹԻ ԼԵՔՍԻԿԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ:- Եր.: 1986.- 91 էջ:

Ձեռնարկ- բառգրքույկ է, որը նպատակ ունի հատկապես ուսանողությանը օգնելու՝ կարդալ և հասկանալ անգլերեն տեքստերը, ըմբռնել այն հասկացություններն ու տերմինները, որոնք համեմատաբար նոր են ձևավորվել և ներայժմ լրիվ չափով չեն ընդգրկված բառարաններում:

Ձեռնարկն ունի անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն հավելված- բառգրքույկ, որն ընդգրկում է հասարակական-քաղաքական կյանքի մի շարք ոլորտների / բանվորական և ազգային-ազատագրական շարժում, խաղաղություն և զինաթափում, տնտեսություն , արդյունաբերություն, առևտուր, գյուղատնտեսություն և այլն/ վերաբերյալ 3200 լեքսիկական միավոր բառ-հասկացություն, որոնք հաճախակի են հանդիպում ծրագրային տեքստերում:

ՀԱՐՈՒՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳՐՔՈՅԿ Ի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ:-Թիֆլիս: 1879.-672 էջ:

Սա դպրոցական-ուսուցողական բառարան է. պարունակում է 13 հազար բառահոդված, որոնց իմատները մեկնարկված են

պարզ ու մատչելի: Հեղինակի սկզբունքը հետևյալն է՝ մեկ բառի դիմաց մեկ բառային բացատրություն, որով էլ ինքն առաջնորդվել է:

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐ.ՍԵՐԲՈԽՐՈՒԹԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ:- Փարիզ:- 1985.- 220 էջ:

Այս ծեռագիր /լուսապատճենված/ բառարանի մեջ ամփոփված բեժիտերեն, գունգիտերեն և զինուխետերեն / ընդհանուր անունով՝ սերբա-խորվաթերեն/ բառերի դիմաց նշված են դրանց խոսքի մասային պատկանելությունը և անվանական սեռը, ապա հայերեն բացատրությունը՝ մեկ կամ երկու համարժեքների առկայությամբ: Բառարանը նաև պարունակում է տեղանուններ և տնդացիություն նշանակող բառեր: Առհասարակ պարզ կառուցվածքի պարզունակ բառարան է:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ.ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼՈ-ՀԱՅ:- Բոստոն: 1905.- 292 էջ:

Պարունակում է մոտ 8 հազար բառահոդված: Անգլերեն գլխաբառերը բացատրված են տվյալ բառի՝ հայերենի բոլոր հնարավոր համարժեքային ձևերով: Դրանց դիմաց նշված են նաև բերականական կարգեր ու մեկնաբանություններ:

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐԳԵՅ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1956.- 152 էջ:

Հայ իրականության մեջ սպորտային- մարզական շնազավառի տերմինաբանության և հասկացությունների բառագիտական առաջին փորձն է, որն ամփոփում է սպորտային նշանակության բառեր ու արտահայտություններ, որոնց թիվը հասնում է 4500-ի:

ՀԱԿՈԲՅԱՆ Վ. ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԷ Ի ՀԱՅ: - Կ.Պոլիս: 1894 / 1-ին հրատ./ - 430 էջ և 1907:- 1405 էջ:

Խոսքը երկրորդ հրատարակության մասին է, որը պարունակում է 45 հազար բառահոդված և համարվում է անգլերեն-հայերեն կատարյալ ու ծավալ բառարաններից մեկը: Երկլեզվյա բառարան լինելով հանդերձ, այստեղ հայերեն բառապաշարը մեզ է ներկայանում իր լիարժեքությամբ ու ծավալությամբ, հոմանիշների, ինքնատիպ ոճերի ու դարձվածների առատությամբ: Այդ է պատճառը, որ անգլերեն միևնույն բառը մեկնաբանվում է հայերենի բոլոր հնարավոր համարժեքներով:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅՄԻԿ, ՏԵՐ-ՄՆՏՈՆՅԱՆՑ ԵԼԻԶԱՎԵՏԱ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1985.- 342 էջ:

Պարունակում է առավել հաճախ գործածվող և դպրոցական դասագրքերում հանդիպող 1200 դարձվածային միավոր, որոնք բացատրված են ռուսերեն և հայերեն: Յուրաքանչյուր դարձվածի իմաստն ու նշանակությունը լուսաբանելու համար բերված են օրինակներ դասական և ժամանակակից ռուս գրականությունից:

Երկու լեզուների դարձվածների համապատասխանության և այդ նպատակով կատարված ընտրության գործում, ինչպես երևում է, հեղինակները մեծ ջանքեր են գործադրել:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԳՐԳՈՒՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼՈՀԱՅ: -Բոստոն: 1905.- 292 էջ:

Այս բառարանը, հակառակ երկարատև փնտրումների, մեզ չհաջողվեց հայտնաբերել որևէ գրադարանում կամ գիտական կենտրոնում: Այդ պատճառով էլ նրա մասին շատ բան ասել չենք կարող: Այլ աղբյուրներից հայտնի է դարձել, որ պարունակում է մոտ չորս հազար բառ և ոճական միավոր:

ՀԱՄԲԱՐՁԱԿ ԿԱՄ ՅԱՆԿ ՆՄԱՆԱՁԱՅՆ ԲԱՌԻՑ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԵՎԱՐԳԻ ՇԱՐԱԴՐԵԱԼ: - Զմյուռնիա: 1848.- 604 էջ:

Այս յուրօրինակ և տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող գործը ընդգրկում է 604 երկսյունակ մանրատառ էջ: Այն, անվանված, իր ծավալության և անթերի լինելու պատճառով հիմք է ծառայել աստվածաշնչի ու նոր կտակարանների բառազանձի հայթայթման համար: Պարունակում է նոր կտակարանի ողջ բառապաշարը՝ անձնանուններով ու տեղանուններով, որոնց դիմաց նշված են գործածության աղբյուրն ու էջերը:

ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ Ի ԳՐԱԲԱՌԷ ՅԱՇԽԱՐՀԱԲԱՌ Ի ՊԷՏՍ ՆՈՐԱՎԱՐԺԻՑ:-Վենետիկ, 1859.- 267 էջ:

Թեև բառարանը հրատարակված է՝ առանց հեղինակի անունը հիշատակելու, բայց և այնպես հայտնի է, որ այն մեծավաստակ Մ.Չամչյանի գրչի արտադրանքն է: Սա բառարանի երկրորդ հրատարակությունն է / առաջինը լույս է տեսել 1842թ./: Պարունակում է 7 հազար 200 բառահոդված, որոնք ամբողջովին քաղված են Նոր Հայկազյան և Առձեռն բառարաններից՝ քերականական ձևերի համապատասխան վերջավորությունների նշումով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ/ խմբ. Դր. Սիմոնյան/:- Եր.: 1935. - 16 + 480 էջ:

Հանրագիտարանի աշխատանքները սկսվել են 1932թ., և 132 մասնակիցների /կազմողներ, խմբագրական կոլեգիայի անդամներ, ձևավորող-նկարիչներ և ուրիշներ/ ուժերով 1935թ. տասը հազար տպաքանակով լույս է տեսել այս պրակը՝ ,, Ա- ավանդական գիտություններ համամիութենական,, եզրավորող բառահոդվածով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ.ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ:- Տփղիս:1909: Բնագրային համաբարբառ, գիրք 1, Ա-Ա:- Եր.: 1979.- 785 էջ:

Ագաթանգեղոսի ,, Հայոց պատմություն,, համաբարբառի այս հատորն ընդգրկում է հեղինակային 38,5 և տպագրական 45 մամուլ: Բառերի ընդհանուր քանակը 48764 է, բարբառային բառերինը՝ 3793, իսկ մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ 1871: Համաբարբառն սկսվում է ա ձայնավորով և ավարտվում կցորդությունն բառով: Էջ 783-785-ը հատկացված է հատուկ անուններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ,, ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ,,: - Պուենոս Այրես: 1948: Բնագրային: Եր.: 1975.- 625 էջ / Գիրք 1-ին, Ա-ի տառերը/:

Այս հատորի բառերի ընդհանուր քանակը հասնում է մոտ 32 հազար 500-ի / ավելի ստույգ՝ 32469/, բառարանային բառերինը՝ 3128-ի, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 1354-ի, որոնց մի զգալի մասը, որպես նորաբանություններ, չեն հանդիպում նախորդ շրջանի մատենագրության մեջ / Տես Եղեռնալուր, դառնոստեան, գաղտնաբծուկ, բազմահոլով և այլն/: Հատուկ անունները չափազանց սակավ են. դրանց թիվը հասնում է 55-ի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ. ԵՐԿԵՐ:- Եր.: 1969: Բնագրային համաբարբառ, գիրք 1-ին / Ա-Կ/:- Եր.: 1980.- 781 էջ:

Համաբարբառի այս ստվարածավալ հատորը, որ պարունակում է արևմտահայ մեծ բանաստեղծի երկերի լիակատար ժողովածուի բառապաշարի միայն մեկերրորդը / Ա-Ա տառերը/, վկայում է նրա պոեզիայի լեզվի ծոխության, բառապաշարի հարստության մասին: Միայն հիշատակված տառերով կազմված բառերի քանակը 34291 է, բառարանային բառերինը՝ 1941%, մեկ անգամ օգտագործված բառերինը՝ 1676, որոնք իրենց հաճախականությամբ շատ բարձր ցուցանիշներ են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ. ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ: - Եր.: 1980: Բնագրային համաբարբառ:- Եր.: - 1979.- 818 էջ:

Համաբարբառի ընդհանուր բառաքանակը 21695 է, բառարանային բառերի թիվը՝ 1826, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 868: Համաբարբառի 790-817 էջերը ընդգրկում են ,, Սահմանք իմաստասիրութեան,, երկի բառացանկը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԵՂՆԿԱՅ ԿՈՂԲԱՑԻՈՅ ,, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ,,:- Վենետիկ: 1926: Բնագրային: Եր.: 1972.- 839 էջ:

Համաբարբառում ընդգրկված բոլոր բառերի քանակը 39745 է, բառարանային բառերինը՝ 3424, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 1630:

Ի տարբերություն մյուս համաբարբառների, Կողբացու երկի առանձնահատկություններով պայմանավորված, չունի հատուկ անունների ցանկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԵՂԻՇԷ ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ:- Եր.: 1957: Բնագրային համաբարբառ: Գիրք 1-ին/ Ա-Ծ տառերը/: - Եր.: 1974.- 615 էջ: Նույնի բառա-քերականական տարբերակային հատորը:- Եր.: 1972.- 272 էջ:

Առաջինի՝ բնագրային համաբարբառի Ա-Ծ տառերով բառերի ընդհանուր քանակը 25 հազարից մի փոքր ավել է / ստույգ՝ 25047 բառ/: Բառարանային բառերի քանակը 2311 է, մեկ անգամ գործածված բառերինը՝ 1182: Երկրորդ՝ բառաքերականական ձևերն ընդգրկող հատորի բառերի ընդհանուր քանակը 40943 է, բառարանային բառերինը՝ 4596, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 2439: Երկու հատորն էլ սկսվում է Աբրահամ անվամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՋԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ,,ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ,, երկի՝ ըստ Մաշտոցի անվան մատենադարանի ,, Գիտական նյութերի ժողովածուի,,: - Եր.: 1952: Նո.2: ԳԱ հրատ.: 1978.- 245 էջ:

Ըստ այս համաբարբառի, Ջենոնի երկրում գործածված բառերի ընդհանուր թիվը 5344 է, բառարանային բառերի քանակը՝ 1082, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 545:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԿՈՐՅՈՒՆԻ ,, ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ,, երկի, բնագիրն ըստ 1941թ. հրատ.:- Եր.: 1972.- 229 էջ:

,, Վարքի,, բառերի ընդհանուր թիվը, ըստ համաբարբառի, 5882 է, բառարանային բառերի քանակը՝ 1675, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 985: Սկսվում է Աբրահամ անձանվամբ և ավարտվում ,, Քրիստոս Յիսուս,, բառակա-

պակցությամբ: Համաբարբառն ունի 146 անուն պարունակող ցանկ:
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ ,,ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԲԵՐԷՆ,,:- Վենետիկ: 1842: Բնագրային: - Եր.: 1981.- 707 էջ:

,,Թաթարաց պատմության,, բառերի ընդհանուր քանակը, համաբարբառի տվյալներով, 19 հազարից ավել է / ստույգ՝ 19163/, բառարանային բառերինը՝ 2566, իսկ մեկ անգամ գործածված բառերի թիվը՝ 1340, որից 128-ը բառերով արտահայտված թվականներ /թվեր/ են: 642-691 էջերը պարունակում են Հեթումի երկի բնագրային բոլոր բառերը, իսկ 633-641 էջերը հատկացված են ,,ժամանակագրությանը,,:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ ,,ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ,,:- Թիֆլիս: 1912: Բնագրային:- Եր.: 1976.- 703 էջ:

Համաբարբառը պարունակում է Դրասխանակերտցու ողջ բառաշարը: Միայն այս / առաջին/ հատորն ընդգրկում է Ա-Ե տառերը, որոնց ընդհանուր բառերի ու բառաձևերի քանակը 16121 է, բառարանային բառերի թիվը՝ 2154, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 1001: Համաբարբառի ,, Հատուկ անունների,, ցանկը պարունակում է 273 անձնանուն և տեղանուն: Համաբարբառի երկրորդ հատորը / 835 էջ/ սկսվում է Զ տառով/զ նախդիր/ և ավարտվում Օրազ բառով: Այս հատորը պարունակում է 157 անձնանուն և տեղանուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՒՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ,,. Բնագրային, գիրք 1-ին,/Ա-Ժ տառերը/:- Եր.: 1975.- 633 էջ: Բնագրային. գիրք 6՝ ,, Պատմութիւն հայոց,, և ,, Թուղթ առ Վահան Մամիկոնեան,,:- Տփխիս: 1904: Բառաքերականական համաբարբառ:- Եր.: 1972.- 347/գիրք 6 Ք/:

Ինչպես երևում է, Փարպեցու վերոհիշյալ երկերի համաբարբառը ներկայացված է երեք գրքով: Ըստ համաբարբառի տվյալների դրանցում գործածված բառերի ընդհանուր թիվը 39455 է, բառարանային բառերինը՝ 3531, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 2215:

Ինչ վերաբերում է համաբարբառում գործածված բառաքերականական ձևերին, ապա դրանց քանակը հասնում է 7240-ի: Բոլոր տեղանունների ու անձնանունների թիվը / ներառյալ նաև քերականական ձևերով արտահայտվածները/ հասնում է մոտ 1160-ի/ավելի ստույգ՝ 1157/:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՂԵՌՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:- Ս.Պետերբուրգ:- 1887: Բնագրային:- Եր.: 1978.- 958 էջ:

Սա մեծածավալ և խնամքով կազմված համաբարբառ է, որը նվիրված է այս մեծ գործի նախաձեռնող, հանգուցյալ ակադեմիկոս Ա.Ս.Ղարիբյանի հիշատակին:

Այս հատորը պարունակում է 32243 բառագործածություն, որոնցից 2510-ը բաժին է ընկնում և շաղկապին, 2031-ը գ/հայց.հոլովի հետ/, իսկ 621-ը՝ ի / որպես բացառականի քաղաքրիչ/ նախդիրներին: Բառարանային միավոր-բառերի քանակը 4522 է, որոնցից 511-ը հատուկ անուններ են: Մեկ անգամ գործածված բառերի թիվը 2271 է, որոնցից 268-ը հատուկ անուններ են:

ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՄԵԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ:- Մոսկվա: 1860: Բնագրային:- Եր.: 1975.- 350 էջ:

Մյուսների համեմատությամբ չափազանց աղքատ համաբարբառ է: Նրանում գործածված բառերի ընդհանուր թիվը 12305 է, բառարանային բառերինը՝ 2083, իսկ մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ մոտ 2400 / ավելի ստույգ՝ 2390/:

Համաբարբառում ևս ընդարձակ ցանկով ներկայացված են հատուկ անունները, որոնք անհամեմատ շատ են՝ 1536, որոնց շարքում օ և ֆ գրերով հատուկ անունները չափազանց քիչ են՝ ընդամենը երեքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ՝ Կ.ՄԱՐՔՍ ԵՎ Ֆ.ԷՆԳԵԼՍ. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ:- Եր.: 1968: Բնագրային:- Եր.: 1975.-677 էջ:

Համաբարբառն սկսվում է աբսոլյուտիզմ բառով և ավարտվում Ֆուրյերիստ բառով:

Այս հատորում գործածված բառերի ընդհանուր քանակը 8628 է, բառարանային բառերինը՝ 1732, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ մոտ 900 / ավելի ստույգ՝ 899/: Նշված բառաքանակը քաղաքական երկի համար բավականաչափ մեծ է և վկայում է գիտական կոմունիզմի երկու կորիֆեյների նաև հարուստ լեզվի մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ:- Տփխիս: 1913 /գիրք 1-ին, Ա-Լ տառերը/:- Եր.: 1975.- 871 էջ:/ Գիրք 2-րդ, Թ-Մ տառերը/:- Եր.:1976:-449 էջ: / Գիրք 3-րդ, Յ-Ֆ տառերը/:- Եր., 1976:- 551 էջ:

Սա մեծածավալ և հսկայական ջանքերի գնով ստեղծված գործ է, որը կազմված է մեքենագրական/ռոտոպրինտային/ երեք մեծադիր հատորից՝ 1911 էջաքանակով, 120 տպագրական և 105,5

հեղինակային մամուլ ծավալով։ Միայն առաջին հատորում գործածված բառերի ընդհանուր քանակը 34757 է, բառարանային բառերինը՝ 2990, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 1726։ Առավել մեծ հաճախականություն ունեն նախդիրները, շաղկապները և դերանունները։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ.ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ։- Եր.։ 1950/ հատ. 1-ի և 2-րդ/։ Բնագրային։ Եր.։ 1975-1976.- 777 + 840 էջ։

Համաբարբառն ընդգրկում է հայ մեծ բանաստեղծի պոեզիայի ողջ բառապաշարը։ Ըստ համաբարբառի երկհատորյակի տվյալների, Իսահակյանի պոեզիայում գործածված բառերի ընդհանուր թիվը մոտ 35980 է, բառարանային բառերի քանակը՝ 7521, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 3867։ ,, Աբու- լալա-Մահարի,, պոեմի ողջ բառապաշարը համապատասխանաբար կազմում է 3356, 1215 և 761 բառ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՇԱՆԴՈՐ ՊԵՏԵՈՒ. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ։- Եր.։ 1952։ Բնագրային։- Եր.։ 1974, 94 էջ։

Համաբարբառն սկսվում է Աղամ / Ադամ և Եվա/ անունով և ավարտվում է օրերից մի օր բառակապակցությամբ։

Ըստ 1952թ. հայերեն լույս տեսած ժողովածուի, նրանում գործածված բառերի ընդհանուր քանակը 2515 է, բառարանային բառերինը՝ 944, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 598։ Բոլոր գլխաբառերը հիշատակված են բնագրային օրինակներով։ Բառացանկը պարունակում է ընդամենը 17 անուն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ.ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՔԱՐԱՑ։- Երուսաղեմ։ 1870։ Բնագրային։- Եր.։ 1979.- 580 էջ։

Այս համաբարբառը թերի է և անհամեմատ անփույթ է կազմված. չկա անվանացանկ, չի նշված նրանում գործածված բառերի քանակը, ինչպես մյուսներում է։ Համաբարբառն միայն կցված է բարբառային բառերի ցանկը / էջ 553-580/, ըստ որի այդ բառերի թիվը հասնում է մոտ 8200-ի։ Համաբարբառն սկսվում է աբաղա/աբաղան/ բառով և վերջանում օրհնութիւն բառով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՓԱԻՍՏՈՍԻ ԲԻԻԶԱՆԴԱՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ։- Ս.Պետերբուրգ։ 1883։ Բնագրային։- Եր.։ 1976/Գիրք 1-ին, Ա-Ժ տառերը/.-668 էջ։ / Գիրք 2-րդ, Ի-Մ տառերը/։ Եր.։ 1976.- 569 էջ։

Առաջին հատորում Ա-Ժ տառերով սկսվող բառերի ընդհանուր քանակը 32652 է, որից 5138-ը բաժին է ընկնում

և շաղկապին, իսկ 4047-ը՝ զ նախդիրին: Բառարանային բառերի քանակը 1762 է, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 797: Երկրորդ հատորում գործածված բառերի ընդհանուր թիվը 18175 է, որից 3716 անգամ գործածված է ի նախդիրը: Բառարանային բառերի քանակը 1396 է, իսկ մեկ անգամ գործածված բառերինը՝ 570: Առաջին և երկրորդ հատորներում գործածված հատուկ անունների քանակը 541 է: Երրորդ հատորի հավելվածում նշված են առաջին և երկրորդ հատորներից բաց թողնված ես, Կաուսկան տոմ, Միջաշխարհ Հայոց բառերն ու բառակապակցությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. հատ. 1-12:- Եր. - 1974-1986.- 8673 էջ:

Այս 12 հատորից բացի, առանձին, սակայն առանց հատորահամարի, 1987թ. լույս է տեսնելու ,, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն,, հավելվածը, որտեղ էլ բազմակողմանիորեն ներկայացված է մեր հանրապետությունը:

ՀՍՀ-ում ամենից առաջ տեղ են գտել մեր մշակույթի մեծ ու անվանի երախտավորները, հայագիտական կենտրոնները, մեր բնակավայրերը, բնակլիմայական ու աշխարհագրական տարածքները: Առանձին հոդվածներում հանգամանորեն բնութագրվում են կուսակցության հայ լենինյանները, հեղափոխության մարտիկները, ՀԽԿ պատմության դրվագները, հանրապետության ժողովրդական տնտեսության ճյուղերը, ուսումնական և գիտական հաստատություններն ու կենտրոնները: Զգալի տեղ է հատկացված Հայաստանի հին ու նոր հարևան երկրներին, մշակույթի և ռազմական այն գործիչներին, որոնց կյանքն ու գործունեությունն առնչվում է Հայաստանի, հայ ժողովրդի, մեր մշակույթի հետ: Մի խոսքով՝ այն ամենը, ինչ կարող է և պետք է ընդգրկի հանրագիտարանը ընդհանրապես և Հայկական Սովետական հանրագիտարանը՝ մասնավորապես:

ՀՍՀ-ՌՈՒՍԵՐՆ ԲԱՌԱՐԱՆ / Խմբ. կազմ՝ Հ.Վ. Մաղոյան, Է.Ա.Սարգսյան, Ն.Ա.Սարդարյան, Ի.Դ. Ստելցովա, Է.Ս. Վարդումյան, Ն.Ա.Տեր-Գրիգորյան/: - Եր.: 1984.- 724 էջ:

Պարունակում է 75 հազար բառ-հոդված, որ ժամանակակից հայերենի առօրյա գործածության բառերի ամբողջությունն է: Դրանց մի զգալի մասը գիտա-մշակութային, հասարակական-քաղաքական և տեխնիկական տերմիններ է: Դրականն այն է, որ բառարանը հնարավորին չափ զերծ է հնաբանու-

թյուններից ու արխաիզմներից: Բառերը նշկայացված են ըստ նրանց հատկանիշների: Բազմիմաստ բառերի նշանակություններն առանձնացված են արաբական թվանշաններով և կետերով: Բառահոդվածների դիմաց նշված են նաև դրանց բնորոշ քերականական որոշ կարգեր / սեռ, հոլով, դեմք, թիվ և այլն/ և անվանական ու բայական խոսքի մասերի վերջավորությունները: Բառարանն ունի համառոտագրությունների և բառարանագրական ընդարձակ ցանկ:

ՀԱՅ-ՎՐԱՑԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ / 18-րդ դար/:

Սա հայերեն-վրացերեն այն վեց բառարաններից մեկն է, որը հրատարակվել է ավելի վաղ՝ 1790-ական թվականներին: Այն պարունակում է ութ հազար բառահոդված: Բառարանի հեղինակը / Ոմանք Ստեփան Վարդապետին են համարում հեղինակ/ ամբողջ բառանյութը քաղել է Մխիթար Սեբաստացու ,, Քերականութիւն գրաբառ լեզուի Հայկազեան սեռի,, / Վենետիկ, 1730/ աշխատությանը կցված բավականաչափ հարուստ բառացանկից, դրանց դիմաց նշելով վրացերենի համապատասխան համարժեքը: Բառարանը անթվակիր է. չի նշված նաև հրատարակության տեղն ու հեղինակը.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՓԵԼԻՔՍ,ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ,ՄՈՒԼՔԻՋԱՆՅԱՆ ՅԱԿՈՎ,ԿԱՄԱՔ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1986.- 113 էջ:

Սա, ինչպես նշված է նաև առաջաբանում, որ ,,... ըստ կառուցվածքի և՛ տերմինարան է, և՛ թարգմանական. բացատրական, և՛ տեղեկատու բառարան, նպատակ ունի հեշտացնելու նանաջ շինարարության հասկացությունների ու տերմինների հայերեն լեզվով միշտ ու տեղին օգտագործումը,,: Բառարանը պարունակում է 810 բառահոդված՝ այդ բնագավառի հիմնական հասկացությունները: Դրանք համարակալված և դասավորված են այբբենական կարգով:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ-ՏԵՐՄԻՆԱՐԱՆ. Գրակ 1 -ին: Հայկ. ՍՍՀ քարային շինանյութեր:- Եր.: 1976. - 130 էջ: Գրակ 2-րդ: Շինարարական մեխանիկա:- Եր.: 1976.- էջ 99: Գրակ 3-րդ: Պատալիզ, կատալիզատորներ:- Եր.: 1977.- 82 էջ: Գրակ 4-րդ: Հանքային օրգ, հանքաբանություն:- Եր.: 1978.- 147 էջ:

Վերը նշված չորս գրքերը, որ կազմվել են ՍՍՀՄ ԳԱ գիտատեխնիկական տերմինաբանական խորհրդի 1970թ. համապատասխան որոշման համաձայն, ընդգրկում են այժմ գործածության մեջ գտնվող հայերեն գիտատեխնիկական տերմինները՝ ռուսերեն

/ նաև միջազգային/ համարժեքներով հանդերձ: Բոլոր պրակների վերջում տրված են հայերեն և ռուսերեն, իսկ 2-րդ պրակում նաև գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն ցանկեր՝ համապատասխան բառերի էջանշումներով:

ՀԱՅՐԱՄԵՏՅԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏԱԾ ՄԵՋԲԵՐԻ ՈՒ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ / Անհրաժեշտ ձեռնարկ լրագիրներ ու գրքեր կարդալու/:- Թիֆլիս: 1908.- 308 էջ:

Այս բառարանը կազմված է բազմաթիվ այլ բառարանների ու հանրագիտարանների հիման վրա/Տես ,, Վերջաբանը,,/: Բառարանն ընդգրկում է օտարազգի և մեր ազգային մտքեր, դատողություններ, դարձվածային արտահայտություններ, ոճական կիրառություններ՝ Աբրա բառով սկսված, Ֆորտեպիանով /դաշնամուր/վերջացրած /չհաշված,, Բացթողված բառերի հավելվածը,, , տես էջ 305-306/:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ. ԱՌՁԵՌՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԳՐՔՈՒՅԿ:- Եր.: 1980.- 98 էջ:

Պարունակում է ուղղագրական տեսակետից որոշ դժվարություն ներկայացնող մոտ 1300 բառ, որոնք նաև ներկայացված են հանգամանալի բացատրությամբ ու ստուգաբանությամբ:

Բառգրքույկում խոսվում է նաև ուղղագրական մի շարք կանոնների ու երևույթների մասին, որի անհրաժեշտությունը ընդամենը էլ չի զգացվում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ:- Ալեքսանդրապոլ: 1912.- 14 426 էջ:

Այս բառարանը, որ պարունակում է 10 հազար բառահոդված, ամփոփում է օտարազգի և օտարագիր այն բառերն ու դարձվածները, որոնք գործածվում և, առհասարակ, գործածական են հայերենում: Դրանք քաղված են ժամանակի օտարազգի / գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն/ և հայերեն առավել աչքի ընկնող բառարաններից: Բառարանում նաև տեղ են գտել 19-րդ դարի հայ դասական գրողների երկերում գործածված օտար բառերը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ. ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1969.- 306 էջ:

Բառարանն ընդգրկում է հայերենում գործածվող լեզվաբանական-քերականագիտական, ինչպես նաև ոճաբանական բնույթի 4500 տերմին-բառահոդված, որոնք ներկայացված են թեմատիկ բառախմբերով:

Միևնույն գլխաբառի տակ տրված են նրանով կազմվող և նրա իմաստն արտահայտող տերմին-բառակապակցությունները:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ. ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ:-Թավրիզ: 1934.-462 էջ:

Պարունակում է 10 հազար բառահոդված, որոնց ընտրությունը կատարված է դասական պարսկերենի հիման վրա: Նշված են այն բառերը, որոնք երկկողմանի առնչություններ ունեն կամ հայերենում, կամ պարսկերենում / նկատի են առնված ուղղագրությունները/:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ. ՀԱՅԵՐԵՆԻՑ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թեհրան:1972.- 662 էջ:

Արժեքավոր աշխատանք է, որ ստեղծվել է երկար տարիների ընթացքում: Պարունակում է 24 հազար բառահոդված: Բառարանի համար հատկապես հիմք է ծառայել 15 անուն աշխատություն, որոնք հիշատակված են գրականության ցանկում: Բառահոդվածները տրված են հետևյալ սկզբունքով. հայերեն գլխաբառը, այնուհետև նրա պարսկերեն համարժեքը և դրա հայերեն տարբերակված ձևը:

ՀԵՔԻՄՅԱՆ ԹԱՂԱՏՈՒՐ.ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1971.- 318 էջ:

Ֆրանսերեն- հայերեն դպրոցական/ուսուցողական/բառարան ստեղծելու առաջին փորձն է հայ իրականության մեջ: Պարունակում է 8000 առավել գործածական և այդ տեսակետից մեծ հաճախականություն ունեցող բառեր: Գլխաբառերի դիմաց նաև նշված են նրանց բնորոշ քերականական կարգերն ու իմաստները: Թարգմանություններն ու բացատրությունները կատարված են՝ հիմնականում ուղեցույց ունենալով ուսուցողական սկզբունքները:

ՀՅՈՒԳՈ ՊՈԼ /HUGO POHL/. ԲԺՇԿԱԿԱՆ /ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ/: -Թիֆլիս: 1892;- 694 124 էջ:

Սա արժեքավոր աշխատություն է, բժշկագիտության և այս ճյուղավորին վերաբերող ոչ միայն բառարանների, այլև գիտատեսական ուսումնասիրությունների մեջ իր ուրույն տեղն ունեցող մի գործ, որի թարգմանությունն իրականացրել է հայ բժշկագիտության մեծ երախտավոր Լևոն Տիգրանյանցը՝ բուն բառարանին կցելով նաև ռուս-հայերեն բաժին: Բառարանը հանրագիտական բնույթի է. նրանում յու-

ոաքանչյուր բառահոդված ներկայացված է համակողմանիորեն, ընդարձակ բացատրությամբ պարունակում է 672 + 3500 բառահոդված:

ՀՅՈՒՆՔՅԱՐՊԵՏՅԵՆՑՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ.ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Գ.Պոլիս: 1694.- 409 էջ:

Թեև բառարանի հեղինակը մեծ հավակնություններով լույս աշխարհ բերեց իր գործը, սակայն սուր քննադատության ենթարկվեց հատկապես Ս.Տերվիշյանի և Հ. Աճառյանի կողմից: ,,Լուրջ,, այն համարեց.,, Մի գիրք, որու մեջ միայն չարաչար ծաղրված է ստուգաբանությունը և խայտառակված ամբողջ լեզվաբանությունը,,:

Բառարանը պարունակում է 5000 բառահոդված, որոնք մեծ մասով սխալ ու ,,խառնափնթոր,, են ստուգաբանված, ինչպես նշում է նաև Հ.Աճառյանը իր ,, Հայերեն արմատական բառարանի,, առաջաբանում:

ՀՅՈՒՐՄՈՒԶՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ.ԲԱՌԳԻՐՔ ՅԱՇԽԱՐՀԱԲԱՐ Ի ԳՐԱԲԱՌ ՀԱՅԴԵՐՁ ՈՃՈՎՔ ԻՒ ԲԱՑՅՏՐՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԵԱՑ:- Վենետիկ: 1869.- 572 էջ:

Այս ստվարածավալ աշխատությունը, որ պարունակում է 40 հազար բառահոդված, ,, Ի պէտս դպրոցաց,, նշանաբանն ունենալով հանդերձ, չափազանց ծոխ ու հարուստ բառարան է, որտեղ հնարավորին չափ ամփոփված է աշխարհաբարի բառանյութը՝ գրաբար թարգմանությամբ: Բառարանը բացվում է մի խրատական իմաստությամբ. ,, Ով որ իր ազգային լեզուն չսիրեր, իր հայրենիքը չսիրեր,,: Բառարանը հարուստ է նաև ոճերով և թևավոր խոսքերով:

ՀԱՅԼԻԱՆ ՊՈԼ.ԳՐԳՈՒՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ / թարգմ./: - Եր.: 1982.- 287 էջ:

Սույն բառարանը, ինչպես նշված է նրա անոտացիա-ուղեցույցում, ,,... համաշխարհային աթեիստական գրականության լավագույն նմուշներից է,, , որը սպանիչ երգիծանքով մեկ առ մեկ ,, բացատրում,, է կրոնի հետ կապված բառերը, տերմինները, հասկացությունները: Այս իմաստով ,,Գրպանի ասավաճաքանությունը,, կարող է փոխարինել քրիստոնեական կրոնի մասին լիարժեք տեղեկություններ պարունակող ձեռնարկի:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԻՍՈՂՈՄ.ԲԱՌԳԻՐՔ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ: Հատ. 1:-Թիֆլիս: 1388.- 591 էջ: Հատ. 2: 1893 .- 701 էջ:

Բառարանի առաջին հրատարակությունը լուրջ թերություններ ունենալու համար խիստ քննադատության ենթարկվեց, որի պատճառով

հեղինակը արմատական վերամշակման ենթարկեց բառարանը՝ նրանից հնարավորին չափ դուրս մղելով բարբառային և գրաբարյան բառանյութը, ավելի մեծ տեղ հատկացնելով աշխարհաբարին:

Բառագանձը ևս թարմացվեց և լրացվեց: Բառարանի առաջին հատորը պարունակում է 27, իսկ երկրորդը՝ 31 հազար բառահոդված:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԻՍԱԿ.- ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԾՈՑԱՏԵՏՐ/գործնական/:-Թիֆլիս: 1933.- 29 էջ:

Փոքրածավալ, աղքատիկ բառագրքույկ է՝ նախատեսված դպրոցականների, ըստ երևույթին Վրաստանի հայկական դպրոցների սովորողների համար: Պարունակում է միայն Ռ տառի գործածությունը համապատասխան բառերում /աքուռ, ագուռ,աթոռ, բամբիռ և այլն/: որոնք հերթագայված են այբբենական կարգով: Դրանցից շատերը ուղղագրական տեսակետից բնավ էլ դժվարություն չեն ներկայացնում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ. ՅԱՒԵԼՈՒԱԾ ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԸՍՏ ԱՆՁԵՒԱՑԵԱՑՕՐԻՆԱԿԻ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԴՐՔԻՆ:- Մոսկվա: 1893-35 էջ:

Եղիշեի ,, Վասն Վարդանաց և պատերազմի ,, երկի այս բառացանկը պարունակում է 542 բառահոդված, որոնք սովորական գործածության բառեր են, ինչպես նաև հատուկ անուններ,ոճեր, որոնք ռուսերեն թարգմանությամբ ներկայացված են իրենց ճիշտ ու համարժեքային նշանակությամբ: Սրան հակառակ, ինչպես վկայում է այս փոքրիկ բառացանկը, հայերենի համեմատությամբ ռուսերենի հատկապես ոճական-դարձվածաբանական հնարավորությունները անհամեմատ սահմանափակ են:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1924.- 173 էջ:

Բառարանը հրատարակվել է ՀՍԽՀ ԳԵՆՏԳՈՐԾԿՈՄի օրենսդրական հանձնաժողովի երաշխավորությամբ: Այն նախատեսված է իրավաբանական Ֆակուլտետի ուսանողության համար՝ որպես ձեռնարկ: Բառարանում հատկապես տեղ են գտել հեղափոխությունից հետո, սովետական հասարակարգին բնորոշ իրավաբանական տերմիններ ու հասկացություններ, թեև դրանցից շատերը, որ ամենօրյա գործածության տերմիններ են, դուրս են մնացել բառարանից:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ.ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ:- Կ.Պոլիս:1925.- 1072 էջ:

Ծոխ ու հարուստ բառարան է. պարունակում է 50 հազար բառահոդված: Նախորդ շրջանում հրատարակված հայերեն-ֆրանսերեն /կամ հակառակը/ բառարաններից, Գ.Լուսինյանի բառարանից հետո, ամենաարժեքավորն է, որի մեծագույն նպատակը ,,Կկայանա հայ բառերու ֆրանսերեն համարժեքներ գտնելու մեջ,,: Այսուհանդերձ, Ս.Մալխասյանը բացասական կարծիք է հայտնել այս բառարանի մասին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԻՀՐԱՆ. ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԱՀԱՅ:- Կ.Պոլիս:1941.- 816 էջ:

Սա ևս ծոխ ու հարուստ բառարան է և, գրպանի լինելով հանդերձ, պարունակում է 40 հազար բառ ու ոճ, որոնք ներկայացված են 816 էջի երկսյունակ շարվածքով: Բառարանն սկսվում է ֆրանսերեն a /a / ձայնավորի նկարագրությամբ և ավարտվում zuthaxn /զարեջուր/ բառով: Թեև բառարանը ծոխ ու ընդարձակ է, բայց և այնպես ծավալը թույլ չի տվել ըստ ամենայնի ընդգրկել հատկապես ոճերն ու դարձվածները:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ,ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ,ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ,ՊՈՊՈՎՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս: 1919.- 100 էջ:

Բառարանը, որ պարունակում է 1400 բառահոդված-տերմին, հայ իրականության մեջ իր իսկական նշանակությամբ ու բովանդակությամբ առաջին իրավաբանական բառարանն է, որի բառանյութը /գլխաբառերը/ համեմատվել են հայերեն առավել արժեքավոր բառարանների բառազանձի հետ և, միաժամանակ, մինչև տպագրության հանձնելը, դրվել է մասսայական քննության: Դրանից բառարանը զգալի չափով շահել է:

ՀԱՄՎԵՐԻՅԱՆ ԼԵՎՈՆ.ԹԱՏԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.1986.- 208 էջ:

Պարունակում է դրամատիկական թատրոնին ու թատերագրությանը վերաբերող և ժամանակակից հայոց լեզվում գործածվող այդօրինակ գրեթե բոլոր տերմինները: Բառարանը հատկապես արժեքավոր է այն տեսակետից, որ նրանում օտար տերմինները համակարգված են հայերենի նույնիմաստ տերմին-հասկացություններին համապատասխան:Այս առումով էլ հաշվի են առնված հայ թատրոնի և թատերական գրականության մեջ օգտագործվող տերմինների,հասկացությունների առանձնահատկու-

թյունները՝ ի տարբերություն մշակութային կյանքի այլ բնագավառներում գործածվող տերմինների ու հասկացությունների:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Հ., ՇԱՏ Ի., ՄԱԹՍԻ Ա. ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԱԲԵՐԵՆ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ:- Հալեպ:1954:

Բառարանը պարունակում է 9 հազար բառահոդված, որոնք բացատրված են համառոտ, գրեթե բառին՝ բառ մեկնաբանությամբ. Դրա հիմնական պատճառն այն է, որ բառարանը նախատեսված է դպրոցականների համար և հետապնդում է ուսուցողական նպատակ:

ՀՈՎՎՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1966- 184 էջ:

Բառարանն ընդգրկում է ռուսերեն պոլիտեխնիկական տերմինները, որոնք հեղինակը թարգմանաբար ներկայացրել է հայ ընթերցողներին, մասնավորապես դպրոցականներին, որոնց համար նախատեսված է այն: 1985թ. լույս տեսավ այս բառարանի երկրորդ, վերամշակված ու համալրված հրատարակությունը, որը պարունակում է 8000 մասնաճյուղային բառահոդված-տերմին:

ՂԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ.ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՅԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ: -Եր.: 1982.- 725 էջ:

Մոտ 36 հազար բառ պարունակող այս բառարանը հայ իրականության մեջ առաջին փորձն է, ընտրանքի հիմքում ընկած են գործառական տարբեր ոլորտներ / գրականություն՝ արձակ, չափածո, դրամատուրգիա, մանկական, լեզվաբանության, գրականագիտական, գիտամասսայական գրականության, դասագրքեր, մամուլ, 15-17 տարեկան պատանիների ու աղջիկների շեզոք բառապաշար և այլն/՝ դրանց վերաբերյալ բառօգտագործման համապատասխան քանակությամբ:

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ. ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ-ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1981.- 180 էջ:

Բառարանն ընդգրկում է 3150 հայերեն բուսանուն՝ ներկայացված նաև վերոհիշյալ օտար լեզուներով: Որոշ բուսանուններ, որոնք չունեն հայերեն համարժեքներ, կազմվել են օտար բուսանունների բառացի թարգմանության համապատասխան, իսկ մի շարք բուսանունները էլ ներկայացված են լատինական կամ ռուսական տառադարձությամբ: Հիմնական մասից բացի բառարանն ունի նաև հավելված, որը պարունակում է

60 բուսանուն, ինչպես նաև հինգ լեզվով ինդեքսավորված ցանկ:
ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ,ՇԵԿՈՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ.ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1981.- 270 էջ:

Սա այս բառարանի վերջին, վերափոխված տարբերակն է,որտեղ ավելացված և լրացված են գիտության,տեխնիկայի, աշխատանքի ու կենցաղի տարբեր բնագավառներին վերաբերող 17 հազար բառ, որոնք ուղղագրական տեսակետից ներկայացնում են որոշ դժվարություններ:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ,ՊԱՐԻՍ ԳԵՎՈՐԳ.ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ. 1-ին հրատ. - Եր.: 1950.- 180 էջ: 2-րդ հրատ.:- Եր.: 1959.- 256 էջ:

Բառարանի վերջին հրատարակությունը, որն ավելի կատարյալ ու լրացված տարբերակն է, պարունակում է 13 հազար բառ: Լրացված և բարեփոխված է նաև հնչյունաբանության/հնչյունափոխություն/ և բերականական գիտելիքների բաժինը:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ: 1-ին հրատ.:- Եր.: 1968.- 1421 էջ: 2-րդ հրատ.:-Եր.: 1977.- 1434 էջ: 3-րդ հրատ.:- Եր.: 1982.- 1434 էջ:

Այս ստվարածավալ բառարանը, որ պարունակում է 85 հազար բառահոդված և շուրջ 100 հազար բառ և դարձված, հայ բառարանագրության նվաճումներից է: Հեղինակն օգտագործել է հայերեն և ռուսերեն /հայերեն-ռուսերեն և ռուսերեն-հայերեն/ արժեքավոր բառարանները:

Բառահոդվածները մեկնաբանված են բազմակողմանիորեն՝ գիտաբացատրական և բերականական իրողությունների նշումով, որոնց բոլորի մասին հնարավոր չէ խոսել:Բառարանի բերականական- գիտատեսական բաժինը ևս հարուստ տեղեկություններ է պարունակում:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ,ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ,ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1945.- 528 էջ:

Ժամանակի՝ 1940-50-ական թվականների երկլեզվյա լավագույն բառարաններից է, որը պարունակում է բանավոր խոսքի և գրականության մեջ հաճախ գործածվող 28 հազար բառ: Բառարանը, ինչպես նշված է նախաբանում, կարող է ծառայել նաև իբրև օժանդակ ձեռնարկ՝ բանավոր խոսքին տիրապետելու համար:

Հատկապես ռուսերենը նոր սովորողներին օգնելու նպատակով բառարանի վերջում այդ լեզվի վերաբերյալ տրված

են որոշ տեղեկություններ: Բառարանը նաև պարունակում է մի քանի ցանկեր և աղյուսակներ / տես էջ 518-528/:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ, ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ, ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ, ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1960.- 442 էջ:

Այս բառարանի առաջին հրատարակությունը / Երևան, 1947 թ./ պարունակում է 28 հազար բառահոդված: Սա բառարանի երկրորդ հրատարակությունն է, որը պարունակում է 40 հազար բառահոդված: Այսքանով հանդերձ, բառարանը մասնակիորեն էր բավարարում ժամանակի պահանջները: Նրա ,, Հավելվածում,, համառոտ տեղեկություններ են տրվում հայերենի հնչյունաբանության, հայերենից ռուսերենին և, ընդհանրապես, թարգմանության, հնչյունական զուգահեռների, արտասանական առանձնահատկությունների և այլ իրողությունների մասին: Բառահոդվածները հիմնականում բառային են:

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ.ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1940.- 103 էջ:

Պարունակում է 4500 բառ, որոնց վերաբերյալ տրվում են համառոտ տեղեկություններ: Այս բառարանն հետագայում ունեցավ մի քանի հրատարակություն՝ 1945 և 1947 թթ., հետագայում 1956 և 1959թթ. Գ. Պարիսի և Գ.Շեկյանի հեղինակակցությամբ: Դրանք արդեն լրացված ու շարադրված էին և ուսուցողական տեսակետից էլ բավարարում էին սովորողների պահանջները:

ՃԱՄՃԵԱՆ ՓԻԼԻՊՈՍ. ԲԱՌԱՐԱՆ ԻՏԱԼԵՐԷՆ-ԳԱՂՂԻԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ-ՏԱՃԿԵՐԷՆ: - Վիեննա: 1846.- 12 + 1120 էջ:

Պարունակում է 60 հազար բառահոդված և ընդարձակ առաջաբան, որտեղ հանգամանորեն խոսվում է դասական հայերենի և մեր բարբառների բառանյութի ու դրա բառարանագրման կարևորության մասին: Բառարանում ընդգրկված բառերն ու պատրաստի խոսքաձևերը բացատրված են բազմակողմանի՝ իրենց բոլոր նշանակություններով ու բնագրային կիրառություններով:

ՃԱՄՃԵԱՆ ՓԻԼԻՊՈՍ.ԹՈՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ ԳԱՂՂԻԵՐԷՆ,ԱՆԳԼԻԵՐԷՆ,ՀԱՅԵՐԷՆ, ՏԱՃԿԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԻՏԱԼԵՐԷՆ:- Վիեննա: 1848.- 726 էջ:

Բառարանի տիտղոսաթերթի վրա համառոտակիորեն նշված է նրա պարունակության մասին. ,, Գործնական բառից հավաքում, խոսքի ձևով լծորդություններ, սկզբնական խոսքեր, ամեն կերպ նյութերու վրա խոսակցություններ և

ատակներու համեմատություն,,՝ վերոհիշյալ վեց լեզուներով։ Սա վերաբերում է բառարանի առաջին մասին. երկրորդ, երրորդ և չորրորդ բաժինները անվանված են ,, Լեզուներ,, / էջ 244-309/, ,, Սկզբնական խոսքեր,, / էջ 310-318/, ,,Խոսակցություն,, / էջ 319-325/։

ՅԱՄԱՆԱՆ ՓԻԼԻՊՈՍ. ՀՈՐԱԼԵԶՈՒԵԱՆ ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀԱՄԵՄԱՏԱԼ Ի ՎԵՑԼԵՑՈՒԵԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԵՆԷ։ - Վիեննա։ 186.- 141 էջ։

Այս համառոտ բառարանը բաղկացած է երկու մասից. ,,Բառերու հավաքում,, / էջ 1-63/ և ,,Խոսակցություն,, / էջ 64-141/։ Առաջին բաժինն ընդգրկում է 29 ենթաբաժին/աներևույթ աշխարհ, երևելի աշխարհ, ժամանակի բաժանում, օդերևույթներ, ջուր, երկիր, հանքային նյութեր և այլն/, իսկ երկրորդը՝ առօրյա խոսակցություններ ու արտահայտություններ/նախաճաշիկ, բժշկի հետ, մարդ հարցնել, հրաժեշտ տալ և այլն/, որոնցից շատերը բացատրված են բազմակողմանիորեն։

ՅԵԼԱՆՑԵՆ ԳՐԻԳՈՐ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵԱՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ / 2-րդ հրատ./։- Վենետիկ։ 1865, 849 էջ։

Սա իրականում Մ.Ավգերյանի Առձեռն բառարանի երկրորդ, լրացված հրատարակությունն է, որն իրականացրել և 5000 բառով համալրել է Գ.Ցելալյանը։

Ծոխ ու ընտիր բառանյութ պարունակող բառարան է, որն ամփոփվում է 56 հազար 410 բառ։ Դա գրաբարի ետին շրջանի / 10-12-րդ դար/ բառապաշարի գրեթե լրիվ-ամբողջությունն է, եթե հաշվի առնենք, որ այս ընտրությունը կատարված է խստագույն չափանիշով։

ՅԻՎԱՆՅԱՆ ՆԵՇԱՆ.ԱՌՁԱՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎԱՆՑ՝ ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՔ։- Կ.Պոլիս։ 1879.- 645 297 էջ։

Բաղկացած է երկու մասից. առաջինն ընդգրկում է օտար պատմա-աշխարհագրական և դիցաբանական հատուկ անունները՝ 12 հազար բառահոդվածով / 645 էջ/, իսկ երկրորդը՝ հայկական հատուկ անունները՝ 4 հազար բառահոդվածով/ 297 էջ/։ Սրանք միմյանցից անկախ, առանձին բառարաններ են։ Բառահոդվածները մեկնաբանված են բազմակողմանիորեն՝ տեղանվան աղբյուրի, ծագման և այլ հանգամանքների ու փաստերի նշումով։

ԺՈԼՈԼՅԱՆ ՀԱԿՈԲ / ՍԻՐՈՒՆԻ/. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Կ.Պոլիս: 1914.- 64 էջ:

Բառարանի և շապիկի, և տիտղոսաթերթի վրա նշված է. ,,Պատրաստեց Յ.ժ.,, , որը Հակոբ Ժոլոլյանն է / Սիրունի/: Այս բառարան-բացատրագիրը պարունակում է 22 հոմանուտ-շաղկապական բառահոդված, որոնք թեմատիկ առումով անվանված են՝ բանակի մասերը, բանակի դասերը, բանակի կարգերը, բանակի բաժանումները, բանակի ղեկավարությունը, պատերազմ, նավատորմ և զինվորական-ռազմական այլ հասկացություններ և այլն՝ համապատասխան բացատրություններով ու մեկնաբանություններով հանդերձ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻԲԵՌՆԵՏԻԿԱՅԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ: Եր.: 1986.- 34 էջ / կազմել է Ս.Մելիքյանը, իսկ թարգմանությունները կատարել է Վ.Սաղաթելյանը/:

Երևանի համալսարանի կողմից հրատարակած այս գործը հայ իրականության մեջ առաջին փորձն է, որը ընդգրկում է մաթեմատիկական մեթոդների և էլեկտրոնա-հաշվողական տեխնիկայի վերաբերյալ 340 առավել գործածական հապավում-տերմիններ, որոնք նաև արտացոլում են գիտության վերոհիշյալ բնագավառում և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում կիրառվող նոր մեքենաների, մեխանիզմների, սարքերի, գիտահետազոտական հիմնարկների, ուսումնական հաստատությունների անվանումներ, չափման միավորների նշանակումներ և այլն:

ՄԱԼԵԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԲԱՌՏԵՏՐ ՌԱՄԿՈՐԵՆԷ Ի ՀԱՅԵՐԷՆ:- Կ.Պոլիս:1874.- 85 էջ:

Հայտնի հայկաբան, Կեղրոնական հայոց լեզվի և գրականության քարեշնորհ ուսուցիչ Հ. Մալեզյանի այս բառարանը, որի լրիվ անվանումն է՝ ,,Բառտետր ռամկորենէ ի հայերէն մաքուր աշխարհաբառ խոսելու փափաք ունեցողներուն համար,, , ունի մի մշմարիտ նշանաբան. լավ է խոսել մայրենի գավառաբարբառով կամ չիմացած ու անհասկանալի բառի փոխարեն օգտագործել մայրենի լեզվի բարբառային ձևերը, քան ,,օտարածայն բառերու մոխությամբ,, , որը ,, բիչ ոնպատվություն չի բերեր ազգային դպտիարակությանը,,:

ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ.ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Երևան: 1944-1948:- 22+2380 էջ:

Հիրավի, ծովածավալ է այս բառարանի պարունակությունը: Զորս մեծադիր ու ծավալուն հատորներից առաջինն ընդ-

գրկում է 32000, երկրորդը՝ 25000, երրորդը՝ 31000, իսկ չորրորդը՝ 32000 / ընդամենը 120000/ բառահոդված, որոնք ներկայացնում են արդի գրական հայերենի բառապաշարը՝ դարավերջի և դարասկզբի չափանիշով: Իսկ եթե սրանց ավելացնենք նաև այն հազարավոր ռմները, թևավոր խոսքերն ու դարձվածները, որոնք շռայլորեն սփռված են բոլոր հատորների էջերում, ապա պարզ կլինի, թե ինչ արժեք ունի հայ բառարանագրության դափնեպսակը՝ Ս.Մալխասյանի բացատրական բառարանը:

ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ, ՄԱՆԿՈՆՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆԵՐՍԵՍ. ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ ԵՐԿԱԹՈՂԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ:- Թիֆլիս: 1925.- 3 +170:

Այս բառարանի աշխատանքներին մասնակցել են նաև Հ.Ապենդիարյանը, որը ինժեներ Լ.Տեր-Միքայելյանի պահանջով բառարան է մտցրել նաև տարիֆային բնույթի բառեր, որոնց անհրաժեշտությունն այս բառարանը բնավ էլ չէր զգում: Բառարանը պարունակում է 10 հազար բառահոդված, որոնցից շատերը կամ միակողմանի, կամ էլ սխալ են մեկնաբանված: Բառարանում նաև տեղ են գտել անհարկի բարբառային բառեր ու արտահայտություններ:

ՄԱՆՈՒ-ՋԱԴԷ Զ. , ԿԱՍԸՄ-ԲԵՅԼԻ Ղ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Բաքու: 1933.- 22 էջ:

Ժամանակի թելադրանքով ստեղծված այս փոքրիկ բառգրքույկը նախատեսված է երրորդ խմբի սովորողների համար և, որպես հավելված, կցված է նրանց դասագրքին: Բառացանկը ներկայացված է 74 պարագրաֆով: Բառահոդվածները համակարգված են ոչ թե այբբենական կարգով, այլ թեմատիկ խմբերով:

ՄԱՆՈՒ-ՋԱԴԷ Զ. , ԿԱՍԸՄԲԵՅԼԻ Գ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Բաքու: 1933.- 29 էջ:

Սա հեղինակների նույն թվականին լույս տեսած ,,Թուրք-հայկական բառարանի ,, մեկ այլ տարբերակն է՝ նախատեսված ոչ թուրքական / ադրբեջանական/ դպրոցների չորրորդ դասարանցիների համար: Ադրբեջաներեն յուրաքանչյուր գլխաբառի դիմաց նշված է հայերեն համարժեքը: Դրանք առավելապես խոսակցական միջավայրի բառեր են / անուն, հայ, ամառ, վրացի, վրացական և այլն/: Բառգրքույկը բաղկացած է թեմատիկ բնույթի 97 պարագրաֆից / բառափնջից/, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է 10-50 բառ:

ՄԱՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ.ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1975.-334 էջ:

Պարունակում է պոլիգրաֆիական-տպագրական արտադրության և հարակից բնագավառների հետ առնչվող հազար քառ -հասկացություն, որոնցից շատերը վաղուց ի վեր ձեռք են բերել տերմինի արժեք: Դրանք բացատրված են համառոտ և ընդարձակ՝ պայմանավորված տվյալ քառահոդվածի բովանդակությամբ ու նշանակությամբ: Որոշ քառահոդվածներ նաև պարունակում են պատմական տեղեկություններ: Դրանցից շատերը պատկերված են համապատասխան նկարներով:

ՄԱՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1977.-300 էջ:

Բառարանն ընդգրկում է տպաձևերի պատրաստման /ձեռքի և մեքենայական շարվածք, ստերեոտիպի և ֆոտոցինկոգրաֆիայի/, պատագրական,կազմարարական-բրոշյուրավորման պրոցեսների,տառաձևերի պատրաստման և դրանց մեքենա-ստրքավորումների և այլ աշխատանքների վերաբերյալ շուրջ վեցհազար բարդ և բաղադրյալ տերմիններ ու հասկացություններ, որոնք տրված են գլխաբառերի և քառափնջերի ձևով: Բառարանը նաև պարունակում է որոշ պատմական, այսպես կոչված՝ հնացած տերմիններ՝ հնց.նշումով:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ.ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂՀՑՈՒԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ / Տես հեղինակի ,, Հայերենի քաղհյուսական բարդությունները,, գրքի էջ 87-300/: - Եր.: 1986.- 307 էջ:

Ինչպես երևում է, սույն բառարանը հեղինակի տնտեսական աշխատանքի մի / երկրորդ/ ավելի ընդարձակ ու ծավալուն մասն է, որտեղ ի մի են բերված արդի հայերենի քաղհյուսական բարդությունները, որոնք քաղվել են հայ դասական և ժամանակակից գրականությունից և այլ աղբյուրներից: Բառարանը պարունակում է չորս հազարից ավելի քաղհյուսական բարդություններ, որոնք համակարգված են այբբենական սկզբունքով՝ հիմնականում բաղադրիչների տարանջատ գրությամբ, որ, հիրավի, բխում է քառերի և նման բարդությունների ռառարանագրման պահանջներից:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ: ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1975.- 147 էջ:

Բառարանի ամբողջ պարունակությունը /հայերեն,ռուսերեն, նաև օտար հապավումներ/ կազմում է 4 հազար քառահոդված, որոնց մեկնաբանություններին հաջորդում են համապատասխան բնագրային կամ հեղինակային օրինակներ: Բոլոր հա-

պավումները տարբերակված են հետևյալ տեսակներով՝ տառային /ՍՇԳ,ԼԿԵՄ/, վանկային / Անդրժողկոմ, աշխղեկ/, վանկա-բառային /արտգործմինիստրություն, Ֆինբաժին/, խառն/Հայկական ՍՍՀ, ՀամԼԿԵՄ/:

Բառարանում տեղ չգտած հապավումները ևս թվարկված են:

ՄԱՐՏԻԿՅԱՆ ՈՍԿԵՆ.ԲԱՌԱՐԱՆ ՄՏԱԾՈՒՄԻ /հատ.1/:- Կահիրե: 1939.- 273 էջ:

Բառարանի դերի ու նշանակության, նրանում ամփոփված շառահղվածների մասին նրա անոտացիայում ասված է. ,,Բառերի իմաստի ընդլայնում, բաղդատություններ, առաջարկներ, վերագնահատումներ, անցյալեն հակիրճ հիշատակներ,, և այլն, որոնց վերաբերյալ բառերն ու արտահայտությունները, իրոք, ստիպում են մտածել, խորհել և դրանք չափել ու վերլուծել կյանքի այսօրվա չափանիշներով ու ըմբռնումներով: Բառարանի երկրորդ մասը պարունակում է անձնանունների և տեղանունների ոչ մեծ ցանկ:

ՄԵԼԻՔ ԱԼԵՔՍԱՆԴՐ.ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐՈՒ ԵՎ ՈՃԵՐՈՒ:- Բոստոն: 1912.- 230 էջ:

Բառարանը թեև համառոտ է / այն պարունակում է 1500 բառահոդված/, բայց և այնպես արժեքավոր է: Նրանում ամփոփված են արդի միջազգային գիտատեխնիկական տերմինաբանությունը, Ֆրանսերենից և եվրոպական այլ լեզուներից հայերենին անցած բառերն ու տերմինները:

ՄԵԼԻՔ ԱԼԵՔՍԱՆԴՐ. ԳՐՊԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐ:- Նյու-Յորք:1930.- 359 էջ:

Սա հեղինակի 1912թ. Բոստոնում հրատարակված ,, Բառարան հայերենի մեջ գործածվող օտարազգի բառերու և ոճերու,, աշխատության վերամշակված և լրացված տարբերակն է, որը պարունակում է չորս հազար բառահոդված: Դրանք հեղինակը մեծ մասով հայթայթել է սովետահայ մամուլից:

ՄԵԼԻՔՅԱՆ ԴԱՎԻԹ. ԲԱՌԱՐԱՆԻ ՅԵՐԻՑՍ ՀԱՏՈՐՍ (Князь Меликов, Лексикон Российско-Армяно-Грузинский).

Սա երեք առանձին հատորներից կազմված անտիպ բառարան է, որոնցից առաջինը՝ ռուսերեն-հայերեն-վրացերեն /զբաղեցնում է 152 էջ և պարունակում է 7500 բառահոդված/, երկրորդը՝ հայերեն-ռուսերեն-վրացերեն /142 էջ և պարունակում է 8500 բառահոդված/, իսկ երրորդը վրացերեն-ռուսերեն հայերեն/զբաղեցնում է 120 էջ և պարունակում է 7000 բառա-

հողված/: Քերականական նշումները և բացատրությունները տրված են թարգմանված ձևերից հետո:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ.ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1983.- 148 էջ:

Նախատեսված է զինակոչային տարիք ունեցող երիտասարդների համար, նկատի ունենալով, որ ռազմական գործը, զինվորական ծառայությունը տարվում են միայն ռուսերեն լեզվով: Բառարանը պարունակում է յոթ հազար տերմին և տերմինային կապակցություն, որոնց մի զգալի մասը առնչվում է հարակից գիտությունների /աշխարհագրություն, օդերևութաբանություն, տեղագրություն, քիմիա, ֆիզիկա, տեխնիկա և այլն/ հետ և գերազանցապես գործածվում է- դրանց շրջանակներում:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ,ՍԵԿՈՅԱՆ ԱՐԱ.ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1963.- 232 էջ:

Պարունակում է 10 հազար բառահոդված՝ ,, ... արդի հայերենի ամենագործածական բառերը և դրանց հնարավոր ճիշտ թարգմանությունը,, ,- ինչպես նշված է առաջաբանում: Դրանց մեջ մտնում են ոչ միայն միջնակարգ դպրոցի ծրագրով նախատեսվող, սովորողների ակտիվ բառապաշարը կազմող բառերը, այլև այնպիսիները, որոնք դպրոցականին անհրաժեշտ են լրացուցիչ / արտադպրոցական/ գրականություն կարդալու և հասկանալու համար:

Բառարանը նաև պարունակում է քերականական տեղեկություններ:

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ,ՊԱՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Երևան: 1958.- 242 էջ:

Սա նույնպես պարունակում է 10 հազար բառահոդված և նախատեսված է միջնակարգ դպրոցի բարձր դասարանների սովորուլների համար: Բառարանն ամփոփվում է առավել մասսայական և հաճախակի գործածվող բառեր և քերականական ձևեր: Բառարանը նաև պարունակում է քերականական նախագիտելիքներ: Հատկապես մատչելի են ներկայացված բայի դիմավոր ձևերը:

ՄԵՂՐԵՑԻ ԵՐԵՄԻԱ,ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ / Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Մ.Ամալյանի/:- Երևան: 1979.- 445 էջ:

Սա Երեմիա Մեղրեցու անունով հայտնի և հրապարակված ,,Բառգիրք հայոց,, արժեքավոր բառարան-հետազոտությունն է, որը, իբրև հայ միջնադարյան բառարանագրու-

թյան գլուխգործոց և որպես հուսալի սկզբնաղբյուր, նշանակալից դեր է խաղացել հայ բառարանագրության զարգացման գործում: Բառահոդվածները ներկայացված են հնգական փնջով: Դրանց դիմաց նշված են համապատասխան բացատրություններ՝ մեկ կամ մի քանի համարժեքով:

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԻՆԱՍ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ-ԱՆԳԼԻԵՐԷՆ:- Կ.Պոլիս: 1902.- 506 էջ:

Թեև բառարանը վերնագրված է առձեռն, սակայն այն ավելի հարուստ է և աչքի է ընկնում իր ծավալությամբ: Պարունակում է 25 հազար բառահոդված, որոնց ընտրությունը կատարված է Հայկազյան առձեռն բառարանի հիման վրա: Յուրաքանչյուր գլխաբառի դիմաց անգլերենի իմաստի նշումից առաջ, նշված են նաև քերականական իրակությունները / սեռ, թիվ, խոսքիմասային պատկանելություն և այլն/:

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԻՆԱՍ. ԲԱՌԱՐԱՆ ԵՐԵՔԼԵՔՈՒԵՍՆ՝ ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՀԱՅԵՐԷՆ ԵՎ ՀԱՅԱՏԱՌ ԾՈՒՐՔԵՐԷՆ: 1-ին հրատ.:- Կ.Պոլիս: 1893.- 8 + 1064 էջ: 2-րդ հրատ.: - Կ.Պոլիս: 1908. - 10 + 996 էջ:

Բառարանը պարունակում է 22 հազար բառահոդված. ունի հատուկ անունների ցանկ և ընդարձակ առաջաբան, ուր հանգամանորեն բացատրված են քերականական մասնիկների և կարգերի իմաստն ու նշանակությունը: Բացի այդ, բառարանին կցված են ,, Բացատրութիւն համառօտագրութեանց,, /օտարալեզվով/ և ,, Համառօտութիւնք բառարանիս,,/ հայերեն/, որոնք ծառայում են իբրև ,, բանալիք,,:

ՆԻՍՔԱՑՍ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Հռոմ: 1893.- 16 1114 էջ:

Սա թեև հեղինակի հայերեն-լատիներեն բառարանից ավելի ծոխ է ու ծավալուն, բայց և այնպես գիտական առումով զիջում է նրան: Պարունակում է 40 հազար բառ ու տերմին, նաև ծավալուն առաջաբան. Բառարանի 1-16 էջերը հատկացված են հայերենի և լատիներենի քերականական ընդհանրություններին ու առանձնահատկություններին:

ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ:- 1-ին հրատ.:- Հռոմ: 1887.- 27 + 483 էջ: 2-րդ հրատ.:- Լուվեն: 1966.- 27+483 էջ:

Բառարանի առաջին էջերը / 1-27/ հատկացված են հայերենի և լատիներենի քերականական մի շարք իրակություն-

ների / հոլովման ու խոնարհման տիպերն ու համակարգը, քայլական լծորդությունները, անվանական և քայլական կարգեր և այլն/ պարզաբանմանը: Իսկ մնացած մասը հատկացված է հայերենից-լատիներեն տերմինաբանությանը: Բառարանը հատկապես աչքի է ընկնում հոմանիշների առատությամբ:

ՄԻՍՔՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԾՈԽՈՒԹՅԱՆՑ:- Փարիզ: 1910.- 148 էջ:

Որպես առանձին բառարան, արտաոպվել է ,, Բանասեր,, հանդեսից: Այն պարունակում է մեր լեզվին բնորոշ և նրա բառագանձի մի յուրօրինակ մասը կազմող նույնարմատ, սակայն քերականական տարբեր ձևերով հանդես եկող կրկնավոր /կրկնաբան/ պատրաստի խոսքաձևերը / Օր. հմայս հմայեմ, մանրեմ մանր, խնդում զխնդութիւն և այլն/: Գանձարանը բաղկացած է երեք մասից, որոնցից առաջինը պարունակում անվանական, երկրորդը՝ քայլական, երրորդը՝ չթեքվող խոսքի մասերով արտահայտված կրկնաբանությունները:

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՂՆԻԿ,ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ / 4-7-րդ դաս /:- Եր.: 1983.- 118 էջ:

Այս բառարանը գրեթե նույն նպատակն է հետապնդում, ինչ Ա.Յափուջյանի կազմած բացատրական բառարանը, որն ընդգրկում է 5-8-րդ դասարանների նյութերը: Բառարանը պարունակում է գրականության ընթերցանության ծրագրային հիմնական և լրացուցիչ նյութերի դժվար ըմբռնելի բառերը, որոնցից շատերը ոճեր ու դարձվածներ են:

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ.ԲԱՌԱՐԱՆ ՊՈՒԼԳԱՐԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ-ՏԱՃԿԵՐԷՆ:- Սոֆիա: 1904.- 543 էջ:

Բուլղարերեն-հայերեն /տաճկերեն/ առաջին բառարանն է, որը պարունակում է ,, գիտական, գրական և վերա կան, նաև գեղջկական և հողագործական բազմաթիվ բառերու նշանակությունները..., նաև ոճեր, ասացություններ և բառի մը մնկե ավելի առումները...,,/ Տես ,, Առաջաբան,, , էջ Զ/: Բառարանը նաև պարունակում է բուլղարերենի և հայերենի այբբենական ցանկը, ինչպես նաև ,, Քերականական հիմնական,, ընդարձակ բաժինը / տես էջ ԺԳ-ԽԵ/, որտեղ բազմակողմանի քննությամբ ներկայացված են երկու լեզուների խոսքի մասերը, նրանց առանձնահատկությունները: Բուլղարերենի դլխաբա-

ռելի դիմաց հայերեն և տաճկերեն համարժեքները գրեթե հավասար քառաջանակով են նշված: Գլխաբառերը տրված են նոր բուլղարերենով, քանի որ հինը ժողովրդին անհասկանալի է: Գլխաբառերի ընդհանուր թիվը 25 հազար է:

ԾԿՐՏԱՅՄՆ ԼԵՎՈՆ.ՀԱՅԵՐԵՆ-ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ /Армяно-немски разговорник/:- Գլովդիվ: 1941:

Բառարանը գիտա-գործնական և ուսուցողական նպատակով է ստեղծված՝ նախատեսված Բուլղարիայում գործող հայկական դպրոցների սովորողների համար: Հայերեն գլխատառերի դիմաց նշված է միայն նրանց խոսքիմասային պատկանելությունը, իսկ գերմաներեն համարժեքների դիմաց, դրանից բացի, նաև քերական սեռը, թիվը, առանձին բառերի համար՝ նաև այլ իրակություններ:

ՄՈՄՋԵԱՆ ՅԱԿՈԲ.ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ԱԲԱԲ ԲԵՐՆԻՆ ՄԷՋ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ:-Գեյրութ: 1960.- 152 էջ:

Թեև տեսական բնույթի աշխատանք է, բայց և այնպես պարունակում է զգալի թվով բառացանկեր/բառփնջեր/, որոնց ամբողջությունը լրիվ բառարանի տպավորություն է թողնում: Բառացանկերը հայերեն-արաբերեն և հայ-քրդերեն են՝ տարբեր իմաստի բառեր /կենցաղային, գիտական, ուսումնական և այլն/: Տեղեկություններ են տրվում նաև արաբերենի և քրդերենի քերականության վերաբերյալ:

ՄՍԵՐՅԱՆՑ ՄՍԵՐ. ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:

Անտիպ բառացանկ է, որը պարունակում է 2000 բառահոդված: Գտնվում է Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում/ տես Նո.9012 ձեռագիրը/: Յուրաքանչյուր բառահոդված-դարձվածի համար բերված է բնագրային համապատասխան մեջբերում-օրինակ՝ ընդարձակ բացատրությամբ ու մեկնաբանությամբ:

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԵՂԻԱ/ԿԱՐՆԵՑԻ/. ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1986.- 176 էջ:

Սույն բառարանը, որ կազմել է հայտնի վաճառական ու բանահավաք Եղիա Մուշեղյանը՝ 1720-1721 թթ., մեզ է հասել պակասավոր վիճակում: Եվ ահա լրիվ ու ամբողջական նոր հրատարակությունը, որ իրականացրել է Մ.Մաշտոցի անվան Մատենադարանը՝ Բ.Զուզասզյանի աշխատասիրությամբ:

Բառարանը հայատառ թուրքերեն-հայերեն է. պարունակում է շուրջ 2000 բառ և համառոտ տեղեկություններ

հեղինակի մասին/ տես առաջաբանը/:

ՅԱՂՈՒԲՅԱՆ ԱՏՈՒՐ. ԱՆԳԼԵՐԵՆ- ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԼԱՏԻՆԱ-ՏԱՌ ԲԱՌԱՐԱՆ:- Լոս-Անջելես: 1944.- 176 էջ:

Կազմված է երկու բաժնից, որոնցից անգլերեն-հայերենը պարունակում է 11 հազար անգլերեն գլխաբառ և 25 հազար բա-ցատրություն, իսկ երկրորդը՝ հայերեն- անգլերենը՝ 12 հազար հայերեն գլխաբառ և 30 հազար բացատրություն: Հայերեն բառա-քանակի ավել լինելը հեղինակը պատճառաբանել է այն հանգաման-քով, որ հատկապես նրա հարուստ ոճերն ու դարձվածները ,,շատ քիչ են ճանաչված,, օտարների կողմից:

ՅԱՂՈՒԲՅԱՆ ԱՏՈՒՐ.ՀԱՄԱՌՈՏ ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Նյու-Յորք: 1919.- 224 էջ:

Գործնական բնույթի հայատառ թուրքերեն-հայերեն բառարան է, որը, ինչպես նշված է առաջաբանում, ,,կպարունակե հայուն դրացի ազգերուն՝ թուրքին, քյուրդին,աբաբին, պարսկին,թա-թարին լեզուներե մեծաքանակ բառեր,, , որոնց թիվը անցնում է 5000-ից: Այս քանակությունը թեև հեղինակի նպատակը չէ, սակայն նա հնարավոր չի համարել նման համառոտ բառարանում ,, մեծաքանակ բառեր մթերել,,:

ՅԱՂՈՒԲՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ.ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ: - Թիֆլիս: 1891.- 24+264:

Պարունակում է 30 հազար բառահոդված, որոնը ներկայաց-ված են քերականական համապատասխան մեկնաբանություններով: Առանձին ևս տրվում են քերականական տեղեկություններ հայե-րենի և ռուսերենի վերաբերյալ: Այս բառարանի աչքի զարնող առավելություններից մեկը նորաբանությունների առատությունն է, որը, հեղինակի կարծիքով, վկայում է մեր լեզվի անընդ-հատ զարգացման և հարստացման փաստի մասին:

ЯНКОВИЧ ДЕ МИРИЕВО ФЕОДОР ИВАНОВИЧ. СРАВНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ ВСЕХ ЯЗЫКОВ И НАРЕЧИЙ (ПО АЗБУЧНОМУ ПОРЯДКУ РАСПОЛОЖЕННЫЙ). Часть I (А-Д).- СПБ.1790.-454 с., часть II (Л-Л).- СПб. 1791.-499 с., часть Ш (Л-С).- СПб.179.-518 с., часть IУ (С-Э).- СПб.-1799.-618 с.

Հետաքրքիր ու արժեքավոր գործ է: Զորս մեծածավալ հատորում ի մի են հավաքված աշխարհի զրեթե բոլոր/գրական և մեռ/ լեզուներ ու տասնյակ հազարավոր առանձին գործա-ծական բառեր ու արտահայտություններ, որոնց ընդհանուր

թիվը հասնում է մոտ 62 հազարի / ավելի ստույգ 61700/: Բառարանը կազմված է երեք էջասյունակով. առաջինում տվյալ լեզվի բառն է՝ ռուսատառ, ապա դրա ռուսերեն թարգմանությունը/իմաստը/, իսկ երկրորդում նշված է այն լեզուն, որին պատկանում է տվյալ բառը: Բոլոր չորս հատորներում ընդգրկված են հայերեն բազմաթիվ բառեր, որոնք արաբերենից հետո ամենաշատն են / իսկ ընդգրկված լեզուների քանակը 200-ից անցնում է/:

ՅԱՓՈՒՉՅԱՆ ԱՋԱՏ. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ:- Եր.:1964.- 56 էջ:

Ինչպես արդեն նշել ենք, այս բառացանկն ընդգրկում է միջնակարգ-հանրակրթական դպրոցի 5-8-րդ դասարանների ընթերցանության դասագրքերում հանդիպող այն բառերը, որոնց իմաստները անհասկանալի կամ դժվարըմբռնելի են սովորողներին: Այս նշանակում է, որ բառահոդվածները ընտրված են թեմատիկ սկզբունքով. և բառարանն էլ հենց այդ բնույթի է:

ՆԱԶԱՐԵՆՑ ՀԱԿՈՒ. ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԱԲԵՐԵՆ: - Գամիշլի: 1953.- 55 էջ:

Փոքրածավալ բառարան է, որն ընդգրկում է ,,առավելապես նախակրթական կարգերու մեջ գործածական բառերը,, , որոնք հանդիպում են ուսանողների բառապաշարում: Բառազանձը բազմազան է. շատ են հատկապես կենցաղային բնույթի բառերը /ազահ, աթոռ, հաց , առաջին, երկրորդ , ժամացույց և այլն/, որոնք բացատրված են արաբերենի բոլոր հնարավոր համարժեքներով:

ՆԱԼՉԱՋՅԱՆ ԱԼԲԵՐՏ. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1984.- 238 էջ:

Այս բառարանը, մասնագիտական առումով, հայ իրականության մեջ առաջին փորձն է, որի հետ առնչվում են նաև հարակից մի շարք գիտություններ / փիլիսոփայություն, տրամաբանություն, սոցիոլոգիա և այլն/: Պարունակում է շուրջ 1250 տերմին-բառահոդված, որոնք ժամանակակից հոգեբանական գիտության հիմնական հասկացություններն ու ըմբռնումներն են:

Գլխաբառերը հայերեն են և բացատրված են ռուսերեն համապատասխան մեկ կամ մի քանի համարժեքներով/ օր. համոզում- убеждение, անձի ակտիվություն- активность личности և այլն/:

ՆԻԿԱՍԱՆԴՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ. ԲԱՌԳԻՐՔ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ:- Թիֆլիս:1963.- 132:

Պարունակում է երեք հազար բառահոդված և հանդիսանում

է Վաղարշապատի խոսվածքի / ենթաբարբառ/ բառարանը: ,, Ամենուն տարեցույցը,, / 1908, էջ 356-367/ գրել է. ,, Բառարանն ունի մի քանի հազար բառերի ու ոճերի ստույգ մեկնաբանություն, և այն աշխարհաբար լեզվի ուսումնասիրողի համար շատ մեծ գին ունեցող աշխատություն է,,:

ՆՈՐԱՅՐ ՎՐՈՒՅՐ. ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ /REPERTOIRE ETYMOLOGIQUE DE L'ARMENIEN /:- Անտվերպեն: 1948.- 301 էջ:

Սա վերոհիշյալ բառարանի առաջին հատորն է. երկրորդ հատորը հեղինակի մահվան պատճառով / մահացել 1956-ին/ մնացել է անտիպ: Այս հատորում քննության են առնվում հայերենում գործածվող ակկադական, սումերական, հեթիթական, ուրարտական, արամեական, եբրայական, ասորական և արաբական ծագում ունեցող բառերը/ երկրորդ հատորի համար նախատեսված էին սանսկրիտ, պահլավական, պարսկական, հունական, լատինական, գեղական ծագում ունեցող բառերը/: Բառարանը հատկապես ստուգաբանական առումով բարձր են գնահատել Հ.Աճառյանն ու Ս.Մալխասյանը:

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ ԻՏԱԼԵՐԵՆ-ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ԹՈՒՐՔԵՐԵՆ:- Վիեննա: 1846.- 1120 էջ:

Այս քառալեզու, ստվարածավալ բառարանը, որ Վիեննայի Մխիթարյանների տքնաջան ու երկարամյա աշխատանքի արգասիքն է, հայ բառարանագրության եզակի երևույթներից է: Բառարանը հետևյալ կառուցվածքի է. իտալերեն գլխաբառին հաջորդում են Ֆրանսերեն, ապա հայերեն, այնուհետև հայատառ թուրքերեն բացատրությունները: Վերջում / էջ 1160-1220/ առանձին ցանկով տրված են այն բառերը, որոնք դուրս են մնացել ընդհանուր բառացանկից: Ավելորդ չէ նշել, որ բառարանի հեղինակը, ինչպես համոզվել ենք մեր պրպտումների ընթացքում, հայ մշակույթի պատմությանն ու բառարանագրությանը ոչ անհայտ Փիլիպպոս ծամճյանն է:

ՆՈՐ ԳԱՂԱՆԴՅԵՔ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԵԼԻ ԱՐՄՍՑ:- Վենետիկ: 1891.- 231 էջ:

Սա իր բնույթով և իսկական իմաստով բառարան չէ, այլ կենսագրական համառոտ ակնարկների ժողովածու, որտեղ հայ, ռուս և եվրոպացի հասարակական-պետական և մտավորական գործիչների վերաբերյալ տրված են հաճախ ոչ ճշգրիտ տեղեկություններ: Դրանցից յուրաքանչյուրը դիտել ենք որպես առանձին բառահոդված, որոնց թիվը 50 է:

ՆՈՐ ՄԵԹՈԴ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ /NEW METHOD READER /։- Բեյրութ։ 1958։

Անգլերեն-հայերեն ընթերցարան-բառարան է՝ կազմված յոթ պրակից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 1200-1300 բառահոդված։

Դրանք բոլորն էլ ներկայացված են հայերեն ընդարձակ բացատրությամբ՝ քերականական իրակությունների նշումով հանդերձ։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԵ-ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ։- Կ. Պոլիս։ 1911.- 818 + 122 էջ։

Բառարանի անվանաթերթի վրա նշված են այն բառերը/,,Ոռխ բառագումար մը Ֆրանսերեն,, , ,, արհեստական, գիտական և գրական հազարավոր նորարանություններ,, , ,, նոր փոխառություններ և պատշաճեցումներ Հայկազեան բառգրքե,, , ,,լատին, յոյն և ուրիշ օտարաբարբառ ասություններ,, , ,,Ֆրանսահայ Ոռխ բառացուցակ մը՝ առնուազն 2600 բառ,, և այլն/ ,որոնց պարունակությունը 23 հազար բառահոդված է։Դրանցից 1200 օտար ասություններ ու պատրաստի խոսքաձևեր, իսկ վերը նշված 2600-ը պատմա-աշխարհագրական և դիցաբանական անուններ են։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ. ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ։Բեյրութ։ 1955.- 210 էջ։

Սա իրականում հեղինակի նախորդ բառարանի համառոտությունն է, որին կցել է ,, Բառգիրք լատին և ուրիշ օտարաբարբառ ասություններու,, հավելվածը / էջ 4-40/ և Ֆրանսահայ պատմա-աշխարհագրական մի բառացանկ / էջ 91-122/։ Երկրորդ անգամ, որպես առանձին բառարան, հրատարակվել է 1925թ.։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ.ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆ ԵՎ ՈՒՐԻՇ ՕՏԱՐԱԲԱՌ ԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ։- Պոլիս։ 1925.-122 էջ։

Բառարանն ընդօրինակված է Ֆրանսիական հայտնի հանրագիտարաններից՝ Մեծ և Փոքր Լարուսից, որոնցից էլ բառարան են մուծված բազմաթիվ ասություններ, արտահայտություններ, խորիմաստ մտքեր ու դատողություններ։ Հեղինակը դրանցից բացի օգտվել է նաև այլ լեզուներով հրատարակված բազմաթիվ գրքերից ու ձեռագրական հուշարձաններից։ Իբրև վերահրատարակություն, գրեթե նախորդ բառարանի համառոտումն է։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ. ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԵ-ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ։-Կ.Պոլիս։ 1892.- 23+1092 էջ։

Սա Ֆրանսերեն -հայերեն առաջին բառարանն է, որը,

ինչպես տեսանք, հետագայում 1911-ին և 1925-ին հրատարակվել է համառոտված:

Բառանյութը հիմնականում քաղված է Լիտրեի բառարաններից, Լարուսից, Հայկազյան նոր բառգրքից, հայ-ֆրանսերեն և ֆրանսերեն-հայերեն բառարաններից, որոնցից հեղինակն հատկապես գոհացրել են Լիտրեի և Հայկազյան բառարանները: Այս բառարանի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1869 թվականին:

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ. ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ/Ա մաս/:-Փարիզ: 1928.- 640 էջ:

Այս բառարանը, որ երեք տարի անց, 1931-ին վերահրատարակվեց Կ.Պոլսում, հեղինակի նախորդ երկու ընդարձակ ֆրանսերեն-հայերեն բառարանների ծաղկաքաղ համառոտությունն է, որը պարունակում է 13 հազար բառահոդված /ընտրված բառահոդվածների մի մասը կորուստի է մատնվել Իզմիրի ավերումների ժամանակ/: Բառարանը աչքի է ընկնում ոճերի ու նորաբանությունների առատությամբ:

ՆՈՒՐԻ ՄԻՆԱՍ.ԼՈՒՍԱՐՁԱԿ /անուններ, բառեր,տառեր,արմատներ/:- Նյու-Յորք: 1956.- 48 էջ:

Իսկական իմաստով ու նշանակությամբ տեսական ընդլայնի աշխատանք է, որտեղ ամփոփված անունները, բառերն ու արմատները ներկայացված են համապատասխան բացատրությամբ ու ստուգաբանությամբ: Դրանք ամփոփված են առանձին ենթաբաժիններով, ինչպես՝ ,, Կարգ մը արմատներ, անուններ ու բառեր և անոնց թարգմանությունը,, , ,, Ուրիշ շարք մը անուններ ու բառեր,, , ,,Տեսութիւն մը հայր,մայր, եղբայր բառերու մասին,, և այլն, որոնց վերաբերյալ բացատրությունները տրված են հնդեվրոպական բառերի ու հատուկ անունների համադրությամբ:

ՇԱԼՈՒՆԻ ՌԻՄԱ.ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԴՊՐՅՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1980.- 87 էջ:

Բառարանն ընդգրկում է ինչպես դպրոցական դասագրքերում, այնպես էլ հայ դասական և սովետահայ գրողների երկերում հանդիպող համանուն բառերը, որոնց իմաստները սովորողները դժվարությամբ են ըմբռնում:

Բառարանի հեղինակը համանունների հետևյալ քանակումն է կատարել. 1. Բառական համանուններ. 2. Բառաքերականական համանուններ. 3. Խառը համանուններ՝ Բոլորն էլ համապատասխան բնութագրությամբ հանդերձ: Բառահոդվածների դիմաց

նշված են նրանց գործածության բնույթը, կիրառության ոլորտը և այլն, որը հեշտացնում է բառարանից օգտվելը:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԵԼԵՆԱ,ԱՎԴԱԼՅԱՆ ԱՋԳԱՆՈՒՇ,ՋԱՐԱԿՅԱՆ ՍԵՌԱ,ՁՈԼԱԳՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ,ՆԱԱՅԱՍ ԴԱՆԻԵԼ. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1985.- 384 էջ:

Այս բառարանի համար հիմք է ծառայել ինֆորմացիայի միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կողմից 1975 թվականին լույս տեսած 14-լեզվյա ինֆորմացիոն տերմինաբանական բառարանի ռուսական բաժինը՝ 2235 գլխատերմին ծավալով: Բառարանը, որ բաղկացած է երկու բաժնից, ընդգրկում է ինչպես ինֆորմատիկայի տեսության ու պրակտիկայի տարբեր, այնպես էլ հարակից ընագավառների տերմիններ: Վերջին հավելվածային բաժիններն ընդգրկում են ,,Հայերեն տերմինների այբբենական ցանկը,, /էջ 359-380/ և ,, Ռուսերենի չհանձնարարվող տերմինների ցանկը,, / էջ 380-384/:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԵԼԵՆԱ.ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1985.- 50 էջ:

Այս բառացանկ-տերմինարանը հաջորդել է հեղինակի ,,ՀՄՖ ինֆորմատիկայի հայերեն-ռուսերեն տերմինարանին ,, նախատեսված տեխնիկական ուսումնական հաստատությունների ուսանողության համար: Ինչ վերաբերում է այս բառարանին, ապա այն նախատեսված է միջնակարգ -մասնագիտական դպրոցների 9-10-րդ դասարանների սովորողների համար՝ որպես օժանդակ աղբյուր ,, Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի հիմունքների,, առարկայի: Պարունակում է 185 ընդարձակ բացատրությամբ ներկայացված տերմին և հասկացություն:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԵԼԵՆԱ. ՀՄՖ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ -ՌՈՒՍԵՐԵՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆ:- Եր.: 1983.- 44 էջ:

Այս տերմինարանը միաժամանակ նախատեսված է ուսանողների համար՝ նաև որպես ուսումնական ձեռնարկ, քանի որ յուրաքանչյուր գլխատառ, որոնց թիվը 160-ն է, ներկայացված է ընդարձակ բացատրությամբ՝ հայերեն և ռուսերեն: Դրանք՝ այդ բառահոդվածները,բաղված են միջազգային գիտական և տեխնիկական ինֆորմացիայի կենտրոնի կողմից 1975թ. հրատարակված 14-լեզվյա ,, Ինֆորմատիկայի տերմինաբանական բառարանից,,:

ՈՍԿԵՐԻՉՅԱՆ Հ.ԱՅԿ.ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ՔՐՈՒՑԱԳԻՐՔ:- Եր.: 1965.- 158 էջ:

Սա օժանդակ ձեռնարկ-բառարան է, որի առաջին մասը ընդգրկում է 18 խումբ արտահայտություններ, որոնք գործածական են հատկապես բանավոր խոսքում, իսկ երկրորդ մասը, որ պարունակում է 27 խումբ, առավելապես գրական-գիտական բնույթի արտահայտություններ ու հասկացություններ են: Այս բաժինը նաև ունի ,,Լրացուցիչ բառեր և արտահայտություններ,, փոքրիկ հատվածը: Երրորդ մասը / ,, Հավելված,, / բառացանկն է, որը պարունակում է ածականներ, գույն ցույց բառեր, կոտորակներ, թվաբանական գործողությունների, աշխարհի կողմերի, վայրի և ընտանի կենդանիների, թռչունների, միջատների, երկրների անուններ , ԱՍՀՄ հանրապետություններն իրենց մայրաքաղաքներով , անգլիական օրգիծանք / տես էջ 152-158/ և այլն:

ՈՍԿՅԱՆ ԿՈՄԻՏԱՍ.ԱՌՁԵՌՆ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ-ԳԱՂՂԻԵՐԵՆ:- Ն.Պոլիս:1833.- 929 էջ:

Սա բառարանի երկրորդ հրատարակությունն է. առաջինը լույս է տեսել 1887 թվականին / 498 է/՝ ,, Առձեռն բառարան հայերենէ ի գաղղիերէն,, խորագրով: Վերջինը, որ ավելի ընդարձակ ու լրացված է, պարունակում է 37 հազար բառահոդված: Ն.Ոսկյանի ,,Առձեռն բառգիրքը,, ժամանակին, որպես ուշագրավ երևույթ, արժանացավ բարձր գնահատականի / Տես ,, Հանդէս ամսօրեայ,, , 1896, էջ 253-254/:

ՁԱԳԸՃՅԱՆ ԵՓՐԵՄ.ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՅԵՐԵՆ-ՏԱՃԿԵՐԵՆ:- Վիեննա: 1850.- 466 էջ:

Բառարանը պարունակում է 20 հազար բառահոդված. որոնք ընտրված են դասական հայերենից: Դլխաբառերը բացատրված են թուրքերեն, առանձին բառեր էլ՝ աշխարհաբար: Հատկապես ընտրված են այն բառերն ու ոճերը, որոնք ինչ-ինչ պատճառներով տեղ չեն գտել նախորդ բառարաններում:

Բառարանն աչքի է ընկնում իր ծավալով և բառերի համակողմանի բացատրությամբ:

ՁԱԳՄԱԳՃՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Բոստոն: 1922.- 1424 էջ:

Այս բառարանի երկրորդ հրատարակությունը լույս է տեսել 1952-ին, իսկ երրորդը՝ 1960-ին, երկուսն էլ՝ Բեյրութում: Իր հարուստությամբ ու այլ արժանիքներով հայ իրականության մեջ ստեղծված երկլեզվյա բառարանների շար-

քում արժանի տեղ է գրավում: Պարունակում է հարյուր հազար բառահոդված, որոնց մի զգալի մասը քաղված է Անգլիայում մեծ հռչակ վայելող Ու. Վեբստերի բառարանից: Բառարանը նաև արժեքավոր տեղեկություններ է պարունակում անգլերենի վերաբերյալ: Այն միաժամանակ պարունակում է տարբեր բնագավառների վերաբերյալ բազմաթիվ բառանուն- տերմիններ՝ հետևյալ քանակությամբ. դիցաբանական՝ 300, աշխարհագրական՝ 600, կենսագրական՝ 650, տղամարդկանց և կանանց անուններ, համապատասխանաբար՝ 250 և 160: Մի առանձին ցուցակով ներկայացված են այլ լեզուներից անգլերենին անցած բառերը, թվով՝ 600:

ՀԱՍՈՅԱՆ ՊԱՐՍԵՂ.ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԱԲԵՐԵՆ:- Հալեպ: 1954.- 278 էջ:

Այս բառարանն նախորդի վերահրատարակությունն է, որն իրականացրել է Հալեպի նահանգապետությունը՝ ,,500 ս. ոսկի նվերով մը,, գնահատելով այս հրատարակությունը : Բառարանն սկսվում է ,, Քերականական գիտելիքներ,, բաժնով, որտեղ 15 կետերով նշվում է արաբերենի մի շարք առանձնահատկությունների մասին: Բառարանի պարունակությունը ութ հազար բառահոդված է:

ՀՈՐՔԻՋՅԱՆ ԿԱՐՈ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1976.- 167 էջ:

Պարունակում է Ֆիզիկական աշխարհագրության և նրա հետ սերտորեն առնչվող այլ գիտությունների / երկրագիտություն, աստղագիտություն, երկրաֆիզիկա և այլն/ վերաբերող ավելի քան հազար բառահոդված, որոնք որոշակիորեն համակարգված և միօրինականացված են: Օտար տերմինների համար նշված է որ լեզվին պատկանելը և նրա հայերեն իմաստն ու բացատրությունը / Օր. աբրազիա- լատ. ողողում, քայքայում և այնուհետև՝ բացատրությունը/: Բառարանի վերջում բերված են նաև թվական տվյալներ երկրագնդի, մայրցամաքների, օվկիանոսների,ծովերի նեղուցների, կղզիների, գետերի, լճերի, լեռնազանգվածների, հրաբուխների մասին:

ՁԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ.- ԱՎ.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՌԱՐԱՆԸ /Տես Վ.Առաքելյան. Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճարանական առանձնահատկությունները,, աշխատության հավելվածը:- Եր.: 1954. էջ 200-259/:

Սույն բառարան-հավելվածը, որ վերոհիշյալ աշխատությունը կցվել է այն ամբողջական և լիարժեք տեսքով հրատարակելու

նպատակով, ամփոփում է մեծ բանաստեղծի ,, Ընտիր երկերի,, 1939-1940 թթ. հրատարակված երկհատոր յակի, ,,Երգեր ու վերքերի,,/ 1908թ./ որոշ բառեր, որոնց ընդհանուր թիվը կազմում է 5100 գլխաբառ:

ՀՈԼԱԳՅԱՆ ՏԵՄԵԹՐԻՈՍ. ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ Ի ՅՈՒՆԱՐԷՆ:- Կ.Պոլիս: 1868.- 358 էջ:

Պարունակում է շուրջ 20 հազար բառահոդված, որոնց իմաստները բացատրված են տաճկերեն և հունարեն /ոչ բոլորը/: Սա, որ զրուցարանի տպավորություն է թողնում, միաժամանակ պարունակում է բազմաթիվ ոճեր, խոսակցական արտահայտություններ, նաև տեղեկություններ հայերեն և հունարենի վերաբերյալ:

ПАЛЛАС ПЕТР.СРАВНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ ВСЕХ ЯЗЫКОВ И НАРЕЧИЙ .Հատ. 1-ին:- Պետերբուրգ: 1787.- 412 էջ: Հատ. 2-րդ:-Պետերբուրգ: 1789.- 492 էջ:

Այս բառարանը թեև Յանկովիչ Թեոդոր Իվանովիչի նույնանուն բառարանի նմանօրինակն է, սակայն նրանից տարբերվում է իր բնույթով ու սկզբունքներով: Եթե այս բառարանում գլխաբառահոդվածները ներկայացված են այբբենական կարգով, ապա Պ. Պալլասի բառարանում դրանք տրված են թեմատիկ սկզբունքով: Օրինակ՝ աստված /бог / բառը, որով սկսվում է բառարանը, տրված է աշխարհի 200 լեզուներով: Դրանց թվում հայերենն հատկացված է 107-րդ տեղը:

ՊԱՅՅԱՆ ԳԵՎՈՐԳ.ՀԱՅԵՐԵՆ-ԳԱՂՂԻԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Վենետիկ: 1926.-576 էջ:

Սա ևս Ծոխ ու ընդարձակ բառարան է, որտեղ բուն բառահոդվածներից բացի ներկայացված են մեծաքանակ դարձվածներ, պատրաստի խոսքաձևեր, կայուն կապակցություններ, որոնք աչքի են ընկնում ընդարձակ ու բազմակողմանի բացատրությամբ: Առավել համակողմանի են ներկայացված պատմա-հասարակական, առևտրական և կրոնա-դիցաբանական դվարները:

Բառարանը պարունակում է 50 հազար բառահոդված: Մի ահռելի հարստություն, որը հատկապես վկայում է մեր լեզվի ինքնատիպ խոսքաձևերի առատության մասին:

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ.ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՀԱՓԱԾՈՅԻ ԲԱՌԱՐԱՆ: Հատ. 1 /Ա-Ե/: Եր.:- 1981.-391 էջ: Հատ. 2 /Հ-Ֆ/:-Եր.1982.-446 էջ:

Գլխաբառերը/այդպիսիք են համարված մշակված բառերի ուղիղ ձևերը, նաև գրական արտահայտությունները, հարադիր բարդությունների բաղադրիչները, հասարակի տեղ կիրառված

հատուկ անունները, անեզական բառերը, պակասավոր բայերը, խոսակցական-բարբառային ձևերը/ դասավորված են այբբենական կարգով: Դրանց երկու հատորի պարունակությունը մոտ 17 հազար 300 միավոր է / Պ. Սևակի սեփական ստեղծագործության մեջ օգտագործված է 14200 բառ և մոտ 500 հատուկ անուն, իսկ թարգմանական գործերում՝ մոտ 3100 բառ/:

ՊՍՏԿԻՆՅԱՆ ԴԱՓԱՅԵԼ. ԲԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ:

Սա ևս հայ մեծ բանաստեղծի անտիպ բառարաններից է՝ ցայսօր անուշադրության մատնված, որը, սակայն, կարող է մեծապես օգնել բուսաբաններին և բուսանունների բառարան կազմողներին: 700 բուսանուն պարունակող այս բառարանը երեքլեզվյա է՝ հայ-լատիներեն-ռուսերեն / Օր. ազոավաթուր- gladiatus -ՄՈՍԱԿԱՆ կամ անանուխ-menta - МЯТА այլն/: Բառարանի ձեռագիրը պահպանվում է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

ՊՍՏԿԻՆՅԱՆ ՌԱՓԱՅԵԼ. ԺՈՂՈՎԱԾՈՒՅՔ ՕՏԱՐԱՋԳԻ ԲԱՌԵՐԻ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆՑՈՑ ԼԵԶՎԻՆ ՄԻՋ ՄՏԱԾ:- Ս.Պետերբուրգ: 1870.-32 էջ:

Բառարանը, որ պարունակում է 1200 բառ, նպատակ ունի հայ մանուկների բառապաշարը զտել-մաքրել օտարաբանությունից՝ այդ բանին հետամուտ լինելով դպրոցից սկսած, ընտանեկան օրրաններով, ժողովրդական առօրյա խոսակցություններով վերջացրած: Բառարանը քառասյունակ է. առաջինում տրված են հայատառ թուղթերեն, երկրորդում՝ հայերեն, երրորդում՝ ռուսերեն, իսկ չորրորդում՝ ֆրանսերեն համարժեքները/ Օր. ազապ- կույս - девственница - une fille, vierge կամ ազբար- բակ- двор-la cour և այլն/: Բառարանը պարունակում է այսօրինակ 1200 բառ-միավոր:

ՊՍՏԿԻՆՅԱՆ ԴԱՓԱՅԵԼ. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (Классификация животного царства):

Սա ևս անտիպ բառարան է, որը պահպանվում է ՊԱԹ-ի՝ Ռ.Պատկանյանի արխիվում / տես գործ նո. 110/: Պարունակում է կենդանիների անուններ / մոտ 1000-ի չափ/՝ լատիներեն, ռուսերեն, հայերեն լեզուներով, որի հիմնական մասը կազմում է ռուս-լատիներեն բաժինը: Այստեղ առանձին ենթաբաժիններով ներկայացված են կաթնասունները, թռչունները, իսկ երրորդում՝ մնացած բոլոր տեսակի կենդանիները: Յուրաքանչյուր բաժին ընդգրկում է 30 ենթաբաժին, որոնցից յու-

բաքանչյուրը իր հերթին ընդգրկում է 9-25 անուն: Բառարանի առաջին բաժինը պարունակում է 130, երկրորդը՝ 193, երրորդը՝ 316 անուն- բառահոդված՝ ընդամենը 639 կենդանական անվանում:

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Մոսկվա: 1860.- 16 էջ:

Թերատիպ բառարան է՝ տպագրված մինչև Общество բառահոդվածը: Պահպանվում է Լազարյան Ճեմարանի արխիվում, որի պատառիկների / առաջին պրակի 1-16 էջերը/ վրա կա ,,Образец печати студента Рафаэла Патканова." մակագրությունը: Այդ պատառիկներից նաև տեղեկանում ենք, որ բառարանը պետք է ընդգրկել 25 հազար բառահոդված՝ մոտ 700 էջաքանակով:

ՊԱՐԻՍ ԳԵՎՈՐԳ. ՊԱԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ-ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՌՈՒՍ - ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1953: 134 էջ:

Բառարանը երկու բաժնից է՝ ռուս-հայերեն, էջ 1-120, պարունակում է 100 բառահոդված, հայ-ռուսերեն, էջ 121-134, պարունակում է 450 բառահոդված, ընդամենը՝ 550 բառահոդված, ինչպես նաև համապատասխան աղյուսակներ ու նկարներ: Բառահոդվածները հիմնականում ճիշտ են թարգմանված, սակայն կան նաև անճշտություններ և ոչ ճիշտ թարգմանություններ:

ՊԵՇԿՈՎ ԵՎԳԵՆԻ,ՖԱԴԵԵՎ ՆԻԿՈԼԱՅ.ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1961.- 172 էջ:

Հայերեն թարգմանությունը կատարել է Լ.Հարությունյանը, որը օտար բազմաթիվ տերմինների հայացման գործում զգալի ջանքեր է ներդրել: Նախատեսված է 5-7-րդ դասարանների սովորողների համար՝ նաև - որպես օգնություն ձեռքի աշխատանքի պարապմունքները վարող ուսուցիչներին: Բառարանը պատկերազարդ է: Սրանում ամփոփված են բազմաթիվ նկարներ և առանձին պրոցեսների պատկերներ, իսկ վերջում տրված հավելվածը տեղեկություններ է պարունակում գործիքային պողպատների մարկաների/տեսականուշների/, շաղափների տրամագծերի որոշման, ինչպես նաև էլեկտրական սիստեմներում կիրառվող պայմանական նշանների մասին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ,ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ,ՀԱՋԻԵ ՋՈՎԻ,ԳՅԱՆՋՈ ՋԱՐԴԻԵ.ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԻՑ ՔՐԴԵՐԵՆ ԼԵԶՎԻ: - Եր.: 1933.- 115 էջ:

Բառարանը քրդերենի համար առաջին փորձն էր, որը պարունակում է 7 հազար բառահոդված: Թեև բառարանը բավականաչափ աղքատ է, բայց և այնպես հեղինակները ձգտել են այն հայերենի և ռուսերենի օգնությամբ հարստացնել նոր

հարաբերությունները խորհրդանշող բառերով ու տերմիններով:

ՊԵՏՈՅԱՆ ՎԱՐԴԱՆ,ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՏՎԱԾԱՏՈՒՐ,ՂԱՓԱՆՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ,ՀԱՋԻԵ ՋՆԴԻ, ՋԱՍՄԵ ՋԱԼԻԼ,ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ,ՋԱՐԴԻԵ ԳՅԱՆՋՈ,ՎԵՋԻՐ ՆԱԴՐԻ,ՏԻՏԱԼ ՄՈՒՍԱԴ.ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ՔՐԴԵՐԵՆ:- Եր.: 1936.- 71էջ:

Պարունակում է 1300 բառ-տերմին: Տարբեր հեղինակներ կազմել են բառարանի տարբեր բաժիններ / քիմիա, Ֆիզիկա,մաթեմատիկա, ռազմական գործ և այլն/, ձգտելով ազգային լեզուն հարստացնել ժամանակակից տերմինաբանությամբ: Դա նրանց,սակայն, մասամբ է հաջողվել:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԴԱ.ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԲԱՌԱՐԱՆԸ:- Եր.: 1976.- 403 էջ:

Բառարանը, որ կազմված է բանաստեղծի տարբեր տարիների / 1934-1969թթ/ ընթացքում հրատարակված երկերի և երկերի ժողովածուների հիման վրա, դրանց բառապաշարի ընտրությամբ, պարունակում է ինը հազար բառահոդված: Թվարկված են այն բառախմբերը /հատուկ անուններ, օտարազգի բառեր, թվանշաններով արտահայտված թվականներ, բառի տարբերակային ձևեր և այլն/, որոնք դուրս են մնացել ընդհանուր բառացանկից: Բառերի բացատրությունները հանդամանալից ու լիարժեք են:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ,ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ,ՂԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ ԹԵՐԵԶԱ.ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: Եր.: 1975.- 316 էջ:

Բառարանը պարունակում է հայ լեզվաբանական-քերականական և հարակից տերմինները՝ սկսած 5-րդ դարից, մինչև մեր օրերը: Համառոտ տեղեկություններ են տրվում նաև աշխարհի լեզուների, բարբառների ու խոսվածքների, դրանց աշխարհագրության, գրի ու նրա տեսակների վերաբերյալ: Տերմինների մեծ մասը ունի ռուսերեն, անգլերեն, Ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաև լատիներեն և հունարեն համարժեքային կամ թարգմանական ձևեր:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱԴԱԲՅԱ. ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅ-ԱՆԳԼԵՐԵՆ: - Բեյրութ: 1875.- 30 + 786 էջ:

Սա այս բառարանի նոր,վերջին շքեղ վերահրատարակությունն է , որի տարեթիվը չի նշված / առաջին հրատարակությունը՝ Վենետիկ, 1875թ./: Պարունակում է 40 հազար բառահոդված, առաջաբան, քերականական տեղեկություններ: Վերջում տրված է աշխարհագրական տեղանունների և անձնանունների ցանկ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍՈՒԼԱՄԻԹԱ.ՖՐԱՆՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ ՀԱՄԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1985.- 78 էջ:

Ուսումնական-ուսուցողական ընույթի բառարան է, որն ընդգրկում է 2400 բառեր ու բառակապակցություններ: Դրանք վերաբերում են պետական, հասարակական, քաղաքական կյանքին, ներքին ու արտաքին քաղաքականությանը, կուսակցությունների, պետական ապարատի գործունեությանը, խաղաղությանը, ազգային ազատագրական պայքարին, տնտեսական, գիտական ու մշակութային կապերին: Բառարանը նախատեսված է հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար: Բոլոր ֆրանսերեն գլխաբառերը բացատրված են հայերեն և ռուսերեն համապատասխան համարժեքներով:

ՊՈՂԱՃՅԱՆ ԲՅՈՒԶԱՆԴ. ԲԱՌԱՐԱՆ-ՖՐԱՆՍ-ՀԱՅԵՐԵՆ: - Կ.Պոլիս: 1888.-736 էջ:

Սա ֆրանսերենի հետ առնչվող հայերեն /ֆրանսերեն-հայերեն/ ընտիր ու հարուստ բառարաններից է, որը պարունակում է մոտ 30 հազար բառահոդված:

Բոլոր գլխաբառերը բացատրված /թարգմանված/ են հայերենի հնարավոր համարժեքներով: Բառարանը միաժամանակ գիտամատչելի տեղեկություններ է պարունակում ֆրանսերենի և հայերենի քերականական իրողությունների վերաբերյալ:

ՊՈՂԱՃՅԱՆ ՀԱԿՈԲՈՍ.ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ Ի ՀԱՅԷ-ՏԱՃԿ: - Վիեննա:1831.- 530 էջ:

Հայ-տաճկերեն լավագույն բառարաններից է, որը պարունակում է 25 հազար բառահոդված: Այդ մասին է վկայում այն փաստը, որ բառարանը երկրորդ անգամ հրատարակվեց 1860 թվականին: Գլխաբառերի դիմաց բացատրությունները տրված են հայատառ թուրքերենով: Երևույթը պայմանավորված է բառարանի գիտա-ուսուցողական ընույթով:

ՊՈՂԱՃՅԱՆ ՀԱԿՈԲՈՍ.ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ Ի ՏԱՃԿԵՐԵՆԷ Ի ՀԱՅ:- Վիեննա: 1856.- 12+1023 էջ / 1-ին հրատ. 1841թ./:

Այս բառարանը ևս, արժեքավոր լինելով, երկրորդ անգամ հրատարակվեց 1858 թվականին / 12+1023 էջ/: Պարունակում է 46 հազար բառահոդված: Երկրորդ հրատարակությունն իրականացրել են Հ.Պոզաճյանի երախտապարտ աշակերտները Մ.Գարագաշյանը, Ս. Գաթրճյանը և Ղ.Հովնանյանը, որոնք նաև ,, Բառերուն զտության և ճոխության նպաստամատույց եղած են,, ,- ինչպես վկայում է Ն.Ակինյանը:

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱԳԱԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1964 -654 էջ:

Հայ իրականության մեջ ստեղծված առաջին հանգաբառարանն է / աշխարհում առաջին հանգաբառարանն ստեղծվել է Չինաստանում, 2000 տարի առաջ/:

Հանգաբառարանը պարունակում է 42 հազար բառահոդված:Սրանց մեջ չեն ընդգրկված նեղ մասնագիտական, բարբառային բառերը, գոհեկաբանությունները, հարադիրներն ու դարձվածները, կայուն շարահյուսական կապակցությունները, բաղադրյալ և հատուկ անուններ: Համագիր բառերը դիտված են որպես մեկ բառ:

ԳՈՅԱՃՅԱՆ Մ.ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Կ.ՊՈԼԻՍ: 1897:

Փոքրածավալ, ոչ մեծ արժեք ներկայացնող բառարան է, որտեղ ամփոփված են մոտ 2000 հայատառ թուրքերեն բառեր՝ հայերեն թարգմանությամբ ու համապատասխան մեկնաբանությամբ: Պարունակում է 100-ից ավել խոսակցական ոճեր, արտահայտություններ ու ասույթներ:

ՊՈՊՈՎ ԳԱՐԱՊԵՏ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Մոսկվա, 1841.-128 էջ:

Բառարանը կազմված է ,, Ի պէտս համազգի մանկանց այնր վարժարանի,, նշանաբանով և հետապնդում է ուսուցողական նպատակ: Պարունակում է 5800 բառահոդված, որոնք առավելապես առօրյա գործածության բառեր են: Յուրաքանչյուր գլխաբառի դիմաց նշված են նրա մի քանի, նույնիսկ հեռավոր իմաստները, որոնք վկայում են հայերենի թե՛ ծիսության և թե՛ ոճերի ու պատրաստի խոսքաձևերի մասին:

ՊՈՏՈՒՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ. ՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ:- Բուխարեստ / Պուքրեշ/: 1938-1940.- 970 էջ:

Սփյուռքում լույս տեսած առաջին հանրագիտական բառարանն է, որն ընդգրկում է Ղ.Ալիշանի ,, Հայապատումի,, հատուկ անունները, ինչպես նաև ,,... հայածին և հայ մշակույթին հետ կապ ունեցող դեմքեր... Հայաստանի թե՛ հայաբնակ և թե՛ օտարաբնակ քաղաքներն ու գյուղերը, ուր հայ գաղութ մը ապրած է և կապրի,,: Սրանց բոլորի վերաբերյալ փաստերն ու տեղեկությունները հավաստի ու բազմակողմանի են: Հեղինակը իր աշխատանքը պատրաստել է չորս հատորով, սակայն 1938-1940թթ. հրատարակել է միայն առաջին հատորը՝ հինգ պրակով:

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱԳԱԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1964 -654 էջ:

Հայ իրականության մեջ ստեղծված առաջին հանգաբառարանն է / աշխարհում առաջին հանգաբառարանն ստեղծվել է Չինաստանում, 2000 տարի առաջ/:

Հանգաբառարանը պարունակում է 42 հազար բառահոդված:Սրանց մեջ չեն ընդգրկված նեղ մասնագիտական, բարբառային բառերը, գոհկաբանությունները, հարազիրներն ու դարձվածները, կայուն շարահյուսական կապակցությունները, բաղադրյալ և հատուկ անունները: Համագիր բառերը դիտված են որպես մեկ բառ:

ԳՈՅԱՇՅԱՆ Մ.ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Կ.ՊՈԼԻՍ: 1897:

Փոքրածավալ, ոչ մեծ արժեք ներկայացնող բառարան է, որտեղ ամփոփված են մոտ 2000 հայատառ թուրքերեն բառեր՝ հայերեն թարգմանությամբ ու համապատասխան մեկնաբանությամբ: Պարունակում է 100-ից ավել խոսակցական ոճեր, արտահայտություններ ու ասույթներ:

ՊՈՊՈՎ ԳԱՐԱՊԵՏ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ:- Մոսկվա, 1841.-128 էջ:

Բառարանը կազմված է ,, ի պէտս համազգի մանկանց այնր վարժարանի,, նշանաբանով և հետապնդում է ուսուցողական նպատակ: Պարունակում է 5800 բառահոդված, որոնք առավելապես առօրյա գործածության բառեր են: Յուրաքանչյուր գլխաբառի դիմաց նշված են նրա մի քանի, նույնիսկ հեռավոր իմաստները, որոնք վկայում են հայերենի թե՛ ծագման և թե՛ ոճերի ու պատրաստի խոսքաձևերի մասին:

ՊՈՏՈՒՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ. ՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ:- Բուխարեստ / Պուքրեշ/: 1938-1940.- 970 էջ:

Սփյուռքում լույս տեսած առաջին հանրագիտական բառարանն է, որն ընդգրկում է Ղ.Ալիշանի ,, Հայապատումի,, հատուկ անունները, ինչպես նաև ,,... հայածին և հայ մշակույթին հետ կապ ունեցող դեմքեր... Հայաստանի թե՛ հայաբնակ և թե՛ օտարաբնակ քաղաքներն ու գյուղերը, ուր հայ գաղութ մը ապրած է և կապրի,,: Սրանց բոլորի վերաբերյալ փաստերն ու տեղեկությունները հավաստի ու բազմակողմանի են: Հեղինակը իր աշխատանքը պատրաստել է չորս հատորով, սակայն 1938-1940թթ. հրատարակել է միայն առաջին հատորը՝ հինգ պրակով:

ՋԱԽՋԱԽՅԱՆ ՄԱՆՎԵԼ.ԲԱՌԳԻՐՔ Ի ԲԱՐԲԱՌ ՀԱՅ ԵՎ ԻՏԱԼԱԿԱՆ /Dizionario Armeno-Italiano/: Վենետիկ: 1837:-XXV'+ 1506 էջ /առաջին հրատ, 1825թ./:

Բառարանն այս անվամբ հրատարակվել է հեղինակի մահվանից հետո: Ջախջախյանն այն անվանել է„Ընդարձակ բառարան ի հայէ յիտալական,,: Բացի բուն գրականից, այս բառարանը պարունակում է նաև ժողովրդա-խոսակցական, նույնիսկ բարբառային բառեր: Բառահոդվածներից շատերը ներկայացված են ընդարձակ բացատրությամբ: Վերցում ապված են անձնանունների /էջ 1499-1503/, տեղանունների /էջ 1504-1508/ ցանկեր, որոնցում ընդգրկված են նաև տեղացիություն ցույց տրվող բառեր: Բառարանը պարունակում է 60 հազար բառահոդված:

ՋԱԽՋԱԽՅԱՆ ՄԱՆՎԵԼ.ԲԱՌԱՐԱՆ ՅԻՏԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ Ի ՀԱՅ ԵՎ Ի ՏԱՃԻԿ ԲԱՐԲԱՌ:- Վենետիկ: 1804.- 896 էջ:

Պարունակում է շուրջ 45 հազար բառահոդված: Հայերեն և տաճկերեն բառերի հետ բառարան են ընդգրկված նաև իտալերեն բառեր, որոնց համար հեղինակը հիմք է ընդունել այդ լեզվի հատկապես տոսկանյան բարբառը: Բառարանը աչքի է ընկնում թե՛ ճոխ և ընտիր բառապաշարով և թե՛ քերականական ընդարձակ ծանոթագրություններով: Բառանյութից երևում է, որ հայերենը իտալերենի /և չենք ասում տաճկերենի/ նկատմամբ իր հ մանիշային ձևերով ու ոճերով ոչ միայն չի զիջում, այլև շատ պարագաներում նույնիսկ գերազանցում է:

ՋՐԲԱՇՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ,ՄԱԽՉԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ.ԳՐԱԿԱՆԱԴԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1972.- 350 էջ:

Բառարանը, որ ընդգրկում է 500 տերմին և հասկացություն, ,,պարունակում է առավել կարևոր և համախակի հանդիպող տերմինների բացատրությունը և ներկայացնում է գրականության տեսության, իբրև գիտության, հիմնական հասկացությունների համակարգը,, ,- ինչպես նշված է առաջաբանում: Դրանց՝ այդ տերմինների մի զգալի մասը ներմուծված են օտար և հատկապես ռուսերեն այդ բնույթի բառարաններից ու հանրագիտարաններից:

Բառարանը նախատեսված է հանրակրթական դպրոցի բարձր դասարանների սովորողների համար:

ՌԻԳՍ ԷԼՅԱՍ.ՀԱՅ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Զմյուռնա: 1813.- 162 էջ:

Բառարանը , որ վերնագրված է ,,A vocabulary of words used in modern Armenian but not found in the ancient Armenian lexicons ,, , պարունակո՛ է 6000 բառահոդված, որոնք կրաղեցնում են 162 երկայունակ էջեր: Առավել շատ են ոմեն ու

տերմինները, որոնց ավելի մեծ տեղ է հատկացված: Այդ պատճառով էլ լատիներենի առօրյա խոսակցությանը և քերականական ձևերին քիչ տեղ է տրված:

ՌԻՎՈԼԱ ՏՐԱՆՉԵՅԱՆ. ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ /DICTIONARIUM ARMENO/:-Միլան: 1621.- 479 էջ: 2-րդ հրատ.:- Փարիզ: 1633.- 406 էջ:

Այս աշխատությունը թեև հայերեն-լատիներեն է անվանված, սակայն մեջ ընդ մեջ էջերը հայերեն-լատիներեն և լատիներեն-հայերեն են, ըստ որում՝ բառարանի հայերեն-լատիներեն բնույթն ու սկզբունքը չեն խախտվում, քանի որ էջավերջի հայերենի այբբենական շարունակությունը հաջորդ էջասկզբի լատիներենի դիմաց նշված հայերեն բառն է: Բառարանը պարունակում է 11500 բառահոդված, որոնց մեջ են նաև դարձվածներ, ոճեր, հատուկ և հաւարակ անուններ, նույնիսկ ամբողջական նախադասություններ: Բառարանն ունի նաև քերականական նախագիտելիքներ պարունակող բաժին:

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1954-1958: Չորս հատորով: Հ. 1/А-Й /:- Եր.: 1954.- 22 752 էջ: Հ 2 / К-О/:- Եր.: 1956.- 8 + 688 էջ: Հ.3 /П-Р /:- Եր.: 1957.- 800 էջ: Հ.4/С-Я /:- Եր.: 1958.- 808 էջ:

Պարունակում է 90 հազար բառահոդված: Այն կազմվել է հեղինակային և խորհրդատվական / консультант / մի մեծ կոլեկտիվի ջանքերով, որոնցից յուրաքանչյուրը, տարբեր բնագավառի մասնագետ է: Հեղինակները օգտվել են ռուսերեն-հայերեն հին ու նոր բառարաններից, սակայն առավելապես Դ.Ն.Ուշակովի խմբագրությամբ լույս տեսած բառարանից, որի շատ բառահոդվածներ թարգմանվել են կամ ոչ ճիշտ, կամ երկարաշունչ օրինակներով:

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ /խմբ. Ռ.Լ.Մելքումյանի և Պ.Մ. Պողոսյանի/:- Եր.: - 1975.- 615 էջ:

Սա արժեքավոր գործ է, որը հայ իրականության մեջ ձեռնարկվել է առաջին անգամ: Բառարանն ընդգրկում է ռուսերեն դարձվածներն ու այդ բնույթի արտահայտությունները, որոնց քանակը 5600 է՝ 1670 դարձվածային տարբակով ու փոփոխակով հանդերձ: Այս տիպի պատրաստի խոսքաձևերի շարքում տեղ չեն գտել առածներն ու ասացվածքները, որոնցով այնքան հարուստ է ռուսերենը: Դարձված- գլխաբառերի դիմաց ճիշտ են գտնված հայերեն համարժեքները, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ ճիշտ է կատարված թարգմանությունը: Ռուսերեն դարձվածից հետո տրվում է նրա հայերեն նշանակությունը, ապա հայերենին համապատասխան կամ նրան մոտ հոմանիշը կամ համար-

ժեքը:

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ / խմբ. Ա.Ա.Ղարիբյան/:-Եր.: 1941.- 312 էջ:

Այս բառարանը ժամանակին ստեղծվել է հրատապության պահանջով, այդ պատճառով էլ նրա աշխատանքներին մասնակցել են մի քանի հոգի՝ Ա.Ղարիբյանի գլխավորությամբ / Գ.Աթայան, Վ.Գրիգորյան, Վ.Թերզիբաշյան, Հ.Մամիկոնյան, Մ.Գևորգյան, Գ.Գասպարյան/:

Պարունակում է 6 հազար բառահոդված, որոնք հիմնականում ներկայացված են թարգմանաբար:

ՍԱՐԳՍՅԱՆ ՀՈՂՄԻՆ.ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1984.- 205 էջ:

Բառարանը, որ հայ իրականության մեջ այս բնագավառի տերմինների համալրման ամփոփման առաջին և հաջող փորձն է, պարունակում է 3000 տերմին, որոնց մի զգալի մասը վերաբերում է հարակից գիտություններին / հնէաբանություն, երկրաֆիզիկա, երկրաքիմիա, մոլորակների երկրաբանություն և այլն/:

Ռուսերեն միևնույն գլխաբառի համար նշված են հայերեն մի քանի համարժեքներ: Օտար լեզուներից փոխառյալ տերմիններից շատերը անհրաժեշտության դեպքում ստուգաբանվում են:

ՍԱՀԱԿՅԱՆ Ե. ԱՆԳԼՈ-ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ- Բաքու: 1919.- 160 էջ:

Բառարանն իրականում 320 էջանոց է, քանի որ յուրաքանչյուր երկու էջը մեկն է հաշված: Պարունակում է 3000 բառահոդված: Անգլերեն գլխաբառերի հնչումը տրված է ռուսերեն, իսկ վերջիններինը՝ անգլերեն: Դժվարությունները հաղթահարելու նպատակով առանձին գրերի վրա դրված են պայմանական նշաններ, որոնք իրենց շարդարացրին և հետագայում գործնական կիրառություն չունեցան, ինչպես որ իրեն շարդարացրեց այս բառարանը, որի պատճառով էլ գործածությունից շուտ դուրս եկավ:

ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀԱՆ. ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՎ:-Բեյրութ: 1963.- 1279 էջ:

Այս գլուխգործոց, հսկայածավալ աշխատանքը մարդկային մեկ կյանքի հատուցմամբ ստեղծված գործ է, որի նմանը աշխարհի նույնիսկ շատ քաղաքակիրթ ժողովուրդներ չունեն: Համաբարբառն սկսվում է ,, Նախաբանից,,-ով, որտեղ խոսվում է այս գործի ստեղծման հետ առնչվող բազմաթիվ հարցերի մասին: Համարարբառը շատ ճոխ ու հարուստ է և աչքի է ընկնում բնագրա-

յին բազմաբնույթ օրինակներով: Նրանից օգտվելը չափազանց դյուրին է: Սկսվում է Աբբա բառով և վերջանում Օրեք /կողոպուտ, գիշատիչ/ բառով:

ՍԱՐԱՖՅԱՆ ԿՂԵՌՊԱՏՐԱ.ԳԻՐՔ,ՈՐ ԿՈՉԻ ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ:- Պետերբուրգ: 1788.- 285:

Ռուս-հայերեն և հայ-ռուսերեն երկլեզվյա բառարան է,որի առաջին բաժինը պարունակում է 2000, իսկ երկրորդը՝ 2500 բառահոդված: Բառարանը նաև պարունակում է ռուսաց կայսրին, Էջմիածնի միաբանությանն ու Ղուկաս կաթողիկոսին նվիրված ձոներգեր:

Բառարանը ստեղծված է Ռուսաստանում և առաջին հերթին Մոսկվայում ու Պետերբուրգում ապրող և ուսանող հայ երիտասարդներին օգնելու նպատակով:

ՅԱՐՈՒՆՅԱՆ ԲԱԳՐԱՏ,ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ-ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԲԵԼԱՏԻԿ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ /1-ին մաս/:- Եր.: 1980.- 260 էջ:

Թեմատիկ բառարան է՝ ստեղծված հանրակրթական դպրոցի սովորողների համար: Այդ պատճառով էլ բառերը ներկայացված են փնջերով՝ բոլորն էլ նույն հնչյունի ուղղագրության վերաբերյալ:

ԱԲԱՍՏԱՑԻ ՄԽԻԹԱՐ.ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ: Հատ.1:-Վենետիկ: 1749.- էջ 22 1251: Հատ.2-րդ:- Վենետիկ: 1769:

Բառարանի առաջին հատորը պարունակում է ընդարձակ առաջաբան և 54 հազար բառահոդված: Երկրորդ հատորը պարունակում է հետևյալ բաժինները՝ համապատասխան բառաքանակով.

1. ,,Մնացորդք գրաբար բառից հայկազեան լեզուի,, /1-763 էջ, 8 հազար բառահոդված, հեղ. Սիմոն Աստվածատրյան/.
2. Բառարան հատուկ անուանց, Աստվածաշունչ գրոց հին և նոր կտակարանց,, /1-232 էջ, 7000 բառահոդված, հեղ.Զաքարիա Ալեքսանյան/.
3. ,, Բառարան յատուկ անուանց, որք գտանին այլ և այլ գիրս արտաքո Աստուածաշունչ գրոց,, / 233-371 էջ,4500 բառահոդված, հեղ. Հգնատոս Խաչատրյան/.
4. ,, Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն,, / 1-416 էջ, 13 հազար բառահոդված, հեղ. Ս.Աստվածատրյան, Հ.Խաչատրյան, Զ.Ալեքսանյան և ուրիշներ/.
5. ,, Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառն,,/ 1-70 էջ, 22

հազար բառահոդված, հեղ. Մ.Անանյան, Ս.Սալիկյան/:

ՍԵԺԹՍԿԻ ԿԻՆՍՏՍԻՆ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՑ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1953.- 159 էջ:

Սա այս բառարանի 1950թ. լույս տեսած ռուսերեն հրատարակության թարգմանությունն է, որի տեքստում կատարված են մասնակի փոփոխություններ ու լրացումներ՝ պայմանավորված մեր ազգային երաժշտության և երաժշտական գործիքների առանձնահատկություններով ու դրանց բնույթով: Առանձին հոդվածներ վերաբերում են երաժշտության տեսության: Վերջում տրված է օտարազգի երաժշտական տերմինների ցանկ-հավելված: Բառարանը պարունակում է 500 բառահոդված:

ՍԵԼՑԱՆ ԷԴՈՒԱՐԴ.ՀԱՅԵՐԵՆ-ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆ,ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Սոֆիա : 1980.- 132 էջ:

Երկու բաժնից բաղկացած այս բառարանը պարունակում է սովորողների ակտիվ-խոսակցական բառապաշարը. ինչպես նաև հայերենի և բուլղարերենի վերաբերյալ մատչելի քերականական տեղեկություններ: Տրված է հայերենի այբուբենը՝ տպագիր և ձեռագիր, մեծատառ ու փոքրատառ գրությամբ՝ դիմացը հայերեն-բուլղարերեն համապատասխան օրինակների նշումով/օր.պանիր-пашир-сирене , ջուր- вода և այլն/: Բուն բառահոդվածները ներկայացված են թարգմանաբար / օր. անհատական- П.ЛИЧЕН կամ ГРУБ П. - կոպիտ, կոշտ և այլն/:

ՍԵԿՈՅԱՆ ԱՐԱ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1978.-359 էջ:

Պարունակում է ժամանակակից գրական ռուսերենի 14360 բառ-տերմին, որոնց իմաստները միանգամայն ճշտորեն են թարգմանված հայերեն: Բոլոր գլխաբառերը, բացի միավանկներից, նշված են շեշտով: Նույնանուն բառերը տրված են առանձին և համարակալված են: Գոյականների և հինգից բարձր քանակական թվականների համար նշված են սեռական հոլովի վերջավորությունները: Մնացած խոսքի մասերի համար ևս նշվում են նրանց բնորոշ առանձնահատկությունները:

ՍԵՖԵՐՅԱՆ ՍՈՆԱ,ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԻՆԱ,ԼԱՋԱՐՅԱՆ ԱՐՓԻԿ. ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1986.- 246 էջ:

Ուսումնական և թարգմանական նպատակներ հետապնդող բառարան է, որը պարունակում է հինգ հազար անգլերեն դարձվածաբանական միավոր՝ հայերեն թարգմանությամբ: Բառարանում միաժամանակ տրվում են քերականական գիտելիքներ ու այլ բնույթի տեղեկություններ:

ՍԻԱԲԱՆԴՈՒ ՍԱՄԱՆԴ,ՀԱՅ-ՔՐԴԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1957.- 352 էջ:

Սա մինչ այժմ կազմված հայերեն-քրդերեն և քրդերեն-հայերեն բառարաններից լավագույնն ու լիարժեքն է, որը պարունակում է 23 հազար բառահոդված: Այս բառարանի համար, որպես աղբյուր,հիմք են հանդիսացել հայերեն և ռուսերեն լավագույն բառարանները,ինչպես նաև քրդական Կուրմանջի բարբառի և Քալհուրի, Գազայի ու Գուրանի խոսվածքների բառապաշարը:

Հեղինակները, անալոգիայի սկզբունքով, հայերենի նորաբանությունների հիման վրա կերտել և բառարան են մտցրել մի քանի տասնյակ քրդերեն նորակերտ բառեր:

ՍԻՄՈՆՅԱՆ ԵԿԵՏՈՒՄ.ՓՈՔՐԻԿ ԲԱՌԳԻՐՔ ԱՆԳԼԻԱՑԻՈՑ ԼԵԶՈՒԷ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՀԱՅ ԲԱՐԲԱՌ:- Մադրաս: 1803.- 142 էջ:

Պարունակում է 5000 բառահոդված: Նախատեսված է՝ որպես օգնություն անգլերեն սովորողներին: Բառարանը բաղկացած է երեք մասից՝ ներածություն/ 1-68 էջերը/, բուն բառարանը / 68-140 էջերը/, հավելումներ / 140-142 էջերը/: Աղքատ բառապան է, այդ պատճառով էլ գործածությունից շատ շուտ դուրս եկավ:

ՍՅՈՒՄԵՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ.ԲԱՌԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ:- 1926:

,, Սուրբ գրոց բառարանը,, առաջին անգամ լույս է տեսել 1881 թվականին: Ա.Սյուրմելյանի բառարանի մասին կցկտուր տեղեկությունների հանդիպեցինք սփյուռքահայ մամուլում: Բուն բառարանը մեզ չհաջողվեց ձեռք բերել/ ըստ երևույթին այն չկա մեր հանրապետությունում/: Այդ պատճառով էլ հնարավոր չէ շատ բան ասել կամ այն նկարագրել:

ՍՈՂԼԵԵՅԱՆ ԱՆԱՅԻԱՍ.ԲԱՌԱՐԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՄԵՆԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ: - Եր.: 1976.- 48 էջ,

Բառարան-մինիմումը, ի տարբերություն սովորական բառարանների ու բառացանկերի, ամփոփում է տերմինի արժեք ունեցող բառակապակցություններ ու դարձվածներ / նաև կայուն խոսքաձևեր ու արտահայտություններ/: Բառարանը նախատեսված է բուհերի տեխնիկական բաժինների ու ֆակուլտետների սովորողների, ասպիրանտների ու գիտաշխատողների համար:

ՍՈՄԱԼՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ.ԲԱՌԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ՅԱՆԳԼԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՏԱՃԿԵՐԵՆ: -Վենետիկ: 1843.- 444 էջ:

Այս և հաջորդ երկու բառարանները գետեղված են մեկ ընդհանուր ծավալուն հատորի մեջ: Դրանցից յուրաքանչյուրը

պարունակում է 8000 բառահոդված:

Այս բառարանում գլխաբառերը բացատրված են հայերեն և տաճկերեն՝ ընդարձակ մեկնաբանությամբ և բերականական տեղեկություններով հանդերձ:

ՍՈՄԱԼՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ.ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆ Ի ՏԱՃԿԵՐԵՆԷ ՅԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՎ Ի ՀԱՅԵՐԵՆ:- Վենետիկ: 1843.- 237 էջ:

Նախորդի հետ կազմում է ընդհանուր բառարանի երկրորդ մասը և նույնպես պարունակում է 8000 բառահոդված: Թուրքերեն գլխաբառերը հայատառ են / օր. ազընթը, լաթիֆե,քիզիր և այլն/, որոնց հաջորդում է անգլերեն և ապա հայերեն բացատրությունը: Բառարանը պարունակում է մեծ թվով առածներ և այլ բնույթի պատրաստի խոսքաձևեր, հավելված և բառացանկեր:

ՍՈՄԱԼՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ. ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ ՅԱՆԳԼԻԵՐԷՆ ԵՎ Ի ՏԱՃԿԵՐԵՆ: - Վենետիկ: 1843.- 408 էջ:

Սա նույն ընդհանուր հատորի երրորդ բաժինն է, որի հայերեն գլխաբառերը ևս թվով 8000-ն են: Դրանց դիմաց նշված են անգլերեն, ապա տաճկերեն համարժեքները, ինչպես նաև անհրաժեշտ բերականական իրողություններ ու կարգեր: Վերջում տրված է ,, Անուանք անձանց,, ցանկ-հավելված, որը պարունակում է հայերեն և օտար պատմական ու դիցաբանական հատուկ անուններ:

Պետերբուրգ:
1893/1-ին հրատ.: - Պետերբուրգ: 1887/:

Նկարագրությունը վերաբերում է երկրորդ հրատարակությանը, որը պարունակում է 140 բառահոդված: Այս բառարանի մասին շատ բան հայտնի չէ:

Հայտնի է, սակայն, որ նրանում, մյուս լեզուների համեմատությամբ, հայերեն բառերն ավելի շատ են:

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ.ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ: Հատ.1/Ա-Թ/:- Եր.: -1973.- 382 էջ: Հատ.2/Ժ-Մել /:- Եր.: 1981.- 325 էջ:

Գ.Ստեփանյանի / առայժմ երկհատոր/ կենսագրական բառարանը նախորդ այսօրինակ բոլոր բառարաններից տարբերվում է իր ծավալով, գիտական բարձր մակարդակով. հարուստ նյութով և հավաստի փաստերով:

Բառարանում հիմնականում տեղ են գտել հայ մշակութային գործիչները, դրանց հետ նաև նրանք, ովքեր իրենց գործունեությամբ կապված են եղել հայկական մշակույթի հետ:

Բառարանի ողջ պարունակությունը 10 հազար բառահոդված է:

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԱՆԻԵԼ.ՍՈՂԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԳԱՂՂԻԵՐԵՆ:- Վենետիկ: 1931.- 448 էջ:

Պարունակում է 17 հազար բառահոդված: Թեև բառարանը գործնական բնույթ ունի և հետապնդում է ուսուցողական նպատակ, բայց և այնպես ընդգրկած բառանյութով մոտենում է գիտատեսական բնույթի բառարաններին: Այն իրականում Մ.Ավգերյանի բառարանի համառոտությունն է, որը նաև պարունակում է քերականական տեղեկություններ և այլ բնույթի փաստեր:

ՍՏԵՓԱՆՈՍ ՌՈՇՔԱ/ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ /. ԳԱՆՁ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ:- Վենետիկ: 1740.- 943 էջ:

Այս հայ-լատիներեն բառարանը, որ ընդունված է նաև անվանել Ստեփանյան բառարան, բաժանված է երկու մասի՝ հայերեն-լատիներեն, որն ավելի ընդարձակ է / ընօրինակն զբաղեցնում է 943 երկսյունակ էջ/ և լատիներեն-հայերեն, որը ավելի համառոտ է և կազմված է 336 երկսյունակ էջից: Ծոխ ու արժեքավոր բառարան է: Ալիշանը Ռոշքայի բառարանը համեմատելով Նոր Հայկազյան բառգրքի հետ, գտել է մոտ 5000 նոր բառ, որոնք տեղ չեն գտել Հայկազյան բառարանում: Փաստը վկայում է, որ, ըստ երևույթին, Հայկազյան բառգրքի հեղինակները տեղյակ չէին Ստեփանոս Ռոշքայի ձեռագիր բառարանին:

ՍՐԱՊՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ.ԻՏԱԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1982.- 75 էջ:

Համառոտ, փոքրածավալ բառարան է, որը պարունակում է մոտ 1700 բառահոդված, ինչպես նաև մի քանի հազարյակ ոճեր ու խոսակցական արտահայտություններ: Բառարանը, որ նախատեսված է բուհերի քանասիրական և ռոմանո-գերմանական ֆակուլտետի ուսանողների համար, կարող է օգտակար լինել նաև երաժիշտներին ու երաժշտության պատմությամբ զբաղվողներին, ինչպես նաև ճանապարհորդական և տուրիստական բյուրոներում աշխատող թարգմանիչ-ուղևորներին:

ՍՐԱՊՅԱՆ ՊԵՏՐՈՍ,ԳԵԴՈՅԱՆ ՀՈՎՍԵՓ,ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ. ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ,ՖՐԱՆՍԵՐԵՆ,ԳԵՐՄԱՆԵՐԵՆ: -Եր.: 1952.- 264 էջ:

Երեք լեզուներին առնչվող դպրոցական-ուսուցողական բնույթի բառարան է, որի յուրաքանչյուր բաժինը պարունակում է 4000-ական բառահոդված /ընդամենը՝ 12000/:

Բառարանն ընդգրկում է ամենօրյա գործածության և դպրոցական դասագրքերում հանդիպող բառերն ու արտահայտու-

թյունները: Դրանց շարքում տեղ են գտել նաև որոշ ոճեր ու դարձվածներ: Տրված են նաև քերականական բացատրություններ:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՇՈՏ.ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:-Եր.: 1967.-683 էջ:

Պարունակում է գրաբարի, միջին հայերենի, գրական արևելահայերենի ու արևմտահայերենի, մեր բազմաճյուղ բարբառների ու խոսվածքների հոմանիշային և դարձվածաբանական բառանյութը՝ շուրջ 83 հազար բառահոդված: Դրանց ընտրությունը կատարված է որոշակի սկզբունքով ու չափանիշներով, որոնց վերաբերյալ հեղինակն իր տեսակետները առաջ է քաշել բառարանի առաջաբանում: Իմաստային և կիրառական նշումներից բացի բառահոդվածների վերաբերյալ տրվում են նաև քերականական տեղեկություններ ու մեկնաբանություններ:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՇՈՏ,ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ.ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1975. - 614 էջ:

Պարունակում է հայոց լեզվի բառապաշարի մի ինքնատիպ մասը՝ դարձվածներն ու դրանց մոտ կամ այդ աղբյուրից ծագող արտահայտությունները, որոնք հենց այդ պատճառով էլ միատարր ու միաբնույթ չեն: Բուն դարձվածներից բացի մյուսները ներկայացված են դարձվածային տարբերակներ, որոնք բառարանում խմբավորված են մի քանի հատկանիշով՝ քերականական բնույթի տարբերակներ, եզակի և հոգնակի թվի տարբերակներ, արևմտահայերենի և արևելահայերենի, գրաբարի և արդի հայերենի համարժեքային տարբերակներ, գրական և բարբառային տարբերակներ և այլն:

ՎԱՆՑՅԱՆ ԳՐԻԳՈՐ,ԳՐՊԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ:- Թիֆլիս: 1914.-32 էջ:

Սա բառարանի վերջին՝ երրորդ հրատարակությունն է. առաջինը և երկրորդը լույս են տեսել 1906 և 1910 թվականներին: Պարունակում է 700 բառ: Բառահոդվածները բաժանված են չորս մասի, ուր առանձին-առանձին տրված են է,օ,յ,ո տառերի ուղղագրությանը վերաբերող համապատասխան քանակությամբ բառեր /է-ով՝ 178, օ-ով՝ 186, յ-ով՝ 107, ո-ով՝ 230/:

ՎԱՌԵՑՅԱՆ ԵՐՎԱՆԴ.ԲԱՌԳՐՔՈՒՅԹ ՀԱՆՔԱՆՎԱՆՑ:- Սեբաստիա: 1914.- 24 էջ:

Սույն բառարանի առաջաբանից պարզվում է, որ հեղինակը կազմել է ,,Ստուգաբանական և բազմալեզվյան ընդարձակ զիտական բառարան,, , որը տակավին 1914-ին անտիպ էր: ,,Բառագրքույկ հանքանվանցը,, ծաղկաքաղ է այդ բառարանից:Երկլեզվյա բառացանկ է՝ Ֆրանսերեն-հայերեն: Պարունակում է 700 բառահոդված, որոնցից 100-ը, ինչպես նշում է հեղինակը,

,,կասկածելի հատուկներ,, և ,,նորակերտք,, են: Բառարանի վերջում տրված է ,, Հավելված,, , որը պարունակում է 310 բառ-տերմին:

ՎԱՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ. ԲԱՌԳՐՔՈՒՅԵՐ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՅՐ ԲԱՌԵՐՈՒ:- Սեբաստիա: 1914.- 52 էջ:

Հեղինակն իր այս վարքածավալ բառարանը համարել է ոչ լիակատար, որը Գ.Գասպարյանը հասկացել է թերատիպ և համարել այդպիսին: Մինչդեռ այն իրականում ամբողջական է / տես վերջին՝ 52-րդ էջում օ-ով վերջացող բառերը՝ օծանեմ, օձ, օշարակ, օշինդր, օրեն և այլն/: Բառգրքույկը պարունակում է այսօրինակ արմատական 1600՝ բառ, որոնց վերաբերյալ տրված են ստուգաբանական բացատրություններ:

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ ՍԱՄՎԵԼ. ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՄԱԳՂԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1903.- 37 էջ:

Սա դպրոցական-ուսուցողական բնույթի բառարան է, որը պարունակում է մոտ 3000 անգլերեն գլխաբառ՝ թարգմանված հայերեն: Թարգմանական բացատրություններից ու մեկնաբանություններից բացի բառարանը նաև անգլերենի և հայերենի վերաբերյալ պարունակում է քերականական տեղեկություններ:

ՎԵՑԻԿՅԱՆ ՍԵՐԳԵՆ. ԼԱՏԻՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Պլովդիվ: 1941.- 29 էջ:

Ոչ մեծ բառացանկ է՝ վավերացված /հաստատված/ բուլղարական հանրապետության կրթության նախարարության 1937թ.ապրիլի 1-ի նո.2351 հրամանագրով: Նախատեսված է ուսուցման չորս տարիների համար և պարունակում է 1200 բառ՝ յուրաքանչյուր տարվա համար 300-ական բառ:

ՎԵԼԼԻՈՆ ՀԱԿՈԲ. ԲԱՌԳԻՐՔ ԼԱՏԻՆ-ՀԱՅ / DICTIONARIUM NOVUM LATINO-ARMENICUM /:- Հռոմ: 1713.- 722 էջ:

Երկսյունակ էջերով ծավալուն, բավականաչափ մոխ ու հարուստ բառարան է: Պարունակում է աստվածաբանական, բնագիտական, բարոյագրական, պատմա-աշխարհագրական, մաթեմատիկական, իմաստաբանական և այլ բնույթի բառեր ու տերմիններ, որոնց թիվը կազմում է 26 հազար բառահոդված: Դրանց վերաբերյալ տրված են նաև քերականական համապատասխան հղումներ ու նշումներ: Բառարանը հատկապես աչքի է ընկնում նորաբանությունների առատությամբ:

ՑՈՂԱՎԱՐՅԱՆ ՆԱԶԱՐԵԹ. ԲԱՌԱՑՈՒՑԱԿ ԱԽՏԱՆՈՒԱՆՑ ԵՎ ԴԵՂՈՐԵԻՑ ՀԱՏԿՈՒԹԵՍՑ ԾՐԱՆՍԵՐԵՆԵ Ի ՀԱՅ:- Կ.Պոլիս: 1901.-40 էջ:

Սա բառարանի երկրորդ հրատարակությունն է /առաջինը՝

1900թ., 24 էջ: Ընդգրկում է 700 բառահոդված/, որը գարունակում է կրկնակի անգամ շատ՝ 1400 բառահոդված, որոնք միայն հիվանդությունների անվանումներ են: Բառարանում զգալի թիվ են կազմում հայերենին խորթ տերմիններն ու անվանումները, հատկապես նորակերտները, որոնք բավականաչափ ազատ են կազմված:

ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ ԵՂԻՍ.ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս. 1896.- 4 + 938 էջ:

Այս բառարանից առաջ հեղինակը Ազատաթոհյան ազգանունով հրատարակել է ,, Բառարան փիլիսոփայանը,, որն ընդգրկում է ընդամենը 68 բառահոդված:

Առավել արժեքավոր է Տեմիրճիպաշյանի այս բառարանը, որը նաև վերահրատարակվեց 1930-ին՝ Ս.Մաղրլյանի ջանքերով: Նա նախորդին ավելացրեց մոտ 10 հազար բառահոդված՝ դրանց ընդհանուր թիվը հասցնելով մոտ 17 հազարի:

ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ ԵՂԻՍ.ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ԳԱՂԼԻԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1888.- 448 էջ:

Թեև բառարանն անվանված է գրպանի, սակայն ոչբի է ընկնում թե՛ ընդհանուր բառերի ծավալությամբ և թե՛ կայուն կապակցությունների / դարձվածներ, ոճեր և այլն/ առատությամբ, որոնց բոլորի ընդհանուր թիվը կազմում է 25 հազար բառահոդված: Դրանց վերաբերյալ նաև արվում են քերականական տեղեկություններ: Բառարանի վերջում տեղադրված ցանկը ամփոփում է հատուկ անունները, որոնց դիմաց նշված են հայերենի առաղարձված ձևերը:

ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ ԵՂԻՍ.ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ - ԳԱՂԼԻԵՐԷՆ:- Կ. Պոլիս: 1894.- 413 էջ:

Այս մեծարժեք գործը, որ հրատարակվել է վաստակաշատ հեղինակի մահվանից հետո՝ մեծաշնորհ հրատարակիչ և գրավաճառ Ջարեհ Թորոսյանի ջանքերով, պարունակում է 25 հազար բառ ու գործածական ոճեր:

Ֆրանսերեն գլխաբառերի դիմաց բացատրություններից բացի արվում են նաև քերականական տեղեկություններ:

ՏԵՄԻՐՃԻԳԱՇՅԱՆ ԵՂԻԱ.ԳՐԳԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆԷ-ԳԱՂՂԻԵՐԷՆ:- Կ.Պոլիս: 1926.- 375 էջ:

Սա նախորդ բառարանի վերահրատարակությունն է, որը առավելապես գործնական-ուսուցողական տեսակետից է արժեքավոր: Ինչպես նախորդ, այնպես էլ այս բառարանի բառանյութի ընտրությունը կատարելիս հեղինակը առավելապես օգտվել է Գ.Լուսինյանի ընդարձակ և Ճ.Ոսկյանի համառոտ բառարաններից: Այս հրատարակությունը ևս պարունակում է 25 հազար բառահոդված:

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԲԱՐԷ-ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ: - Դոնի-Ռոստով: 1898.- 1150 էջ:

Այս բառարանը ժամանակին պատշաճ ուշադրության և դրվատանքի չի արժանացել: Դեռ ավելին. այն անվանվել է բառերի քաոս: Բառարանի պարունակությունը՝ 37 հազարի հասնող գրաբար,աշխարհաբար, բարբառային բառերի, ոճերի ու արտահայտությունների խառնափնթոր հավաքածու- ամբողջությունը բառարանում համակարգված է վայրիվերո, անսիստեմ սկզբունքով:

Բառարանում շատ են անստույգ բառերը, որոնք քաղված են ոչ հուսալի, էական արժեք չներկայացնող բառարաններից ու այլ աղբյուրներից:

ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ. ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ/գիրք Ա, պրակ առաջին/:- Թիֆլիս: 1904.- 181 էջ:

Բառարան-ցուցակը պարունակում է 1441-1900թթ. ժամանակահատվածում ապրած, ստեղծագործած հայ մշակույթի մոտ 140 նշանավոր գործիչների վերաբերյալ կենսագրական տեղեկություններ: Առանձին նշանավոր գործիչների / Մ.Աբեղյան, Ղ.Ալիշան,Խ.Աբովյան, Ղ.Աղայան, Գ.Աղանյան, Գ.Արծրունի և ուրիշներ/ վերաբերյալ կենսագրական տեղեկություններն ու բնութագրումները բավականաչափ ընդարձակ են: Բառարանն ընդգրկում է միայն Ա տառով ազգանուն ունեցող գործիչները:

ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ.ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ԷՍՊԵՐԱՆՏՈ-ՀԱՅԵՐԵՆ:-Թիֆլիս: 1910.- 250 էջ:

Այս աշխատանքը՝ որպես լիակատար բառարան էսպերանտո լեզվից- հայերեն, որ հրատարակվել է ,, VORTARO ESPERANTO ARMENA ,, ենթավերնագրով, պարունակում է 5000 բառահոդված: Մինչև այս բառարանի ստեղծումը Հ.Տեր-Աստվածատրյանը լույս է ընծայել ,, Դասագիրք էսպերանտո լեզվի,, ձեռնարկը, որը որոշ իմաստով նույնպես բառարան է: Բառարանը կազմված է փնջային /ընային/ սկզբունքով. այսինքն՝

արմատական բառը և ապա նրանով կազմված բառաձևերն ու ձևերը:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐ Ղ. ԳԻՐՔ ԽՈՍԱԿՑՈՒԹԵԱՆ Ի ՏԱՃԻԿԵՐԵՆԵ Ի ՀԱՅ:- Երուսաղեմ: 1882.- 80 էջ:

Սա այս բառարանի երրորդ տպագրությունն է: Բառարանի ոչ միայն գլխաբառերը, այլև առաջաբանը ևս հայատառ թուրքերեն է: Բայց քանի որ հայերեն և հայերենի բազմաթիվ լեզվա-ոճական ու քերականագիտական տերմիններ ու հասկացություններ ընդունակ թուրքերենն ի վիճակի չէ անվանելու, այդ պատճառով էլ դրանք տաճկերեն տեքստում օգտագործվել են տաճկատառ հայերենով: Բառարանը, որ պարունակում է 4700 բառահոդված, բաղկացած է ութ բաժիններից:

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ.ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐՔՈՒՅԿ:- Եր. : 1971.- 117 էջ:

Նախատեսված է տարրական դասարանների սովորողների համար՝ իբրև ուղղագրական-ուսուցողական ուղեցույց: Այդ պատճառով էլ բուն բառացանկից առաջ տրված են ուղղագրական-ուղղախոսական որոշ մատչելի կանոններ: Դրանք հատկապես վերաբերում են ձայնավորների և մի շարք բաղաձայնների / Բ-Փ, Գ-Ք, Դ-Թ, Զ-Ս,Ջ-Չ,Ռ-Ր,Մ-Ն և այլն/ ուղղագրությանը:

ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ.ՀԱՇՎԵՏՈՒՄԱՐ:- Եր.: 1984.-424 էջ:

Աշխատության 8-66 էջերը հատկացված են հաշվետումարի վերլուծությանը / հեղ. Լ.Ս.Խաչիկյան և Հ.Դ.Փափազյան/, 68-358 էջերը՝ բուն հաշվետումարին, որը բառանկարագրական, այլ կերպ ասած՝ բառահոդվածային տիպի աշխատանք է, իսկ 363-418 էջերը՝ ,,Անձանոթ և օտար բառերի ու տերմինների բառարանին,, , որտեղ ընդգրկված բառերը ստուգաբանվում են ծագումնաբանորեն և իմաստաբանորեն՝ իրենց բազմազան նշանակություններով ու կիրառություններով հանդերձ: Բառահոդվածները նաև պարունակում են համեմատական-համադրական տեղեկություններ: Գրքի 419-424 էջերը պարունակում են անձնանունների և տեղանունների ցանկերը:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ:- Բեյրութ: 1968.- 98 էջ:

Ուղեցույց-բառագրքույկը նախատեսված է սփյուռքահայ ,,նախակրթարանների և երկրորդական վարժարանների համար:, և բաղկացած է չորս մասից՝ 1.,,Կանոնական ուղղություն,. , 2.,Ուղղագրական ընդհանրություններ,, , 3.,,Ձայնափոխություն,, , 4.,,Ուղղագրական և ոճաբանական սխալներ,, ,

որոնցում քննության են առնված համապատասխան ընության բառերի ուղղագրական և ոճաբանական կանոնները, սխալ ձևերը և այլն: Բառարանը նաև պարունակում է ,, Պիտանի հավելվածական տեղեկություններ,,:

ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ,ԳԱՆԴՐՈՒՆԻ ՀՐԱՏ,ՏՈՆԻԿՅԱՆ ՓԱՐԱՄԱԶ.ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ: - Բեյրութ: 1968.- 923 էջ:

Նքեղ հրատարակությամբ ծոխ բառարան է, որը հեղինակները համեստորեն համարել են ,, առձեռն ու փորձնական,,: Բառարանը կազմված է որոշակի սկզբունքով.

ա/ Բառերի սահմանումներն ու բացատրությունները տրված են Ճշգրիտ ու բազմակողմանիորեն.

բ/ Բուն բառից /բառաձևից/ բացի որոշ դեպքերում տրված է նաև տվյալ բառի / գոյական կամ բայ/ արմատը.

գ/ Տողադարձի ժամանակ բառի կես մասի մեջ հեղինակները խուսափել են ,, ը ձայնավորի գործածումեն,,:

ՏԵՐ-ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ.ՀԱՄԱՌՈՏ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՌԵՎՏՐԱ-ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ:- Եր.: 1927.- 88 էջ:

Ժամանակի պահանջով ստեղծված այս բառարանը 20-30-ական թվականների համար մեծ նվաճում էր: Այն ընդգրկում է ժամանակին ռուսերենում գործածվող առևտրա-հաշվապահական բառ-տերմինները, որոնց ընդհանուր քանակը կազմում է 2500 բառահոդված: Դրանք հայթայթման համար հեղինակն օգտվել է մասնագիտական 14 բառարանից: Բառարանը աչքի է ընկնում մի շարք թերություններով:

ՏԵՐ-ՂԱՋԱՐՅԱՆ Ա. ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԱՌԱՐԱՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏԱԾ ՄՏՔԵՐԻ ՈՒ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ:- Թիֆլիս: 1908.-306 էջ:

Սա հանրագիտական բնության բառարան է, որտեղ օտարազգի բառերի հետ նաև ներկայացված են հայերեն բառեր, որոնց վերաբերյալ տրված են թե՛ ստուգաբանական և թե՛ իմաստա-քերականական բացատրություններ: Հայերենը ավելի շատ է դարձվածների և պատգամների խոսքաձևերի բաժնում: Բառարանը պարունակում է 1500 բառահոդված, որոնց մի զգալի մասը քաղաքական,տնտեսագիտական-փիլիսոփայական բնության հասկացություններ են:

ՏԵՐ-ՂԱՋԱՐՅԱՆ ՆՇԵՐԵՄ.ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԵ-ՀԱՅԵՐԵՆ:- Բեյրութ:1957.- 693 էջ:

Հայ բառարանագրության ուշագրավ երևույթներից է, որը հեղինակը համարել է կատարյալ՝ նրա ,, Նորոգ,, լինելու պատճառով: Բառարանը հատկապես աչքի է ընկնում Ֆրանսերեն

ոնների առատությամբ: Բառարանում մեծ քանակություն են կազմում անկանոն բայերը, որոնցով այնքան հարուստ է Ֆրանսերենը: Բառարանի վերջում / տես ,, Հավելված,, , էջ 677-693/ կանոնավոր բայերին զուգընթաց ներկայացված են նաև անկանոն բայերը՝ իրենց առանձնահատկությունների մեկնաբանությամբ:

ՏԵՐ-ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԻՈՆ. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ-ԲԱՌԱՓՆՋԻԿ:- Էջմիածին: 1911.- 23 էջ:

Այս աշխատանքը չափազանց բարձր է գնահատել Նիկողայոս Մառը, որը և նպաստել է դրա տպագրության գործին: Բառարանը պարունակում է 1300 բառ: Նրա 5-14 էջերն ընդգրկում են բառեր, իսկ 15-17 էջերը՝ բառական նշումներ: Որպես այդպիսիք, հեղինակը ներկայացրել է 19 բառահոդված:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ.ՕՏԱՐԱՋԳԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱԴՐԱՄԱՆ:- Երևան: 1935.- 105 էջ:

Սա արտատպություն է Թ. Ավդալբեգյանի, Պ.Սոտնիկյանի, Ե.Տեր-Մինասյանի և Վ.Փոթեյանի հեղինակակցությամբ կազմված ռուս-հայերեն բառարանից: Պարունակում է 800 դարձվածային միավոր-բառահոդված՝ քաղված լատիներենից, անգլերենից, Ֆրանսերենից, գերմաներենից, իտալերենից և այլ լեզուներից, որոնցից ամենաշատը՝ մոտ 75-80 տոկոսը, լատիներեն դարձվածներ են: Չափազանց աննշան են իտալերեն, անգլերեն և գերմաներեն դարձվածները:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ / կազմող և խմբագիր Հ.Բ. Բարսեղյան/:- Եր.: 1978.- 227 էջ:

Հիմնականում տեսական բնույթի աշխատանք լինելով, պարունակում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի կողմից վերջին տարիներին ընդունված որոշումները, որոշումների մեկնաբանությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ առանձին բառախմբեր ու բառացանկեր, որոնք ընդգրկում են 1000-ից ավել բառեր, արտահայտություններ ու տերմինի արժեք ունեցող հասկացություններ:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ. ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԼԱՏԻՆԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ:- Եր.: 1883.- 16 էջ:

Սա Երևանում լույս տեսած առաջին բառարանն է, որը պարունակում է 208 բառահոդված: Դրանք առօրյա գործածության բժշկական տերմին- հասկացություններ են՝ նախատեսված ժողովրդական լայն զանգվածների համար: Այդ պատճառով էլ բոլոր

բառահոդվածները ներկայացված են պարզ ու մատչելի բացատրությամբ:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ.ՄԱՐՄՆԱԿԱՋՄԱԿԱՆ ԿԱՄ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս: 1879.- 84 էջ:

Բառարանը կազմված է երկու մասից՝ լատիներեն-հայերեն և ռուս-հայերեն, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 900-ական բառահոդված:

Երկու բաժնի բառահոդվածները նույնն են: Բառարանագիրն հատկապես գերադասել է գերմաներեն տերմինները, որոնք նա թարգմանաբար գետեղել է իր բառարանում: Զգալի թիվ են կազմում / շուրջ 40 բառ/ նորակերտ տերմինները:

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս:1892.- 124 էջ:

Սա իրականում գերմանացի հայտնի բժիշկ- կենսաբան Պոլ Հյուգոյի / տես/ բժշկարանի թարգմանությունն է, որին Տիգրանյանը կցել է իր կողմից կազմված ռուս-հայերեն բժշկական տերմինների մի ծավալուն բառացանկ, որը ինքնուրույն աշխատանք է:

Բառարանը պարունակում է 3500 բառահոդված, որոնցից շատերը մինչ այդ չէին արձանագրված հայերեն բառարաններում:

ՏԻՄՈՖԵԵՎ ԼԵՈՆԻԴ,ՎԵՆԳՐՈՎ ՆԱԹԱՆ. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ: - Եր.: 1957.- 246 էջ:

Թարգմանական բառարան է, որը նաև պարունակում է զգալի թվով տերմիններ հայ գրականությունից ու բանահյուսությունից: Այլ խոսքով՝ բառարանը տեղայնացված է այնպես, որ նրանում հայ գրականությանն ու գրականագիտությանը վերաբերող տերմինները,տաղաչափությունը, գրական հոսանքները և ուղղությունները բնութագրող նյութերը ներկայացված են լիարժեք և գիտական չափանիշներով:

Բառարանը պարունակում է 600 բառահոդված:

ՏԻՐԱՑՈՒՅՑ ՆԵՐՍԵՍ.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ:-Վենետիկ: 1908.-40 էջ:

Թեև տեսական աշխատանք է, բայց և այնպես պարունակում է մեծ թվով բուսական և հանքաբանական բնույթի բառեր, որոնք ներկայացված են փնջերով՝ առանձին բառացանկերով ու առանձին էջերով: Օրինակ՝ 9-րդ էջում տրված են իտալական մի հովտում / Ջուռնատա/ աճող 77, 20-21-րդ էջերում՝ 21 բուսանուն և այսպես նաև մնացած փառանջերում ու էջերում:

ՏԻՐՈՅԱՆ ԱԹԱՆԱՍ.ՀԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: - Վենետիկ: 1907.- 686 էջ:

Բուն վերնագիրն է՝ ,, Հանրագրություն՝ որ է համազգային գրության նոր ոճ մը,, , որը արհեստական լեզուների համար բառարան կազմելու առաջին փորձերից մեկն է: Կազմված է երկու մասից՝ ,, Թվագիրք,, , որն զբաղեցնում է բառարանի 82-306 էջերը և պարունակում է 4000 բառահոդված: Երկրորդ մասը՝ ,, Բառաթվագիր,, , ընդգրկում է 307-652 էջերը և պարունակում է 7060 բառահոդված: 1-82 էջերը հատկացված են քերականական տերմինների, 653-686 էջերը՝ վարժություններին, որոնք վերաբերում են էսպերանտո լեզվին: Ա. Տիրոյանի ,,Հանրագրությունը,, նաև պարունակում է զգալի թվով բուսաբանական, կենդանաբանական, հանքաբանական, տիեզերագիտական, կրոնական և այլ բնույթի բառահոդվածներ, որոնք մեծ մասով քաղված են Մ.Քաջունու բառարանից:

ՏՈՆՈՅԱՆ ԱՐՇԱԿ,ՏՈՆՈՅԱՆ ՎԱՀԱՆ.ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ /Անգլերեն,ռուսերեն,հայերեն,գերմաներեն,Ֆրանսերեն լեզուներով/: - 1965.- 210 էջ:

Բառարանն ընդգրկում է ինչպես միջազգային /թարգմանական/, այնպես էլ հայկական հնագույն շրջաններից մեզ հասած մաթեմատիկական գրեթե բոլոր տերմինները, որոնց ընդհանուր թիվը 2667 է: Այսուհանդերձ, ժամանակակից գիտության ու տեխնիկայի զարգացման պայմաններում այս բառարանը լիակատար հայտարել չի կարելի, հետևապես դրա վերանայված ու համալրված վերահրատարակությունը խիստ անհրաժեշտ է:

ՐԵՍՏԵՆ ՄԻՔԱՅԵԼ/ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆՑ-ՊԱՏԿԱՆՅԱՆ/. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ:- Վենետիկ: 1822 / 1-ին հրատ./ և 1832.- 502 էջ:

Այս աշխատության բնույթի ու բովանդակության մասին տեղեկանում ենք նրա հետևյալ անոտացիայից. ,, Բառարան անուանց, զանազան ախտից, դեղորեից, բուսոց, հանքաց, դեղանիւթ ոգեաց, օդային, ցամաքային, ջրային կենդանեաց ամենայն ևս ուրեք ուրեք անուանց անդամոց նշանակեալ ի լատին, յիտալական, ի գաղղիական, յանգղիական, յունական, յարաբացւոց. ի պարսկական, ի տաճկական և ի հայ քարքառ հանդերձ քացատրութեամբ նոցին,, , և այս ամենին վերաբերող բառերի թիվը 2500 է:

ՐԵՍՏԵՆ ՄԻՔԱՅԵԼ.ԲԺՇԿԱՐԱՆ՝ ՄԱՐՄՆԻ ՎԵՐՔԵՐԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:- Թիֆլիս: 1914.- 140 էջ:

Սա 1823թ. Վենետիկում տպագրված մեծահոշակ բժշկա-

պետ Միքայել Բեստենի համանուն բժշկարանի թարգմանությունն է, որ իրականացրել է քահանա, թիֆլիսահայ նշանավոր մտավորական Գրիգոր Մանդակունին և հրատարակել 1914թ.: Այս գործի հրատարակության անհրաժեշտության մասին Մանդակունին խոսում է բժշկարանի առաջաբանում, նշելով նաև այն փաստը, որ ինքը բառարանի տեղայնացման հաշվին ավելացրել է բազմաթիվ նոր բառեր ու տերմիններ: Բժշկարան-բառարանի պարունակած բառահոդվածները բաժանված են ինը թեմատիկ խմբերի, որոնք համապատասխանաբար ամփոփում են դեղերի, դեղաբույսերի, հանքային ջրերի և այլնի վերաբերյալ որոշակի քանակությամբ տերմիններ ու հասկացություններ:

ՓԱՓԱԶՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ. ԲԱՆԱԼԻ ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ ԶՐՈՒՑԱԳՐՈՒԹԵԱՆ:- Կ.Պոլիս: 1910.- 199 էջ:

Հայերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն-ռուսերեն-իտալերեն-հունարեն-թուրքերեն պատկերազարդ բառարան է՝ բաղկացած երեք մասից՝ ,, Բառագիտությունը, կը պարունակե ամեն տեսակ խօսակցութեանց մեջ գործածելի բառերը՝ մասնավոր դասակարգութեամբ,,. մասն Բ. ,, Ամեն տեսակ խոսակցություններ,, , որոնք վերաբերում են արհեստներին, առևտրին, ճամփորդությանը և այլն. մասն Գ. ,, Ընդարձակ առևտրական և ընտանեկան նամականի, վաճառականական տոմսեր, մուրհակներ,, և այլն:

ՕՆՓԱՋՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԻԵՐԵՆ:- Կ.Պոլիս: 1905.- 507:

Բառարանը գործնական է համարված այն պատճառով, որ նախատեսված է հայկական դպրոցներում անգլերենի ուսուցումը առավել չափով կատարելագործելու նպատակով: Հայերենի միևնույն բառի դիմաց նշված են անգլերենի մի քանի համարժեքներ, ինչպես նաև քերականական կարգեր / սեռ,թիվ/ և խոսքիմասային պատկանելությունը: Բառարանը պարունակում է 40 հազար բառահոդված, որոնցից շատերը հոմանիշներ, ոճեր ու դարձվածներ են:

ՓԱՓԱԶՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ. ՁՈՐԵՔԼԵԶՈՒԵԱՆ ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ/CULDE DE CONVERSATION /:- Կ.Պոլիս: 1905.- 156 էջ:

Բառարանն իրականում 312 էջանոց է. երկու երեսը էջանշված է նույն թվահամարով, քանի որ քառալեզվյա բառահոդվածները ներկայացված են երկու էջով: Բառահոդվածները դասավորված են թեմատիկ բնույթով: Բառարանն սկսվում է առաջաբանով և ավարտվում ,, Առձեռն նամականիով,, ու ,, Ո՛ որդյակ, իմ սիրասուն,, ձոներգով՝ նվիրված հայոց

լեզվին:

ՓԱՓԱԶՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ.ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԴԼԻԵՐԻՆԻ-ՀԱՅՆԵՐԷՆ:- Կ.Պոլիս: 1910.- 1104 31 էջ:

Բառարանը չունի ոչ մի ուղեցույց կամ առաջաբան: Զաֆազյան աղքատիկ համառոտագրությանը հաջորդում է բուն բառացանկը: Բառարանի 1135 էջից 1104-ը երկսյունակ է՝ մանրատառ բառահոդվածներով և բացատրություններով: Դրանց թիվը հասնում է 30 հազարի: Բառարանին կցված է նաև ,, մասնավոր ,, բառացանկ, որը պարունակում է 700 ոճ, ասույթ ու դարձվածք՝ քաղված անգլիական աղբյուրներից:

ՓԵՇՏՄԱԼՃՅԱՆ ԳՐԻԳՈՐ.ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ: Հատ. 1/Ա-Կ/:- Կ.Պոլիս: 1844.- 764 էջ: Հատ. 2/Հ-Ֆ/: - Կ.Պոլիս: 1846.- 952 էջ:

Երկու հատորը միասին պարունակում են 60 հազար բառահոդված/յուրաքանչյուրը՝ 30 հազար/, որը լրացվել է հեղինակի մահից հետո՝ Հովհ.Տեր-Պողոսյանի, իր եղբայր Գ.Պողոսյանի /Գալուստ Դպիր/ և տպագրիչ Գ.Սրապյանի ջանքերով: Խոսելով այս բառարանի առավելությունների ու թերությունների մասին, Հ.Աճառյանը նշում է, որ այն ,, կազմված է մեծ վրայից, բայց ունի մի խումբ նոր հավելումներ. գործածությունը զգուշալի է,, :

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ /խմբ. Մ.Ռոզենտալի/: - Եր.: 1975.- 467:

Սա հայերեն երրորդ հրատարակության թարգմանությունն է, որ զգալիորեն տարբերվում է նախորդ հրատարակություններից: Շատ բառեր, տերմիններ ու հասկացություններ նոր են, շատերն էլ՝ նորացված, լրացված ու թարմացված: Բառահոդվածները նաև պարունակում են մեջբերումներ ինչպես մարքսիզմի դասականներից, այնպես էլ անվանի փիլիսոփա-մտածողների աշխատություններից՝ համապատասխան հղումներով: Բառարանին կցված է փիլիսոփայական գրականության մեջ հանդիպող օտար տերմինների և արտահայտությունների մի բառացանկ, որի մի զգալի մասը լատիներեն է:

ՓՈԹԵՅԱՆ ՎԱՐԴԱՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1931 /1-ին հրատ./.- 122 էջ: 1934/2-րդ հրատ./- 136 էջ:

Առաջին հրատարակությունը պարունակում է 3600, իսկ երկրորդը՝ 5000 բառահոդված: Համարվում է ժամանակի մասնագիտական լավագույն բառարաններից մեկը: Բուն աշխատանքային տերմիններից բացի բառարանում նաև տեղ են գտել օրենսդրական- իրավաբանական այնպիսի տերմիններ, որոնցով կար-

գավորվում են աշխատանքային օրենսդրությունն ու հարաբերությունները:

ՓՈՔՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ.ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1972.- 324:

Բառարանի հեղինակը օգտվել է ինչպես հայկական հին աղբյուրներից / Մ.Գոշ/, այնպես էլ մասնագիտական գրականությունից, բառարաններից և օրենսդրական ակտերից: Բառարան են մտցված հայ, ռուսական, եվրոպական, նույնիսկ հին հռոմեական և արաբական իրավունքի ու պետության կառավարման շնորհավորին վերաբերող հարյուրավոր բառեր և տերմիններ՝ իրենց հայերեն համարժեքներով հանդերձ: Բոլոր բառահոդվածները մեկնաբանված են բազմակողմանիորեն, ընդարձակ բացատրությամբ:

ԳՐՈՒՆՑՅԱՆ ՏԻՐԱՅՐ. ՀԱՅԵՐԵՆ-ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Մյունխեն: 1952.- 16 + 505 էջ:

Արժեքավոր և հարկավոր բառարան է, եթե հատկապես գնահատելու լինենք ժամանակի պահանջով ու չափանիշներով: Բառահոդվածները, որպես առաջին փորձ հայ իրականության մեջ, ներկայացված են կիսաբնային մեթոդով. նախ՝ տրված է գլխաբառը, ապա՝ հաջորդաբար դարձյալ տվյալ արմատ-գլխաբառը, հետո՝ մյուս բաղադրիչները/ արմատ կամ ածանց/:

Պարունակում է 25 հազար բառահոդված և քերականական տեղեկություններ:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ.ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԱՐԱՆ ՄՈՌԱՆՑ ԴԵՂՕՐԷԻՑ:- Նոր-Նախիջևան:- 1793.- 134 էջ:

Բուն բառարանն ընդգրկում է 85-134 էջերը, որոնցում ամփոփված է 362 բառահոդված: Բառարանը հատկապես նախատեսված է ժողովրդական լայն զանգվածների համար, որոնք հաճախակի են առնչվում դեղաբույսերի և բուժաբույսերի հետ:

ՋԱՔՈԲՅԱՆ ՄԱՆՎԵԼ. ԲԱՌԳԻՐՔ ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՎ ԳԻՏՈՒԹԵՆՑ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ ԴԳՐՈՒԹԵՆՑ: Հատ.1:- Վենետիկ: 1891.- 4 + 1189 էջ: Հատ. 2.-Վենետիկ: 1892.- 878 էջ:

Բառարանը բաղկացած է երեք հատորից. առաջին և երրորդ հատորները /Ֆրանսերեն-հայերեն/ անհամեմատ ընդարձակ ու հարուստ են, իսկ երկրորդը՝ հայ-Ֆրանսերենը, համառոտ է: Առաջին հատորը պարունակում է 11000, երկրորդը՝ 14000, իսկ երրորդը՝ 28000 բառահոդված /ընդամենը՝ 53000/: Բացի հայերեն բառարաններից,Ջաջունին օգտվել է նաև օտար մի շարք աղբյուրներից, հաղթահարելով բազմաթիվ

դժվարություններ: Այսուհանդերձ, Քաջունու բառգիրքը լայն ընդունելության չարժանացավ. Հ.Աճառյանն այն համարեց ,,սխալաշատ և զգուշալի աշխատություն,,:

ՔԵՈՓԻԼՅԱՆ ԱՄԲՐՈՍԻՈՍ.ԵՐԵՔԼԵՋՎՅԱՆ ԲԱՌԳԻՐՔ ՏԱՃԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԳԱՂԻԵՐԵՆ:-Վիեննա: 1883.- 956 էջ:

Բառարանը պարունակում է երեսուն հազար բառահոդված և տաճկերենի համառոտ քերականությունը: Գլխաբառ թուրքերեն բառահոդվածները տրված են հայատառ՝ այբբենական կարգով: Բառարանի առավելությունն ակնհայտ է հատկապես ։ որ այն նաև ստուգաբանական բնույթ ունի. տեղեկություններ են տրվում թուրքերեն բառերի ծագման մասին, որից ստուգապես պարզվում է, թե տվյալ թուրքերեն բառի ծագումը պարսկերենից, արաբերենից, թե մեկ այլ լեզվից է:

ՔԵՐԵՍՏԵՃՅԱՆ ՊԵՏՐՈՍ. ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ/ETUDE PHILOLOGIQUE ET LEXICOLOGIQUE /:- Լոնդոն 1945.- 448 էջ:

Լեզվաբանական-համեմատական բառարան է, որտեղ հեղինակը վեց հազար բառարմատ համեմատելով աշխարհի 900 լեզվի շուրջ հարյուր հազար բառի հետ, հաստատում է, որ այդ 600 բառը հայերեն ծագում ունի: Թե որքանով է ճշմարիտ հեղինակի այս կարծիքը, դժվար է ասել: Այնուամենայնիվ, կասկածը մնում է ենթարատելի:

ՔԵՐՈՎԲՅԱՆ ԳԵՂԱՄ.ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԳԻՐՔ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՎԻ:- Կ.Պոլիս: 1962.- 566 էջ:

Բառգիրքը, որ պատրաստված է հատկապես դպրոցականների համար, պարունակում է նրանց դասագրքերում հանդիպող և անհրաժեշտ բացատրության կարոտ բառերն ու հասկացությունները, որոնց ընդհանուր քանակը կազմում է 22 հազար բառահոդված: Դրանցից բացի բառարանի վերջում հավելվածաբար նշված են նաև որոշակի քանակությամբ բնաձայնական բառարան:

ՔՈՉՈՅԱՆ ԱՇՈՏ.ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.:1966.- 339 էջ:

Թեև անվանված է դպրոցական, սակայն իր ընդգրկած բառաքանակով /պարունակում է 8 հազար բառահոդված/ դուրս է գալիս գործնական բնույթի բառարանների սահմաններից: Ընդգրկված բառաքանակը քաղված է մայրենի լեզվի, գրականության դասագրքերից և արտադպրոցական ընթերցանության համար պետական ծրագրով նախատեսված երկերից: Բառարանում նախ՝ տրված են գլխաբառը, ապա՝ նրա քերականական հատկանիշ-

ները / հոլով,հոլովում,առում,թիվ,քայի համար նաև սեռը,համապատասխան վերջավորությունների նշումով/:

ՔՈՉՈՅԱՆ ԱՇՈՏ.ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1963.- 200 էջ:

Պարունակում է հայ մեծ երգիչ-քանաստեղծ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի քառապաշարը / 2020 քառահոդված/: Այս քառարանը փաստորեն վաստակաշատ Մ.Հասրաթյանի կազմած ,, Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածուի,, համաբարբառ-քառարանն է, որն ամբողջական է ու լրիվ:

Ինչպես նշված է առաջաբանում, քառահոդվածները դասդասված ու խմբավորված են ըստ քանաստեղծի լեզվի շերտերի, և դա այն պատճառով, որ Սայաթ-Նովայի լեզուն միատարր չէ: Բառարանից պարզ է դառնում, որ մեծ քանաստեղծի քառապաշարի միայն 63 տոկոսն է հայերեն:

ՔՐՄՐՅԱՆ ՍՈՆԱ, ՏԵՐ-ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ. ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Եր.: 1958.- 204 էջ:

Այս բառարանը, որ պարունակում է 7000 քառահոդված, կազմված է 5-7-րդ դասարանների անգլերեն լեզվի դասագրքերի հիման վրա և նախատեսված է թեքումով /անգլերեն/ դպրոցների սովորողների համար: Բառարանագրված են այն բոլոր բառերը, որոնք հանդիպում են միջնակարգ դպրոցի անգլերենի դասագրքերում: Գլխաբառերը ներկայացված են այբբենական կարգով՝ համապատասխան շեշտադրությամբ: Տարբերակված են բուն անգլիական և ամերիկյան ուղղագրության սկզբունքներն ու ձևերը: Նշված է նաև բառերի խոսքիմասային պատկանելությունը:

ՕՐԲԵԼԻ ՏԵՐ-ՀՈՎԱՆԻՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ. ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԴԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆԻ Ի ՀԱՅ ԼԵԶՈՒԻ Ի ՌՈՒՍ:- Մոսկվա: 1932.- 176 էջ:

Սա հայ-ռուսերեն հնագույն բառարաններից է՝ բաղկացած երկու մասից: Առաջինը վերնագրված է ,, Համառոտություն սրբազան պատմության,, , պարունակում է մոտ 300 ընդարձակ նկարագրությամբ քառահոդված, որոնք վերաբերում են պատմամշակութային կյանքին, եկեղեցուն, հոգևորականությանը, բուսական և կենդանական աշխարհին, իսկ երկրորդ մասը՝ ,,Համառոտ բառարան վասն քառից, պարունակելոյ ի սրբազան պատմության յասմիկ,, , որ բուն բառարանն է, ընդգրկում 105-171 էջերը՝ Աբեղնազով քառով սկսված, Սարաա քառահոդվա-

ծով վերջացրած: Բառարանի վերջում / էջ 172-176/ տեղեկություններ են տրվում Մոսկվայի Լազարյան Ճեմարանի, նրա կրթական համակարգի, այնտեղ ուսուցանվող առարկաների/ տես ցանկը/ և այլնի մասին:

ՕՐԲԵԼՅԱՆԻ ՍԱՖԱ.- ՎՐԱՑԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:

Տվյալները /գրության թիվը, տեղը, էջաշանակը/ անհայտ են: Պարունակում է 1874 բառահոդված: Բառարանում հայերեն բառերը ևս ներկայացված են վրացատառ. բառահոդվածները մեկնաբանված են բազմակողմանիորեն: Այս տեսակետից ավելի ,,արտոնյալ,, են վրացերեն գլխաբառերը, թեև դրանց հայերեն համարժեքները ավելի շատ են ու բազմազան և աչքի են ընկնում իմաստի մոխությամբ:

ՕՐՄԱՆՅԱՆ ՄԱՂԱԲԻԱ /ՔՆՆԻՍԵՐ/. ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ:- Անթիլիաս: 1957.- 298 էջ:

Սա աղոթքներին, հոգևոր տոներին, ծեսերին, նիսակատարություններին և եկեղեցական արարողություններին վերաբերող բառահոդվածների ժողովածու-բառարան է, որը մաս առ մաս լույս է տեսել 1905թ.՝ ,, Ընդարձակ օրացույց ս.Փրկչյան հիվանդանոցի հայոց,, և ,, Տերունի տոների վերաբերյալ գիտելիքներ,, տարեգրքերում՝ թվով 100 բառահոդված: Իսկ այս բառարանի 1906թ. պրակ-հատորը /էջ 81-204/ ընդգրկում է 209 բառահոդված: 1907թ. պրակը /էջ 313-354/ պարունակում է ընդամենը 20, իսկ 1908 թվականինը՝ 14 բառահոդված:

FERENC A. 1000 SZOBOL ALLO MAGYAR-ORMENY SZOTOR :- էժեբենվարոշ/ Հունգարիա/: 1922.- 59 էջ:

Հունգարերեն-հայերեն համառոտ, ուսումնա-գիտական բնույթի բառարան է, որը պարունակում է առավելապես խոսակցական բնույթի հազար բառ, որը, հեղինակի կարծիքով,կարելի է կարճ ժամանակամիջոցում սովորել և ազատ խոսել հունգարերեն:

ՖՐԱՆԳՅԱՆ ԵՐՎԱՆԴ. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ:- Թիֆլիս: 1913.- 400 էջ:

Գործնական-ուսուցողական բնույթի բառարան է. կազմվել է դարասկզբի հայկական թեմական դպրոցների գերմաներենի դասագրքերի հիման վրա՝ գլխավորապես հայկական դպրոցների աշակերտների պահանջները բավարարելու նպատակով:

Բառարանն ընդգրկում է հանախակի գործածություն ունե-

[400 դր.]

ցոդ 18 հազար քառահոդված: Հեղինակը մեծապես օգտվել է Ա.Կոյլավի, Յա.Պավլովսկու և Գլիզերի քառարաններից, Միտել-շտայնի ու Զեկալայի դասագրքերից և նրանց քառացանկերից:

ՖՐՈՒՆՑՅԱՆ ՏԻՐԱՅՐ.ՀԱՅԱՐ ՈՒ ՄԵԿ ԲԱՌ ՈՒ ԲԱՆ ՀԱՅՈՑ ԽՍՍՀ ԲԱՐԲԱՌԵՆ:- Բեռլին: 1969.- 197 էջ:

Հեղինակը՝ քիմիական գիտությունների դոկտոր Տ.Ֆրունցյանը, 1967-ին վրա հասած անակնկալ մահվան պատճառով տպագրված չտեսավ իր այս արժեքավոր գործը, որը հատկապես աչքի է ընկնում հոմանիշների ու դարձվածների առատությամբ:

Գլխաբառերը տրված են այբբենական կարգով /գլխագրով/, որին հաջորդում են նրա բացատրությունը, փոխաբերական իմաստը՝ առանց գլխաբառը հիշատակելու / վերջինս բաց է թողնվում, իսկ մեկնաբանությունները նշվում են՝ կամ - նշանով/:

ԸՆԴԱՄԵՆԸ 446 ԱՆՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

© Центр научной информации по общественным наукам АН Армянской ССР

Заказ 32 Тираж 200

Подписано к печати 12.XI.1986 Печатный лист 7,2

Отпечатано на ротапринтном участке Центра научной информации по общественным наукам и Фундаментальной библиотеки АН АрмССР. Ереван-1, ул. Абовяна, 15.

ԱԱԱ Հանրային գիտ. գրադ.
նումբ. տվք մումոցքվ ոոոթ
9060026 16

Buchanan
2616